

Լ. Գ. ՏԵՐԵԽԵՂՋԱ. ՑԵՎ Վ. Գ. ԵՐՊԵԼԻ

18419 1956-197302

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ ՄԱՍ

ԴԱՍԱԳԻՐՔ ՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՅՑ
ԶՈՐԲՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՊՐԻԿ ՉԱՐ ՅՈՒՆ

1936

91(72)(075) | 921

S-39 Stptmndy L. G. h.
Lgumpnugpm gmn. mth.
2-pn. sun. 1n. 40h

Համբեկ Արքային
Լ. Գ. Տերենով. ՅԵՎ. Վ. Գ. ԵՐԴԵԼԻ

91 (075)

Ապրիլի 1 1961 թ.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈԴ ՄԱՍ

ԴԱՍԱԴԻՐՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ԶՈՐՈՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Ընօղ հետարակություն


Հաստատված և Ա-ՍՅԵՀ Լուսդողիումատի կողմից

Թարգմանեց Հ. ԵԼԻԲԵԿՅԱՆ



ԳԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936




ԽՈՐՀՈՂԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

I. ԽՍՀՄ-Ի ԱՇԽԱՌԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ) գտնվում է արևելյան կիսազնդում, յերկու աշխարհամասերում՝ Յեվրոպայում և Ասիայում :

Գլորուսի և կիսազնդերի քարտեզի վրա զտեք Յեվրոպա և Ասիա աշխարհամասերը : Նայեցեք, ԽՍՀՄ-ն Յեվրոպայի և Ասիայի վոր մասերում և գտնվում :



Նկ. 1. ԽՍՀՄ տարածության վրա ազատ կերպով կարող են տեղափոխվել գլխավոր կապիտալիստական պետությունները

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը յերկրագնդի ամենամեծ պետություններից մեկն է :

ԽՍՀՄ-ն բռնում և ամբողջ բնակչած ցամաքի վեցերորդ մասը : Արեւուտքից դեպի արևելք նա ձգվում և 10 հազար կիլոմետր, իսկ հարավից դեպի հյուսիս՝ $4\frac{1}{2}$ հազար կիլոմետր յերկարությամբ :

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա Միության արեմտյան սահմանի մոտ գտնեք Մինակ քաղաքը, նույն քարտեզի վրա արենցան սահմանի մոտ, Յապօնական ծովի ափին, զտեք Վլազիվոստոկ քաղաքը: Ցույց տվեք այն յԵրկաթուղին, վոր միացնում և այդ մերկու քաղաքներն իրար հնու Արագենթաց զնացքն այդ տարածությունն անցնում և 13 որում:

ԽՍՀՄ-ի Ենվրոպական և Ասիական մասերն իրարեց բաժանվում են Ռեպուլյան լեռներով, Ռէրալ գետով, Կասպից ծովով և Կովկասյան լեռներով:

Քարտեզի վրա զտեք ԽՍՀՄ-ի Ենվրոպական և Ասիական մասերի միջև յեղած սահմանը:

ԽՍՀՄ-ի ԾՈՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ


Նայեցեք քարտեզին:

Մեր Միության ամենը զանազան կողմերից վաղողվում են ծովերով: ԽՍՀՄ-ն այդ ծովերից վրայով առետուր և անում ուժի յերկրների հետ:

Հյուսիսային կողմից Միության ամենը հաղարամոր կիլոմետր տարածության վրա վորովում և Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը: Ինչպես զիտեք, այդ ովկիանոսը ցուրտ գոտում և զանվում: Նրա մի զգալի մասը ծածկված և սառույցներով վոչ միայն ձմեռ, այլև ամառը: Սառույցները խանդարում են նաև վագնացությունը Սառույցյալ ովկիանոսում:

Միայն արեմտյան մասում՝ կոլա թերակղղու և նար Յերկիր կղիների միջև Սառույցյալ ովկիանոսի մի մասն աղաս և սառույցներից: Դա Բարենցի ծովն է: Առլանտյան ովկիանոսից անցնում և այսուղ Դոլֆշտրոմ տաք հոսանքը: Աա տաքացնում և Բարենցի ծովը, և ամառ սառույցները քաշվում են հեռու դեպի հյուսիս:

Բարենցի ծովը Կոլա թերակղղու ամերիկ մոտ չի սառչում նաև ձմեռը:



Նկ. 2. Բարենցի ծով


Բարենցի ծովից գեղպի հարավ ցամաքի մեջ և մտնում Սպիտակ ծովը : Այստեղից անցնում և ծովային կարճ ձանապարհը գեղպի Արևմտյան Յեզրոպայի յերկրները՝ Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա : Շատ չոգենավեր մտնում են Ֆիննական ծոցը . Նրանք բերում են արտասահմանյան աղբանքներ և տանում են մեր առյանքները :

Միության Յեզրոպական մասի հարավային կողմը գտնվում է Սև ծովը : Սա տաք, չսառչող ծով և, դրանով մեր հարավային նավահանդիսաները կապվում են արտասահմանի հետ :

Հյուսիսից Սև ծովի մեջ և մտնում Դրիմի քերակղզին, վորը Սև ծովը բաժանում և վոչ այնքան խոր Ազավի ծովից :

Միության արևելյան ծովային սահմանը կազմում են Մեծ կամ Խաղաղ օվկիանոսի ծովերը՝ Բերինգյան, Ոխոտյան և Ճապոնական : Բերինգյան և Ոխոտյան ծովերն իրարից բաժանվում են Կամչատկա թերակղզով : Սառույցները դժվարացնում են նավագանցությունն այդ ծովերում : Ոխոտյան և Ճապոնական ծովերի միջև դանշում և Սախալին կղզին : Սախալինի հյուսիսային կեսը պատկանում և Խորհրդային Միությանը, իսկ հար-

վայլին կեսը՝ ձապոնիային։ Այդ ծովերից ամենակարևորը ձապոնական ծովն է։ Նրա միջոցով մենք կապվում ենք Մեծ ով-կանոսի հետ։



Նկ. 3. Սև ծով

Վարժություններ. 1. ԽՍՀՄ-ի կոնտուրային քարտեզի վրա ծովային սահմանների վրայով կատույտ գիծ քաշեցեք և ապա իրենց տեղերում զբացեք Միության վերը բերած ծովերը, կղզիները և թերակղզիները։ Հեշեցեք դրանց անունները և դիրքը քարտեզի վրա։

2. Քարտեզի վրա ցույց ավելաց այն ծովային ճանապարհը, վոր միննական ծոցից տանում և Անդիմա։

3. Քարտեզի վրա ցույց ավելաց Սև ծովից Ֆրանսիա, Վլադիվոստոկից ձարունություն տանող ծովային ճանապարհները։

ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ (Սահմանակից պիտությունները)

Լոռին բայցին Միության մերձակոր հարեաններն են արևմուտքամբ։ Ֆինլանդիան, Եստոնիան, Լատվիան, Լիխաստանը,

Ռումինիան. Հարապլում՝ Թյուրքիան, Իրանը (առաջ Պարսկաստան և կոչվում), Ավղանստանը, Զինաստանը, Տուվինյան ժողովրդական հանրապետությունը, Մոնղոլիան և Ճապոնիայի գերիշխանության տակ գտնվող Մանջուրիան և Կորեան, Սախալին կղզու վրա՝ Ճապոնիան:

Գտեք այդ պետությունները քարտեղի վրա:

ԽՍՀՄ-ն միակ պետությունն է ամբողջ աշխարհում, վորտեղ իշխանությունը պատկանում է բանվոր դաստիարակին և աշխատավոր գյուղացիությանը:

Խորհրդային Միության բանվորա-գյուղացիական իշխանությունը միակ իշխանությունն է ամբողջ յերկրադնդի վրա, վորս կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պայքարում և յերկրագնդի բոլոր ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելու համար:

Խորհրդային Միության ժողովուրդները պատերազմ չեն ցանկանում, բայց նրանք ամեն մի լուսե պատրաստ են պաշտպանելու իրենց սոցիալիստական պետությունը: Կարմիր բանակն արթուն պահպանում է Միության սահմանները:

Վարժություն. Միության կոնտուրային քարտեղի վրա ցամաքային սահմանների վրայավ կարմիր զիծ քաշեցեք և ապա գրեցեք սահմանակից պետությունների անունները:

ԽՍՀՄ-ի ՄԱԿԵՐԵՎՈՒՅՑԹԸ

Դիտեցեք ԽՍՀՄ-ի Փեղիկարկան քարտեղը:

Քարտեղի մեծ մասը ներկված է կանաչ գույնով: Դա ցույց է տալիս, վոր ԽՍՀՄ-ի մեջ ցածրադիր հարթություններ չափությամբ լին:

Քարտեղի վրա նշանակված են յերեք մեծ գաշտավայր՝ Արևելյան-Յելլովական, Արևմտյան-Սիրիական և Թուրքանի:

Քարտեղի կանաչ գույնի մեջ տեղ-տեղ յերեսում են բաց զեղնալուն բծեր: Դրանք բարձրություններն են. ԽՍՀՄ-ի Յեկանական մասում գտնվում են Միջին-ուսական և Մերձվլոյան բարձրությունները, Ասիական մասում՝ Արևելյան-Սիրիական բարձրությունը:



Նկ. 4. Հարքություն


ԽՍՀՄ-ի համարյա սամբռդջ հարավային և արևելյան սահմանի յերկարությամբ, ինչպես և ԽՍՀՄ-ի Ասիական և Յեվրոպական մասերի միջև պարզ յերեսում են գարշնաղուցյն շերտեր—դրանք լեռները են: ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում դանդում են Դրիմի լեռները, ԽՍՀՄ-ի Յեվրոպական և Ասիական մասերի միջև ձգվում են Ռիբալյան և Կովկասյան լեռները: Ավզանատանի և Զինաստանի սահմանամերձ շրջաններում բարձրանաւմ են Պամիր լեռնաշխարհը և Տյան-Շան լեռները, Զինաստանի և Մոնղոլիայի սահմանամերձ շրջանում—Ալտայան լեռները:

Վարքություններ. 1. ԽՍՀՄ-ի Փիդիկական քարտեզի վրա ցույց տվեց և ՀՀ Ենթական վերը բերած գուշտավայրերը, բարձրությունները և լեռները:

2. ԽՍՀՄ-ի Փիդիկական քարտեզի վրա դիտեցնեք Համեմատությունը՝ դաշտաները և տակած գույքը այդ դաշտավայրերը քարտեզի վրա:

ԽՍՀՄ-ի Գլխավոր գետերն ու լճերը.

ԽՍՀՄ-ում մեծ գետեր շատ կան: Նրանցից մի մասը սկիզբն է ասնաւմ բարձրություններից, մի մասն էլ բարձր լեռներից և



Նկ. 5. Բայկալ լին

Քարտեզից յերևում եւ, վոր Խորհրդային Միության գետերը Հսոսում են գանաղան ուղղությամբ, գեղի նրա ափերը վողողով բռլոր ծովերը:

Հյուսիսային Ստորոցյալ ովկիանոսն են թափվում Հետեւյալ մեծ գետերը՝ Հյուսիսային Գվինա, Պեչորա, Որ, Յենիսեյ և Աենա:

Ախտայան ծովն և թափվում ջրառատ Ամուրը:

Գնեսը թափվում է Սև ծովի մեջ. այս գետի վրա կառուցված և Դնեպրյան հլեկարակայանը:

Դնեպրից գեղի արևելք Արտօվի ծովն և թափվում Գոն գետը: Նա ամառն այնքան և բարակում, վոր առաջ են զալիս ծանծաղուաններ: Մանծաղուանները խանգարում են նավագնացությունը:

Կասպից ծովն և թափվում Վալգան, վորը Միության Յեկաբպական մասի ամենամեծ նավագնաց գետն եւ: Նրա մեջ շատ

Վատակներ ևն թափվում : Այդ վատակներից ամենամեծներն են Ոկան և Կաման :

Ուրալյան լեռներից սկիզբ է առնում և թափվում Կասպից ծովը յերկար, բայց սակավաջուր Ուրալ գետը :

Ֆիննական ծոցն և թափվում կարճ, բայց լայն ու ջրառատ Նեսան :

Քարտեղի վրա դաեք այդ բոլոր գետերը : Յուրաքանչյամ լճերից իրենց մեծությամբ աչքի յեն ընկնդում՝ խոր Բայկալն Արեւիլյան-Սիրիբական բարձրության վրա, Լադոգա և Ոնեցա լճերը Միության Յեղբողական մասի հյուսիս-արևմուտքում :

Աղի լճերից ամենախոշորներն են՝ Կասպից և Արալյան լճերը, վորոնց սովորաբար ծով են ասում :

Քարտեղի վրա դաեք հիշած լճերը :

Վարժուքյուն. Կոնտուրային քարտեղի վրա իրենց տեղերում գրեցիք վերը բերած գետերի և լճերի անունները :

Հիշեցիք նրանց անունները և քարտեղի վրա ունեցած դիրքը :

Կապույտ մատիտով գիծ քաշեցիք գետերի ամբողջ հոսանքի ուղղությամբ, ակսած ակունքից մինչև գետաբերանը :

Գետաբերանի մոտ գրեցիք յուրաքանչյուր դետի անունը : Կապույտ մատիտով ներկեցիք կամ բարակ զծերով ծածկեցիք վերը հիշած լճերի բռնած տեղը :

Ի՞՞նչ է ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ ՅԵԿ Ի՞՞ՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԱՅՆ

Ուրվագծային քարտեղն այնպիսի քարտեղ է, վորի վրա գծադրած են աշխարհամասերը, կամ առանձին յերկներ, ծովեր, գետեր, սակայն նրանց անունները չեն նշված :

Աշխարհագրական քարտեղը լավ ուսումնասիրելու համար անհրաժեշտ ե աշխատել ուրվագծային քարտեղի վրա—նրա վրա դանաղան նշումներ անել ու անունները գրել :

Յուրաքանչյուր վոր հետությամբ կարող և ուրվագծային քարտեղ պատրաստել : Դրա համար պետք է վերցնել աշխարհագրական քարտեղը, կպցնել պատուհանի առաջաւան :

վրայից ողետք և ծածկել մի թերթ մաքուր թղթով։ Յեթե ապա-
կին լավ լուսավորված լինի, քարտեզը թղթի միջով կերեա:
Մնում և միայն մատիտով թղթի վրա դժկել յերկացող քարտեզի
ուրվագիծը։

Քարտեզը կարելի յե արտանկարել նաև բարակ կամ ոլոտ-
ձենահան թղթի ողնությամբ։

I. ԽՍՀՄ-Ի ԲՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԽՍՀՄ-Ն Հյուսիսից դեպի Հարավ ձգվել է $4\frac{1}{2}$ հազար կիլո-
մետր տարածության վրա։

Միության հյուսիսային մասը գտնվում է բևեռային շրջա-
նից դեպի հյուսիս, նրա ափերը վողողում եւ Հյուսիսային Սա-
ռուցյալ ովկիսանոսը և այդ պատճառով եւ նրա կլիման ցուրտ է։

Միության մեծ մասը գտնվում է բարեխառն գոտում։ Քանի
վոր ԽՍՀՄ-Ն Հյուսիսից դեպի Հարավ մեծ տարածություն ե
րունում, այդ պատճառով եւ նրա բնությունը շատ բազմազան է։


Ցուրտ գոտու ձմեռային սոսկալի սառնամանիքները դեպի
Հարավ (աստիճանաբար) թուլանում են. կլիման ցրտից գատնում
ե բարեխառն ցուրտ, ապա բարեխառն, իսկ Հարավում նույնիսկ
բարեխառն տաք է։ Այդպիս հյուսիսից դեպի Հարավ փոխվում
ե վոչ միայն կլիման. կլիմայի հետ փոխվում ե նաև բուսական
և կենդանական աշխարհը։

Ամբողջ Միությունն իր բնությամբ բաժանվում է մի քանի
շրջանների, կամ զոնաների։

1. ԲԵՎԵՌԱՅԻՆ ԶՈՆԱ

Դիտեցեք զլորուաը և կիսադնդերի քարտեզը. զուք տեսնում
էք, վոր Յեվրոպայի, Ասիայի և Ամերիկայի հյուսիսային ափե-
րի յերկարությամբ (հյուսիսային բևեռի շուրջը) Հաղարավոր
կիլոմետր տարածությամբ ձգվում եւ Հյուսիսային Սառուցյալ
ովկիսանոսը։

Յեվրոպայի և Ասիայի Համարյա ամբողջ հյուսիսային ավե-



Նկ. 6. Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում

ըստ Ասրհբղային Միությանն են պատկանաւմ : Նրան են պատկանաւմ նաև այն բալոր կզղիները, գորսնք դանվում են Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի Միության կից մասում :

Դա ԽՍՀՄ-ի ամենաշխատային մասն է, Միության քենային զոնան է :

Դաժան և բեկուային զոնայի բնությունը : Զմեռը մի քանի ամիս չարունակ արեն այս աշխարհաւմ բոլորովին չի ծաղում, իշխում է բեկուային զիշերը : Կորա թերակղզու հյուսիսային ավերաւմ այդ բեկուային զիշերը տեսում է 2 ամիս, նոր Յերկիր կղզաւմ՝ 4 ամիս, իսկ հյուսիսային բեկուում՝ կես տարի :

Ամառը, ընդհակառակը, արեը բոլորովին մայթ չի մտնում — բեկուային ցերեկ և լինում :

Բայց արեը կեսորին չատ չի բարձրանում և այդ պատճառով թույլ և տաքացնում :

ՀՅՈՒՄԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՑԱԼ ՈՎԿԻԱՆԱՍՀ

Զմեռը: Դեսի ամեն կողմ տարածվում և սառցե անսահման անտպատը: Հսկայական սառցաղաշուերը պատել են ովկիանոսը: Նրանք շարժվում են իրար ճնշելով: Ճայթյունով ու զբղղոցով չարդվում են սառույցները և կուտակվելով սառցակույտեր՝ սառրսներ» առաջ բերում:

Սոսկալի սառնամանիքներ են. ճյունափառն վոթորիկը, բուք ու բորանը կտտողի յեն:

Արդեն մի ամբողջ ամիս և, վոր ամեն ինչ պատաժ և բեկուային գիշերալա խավարով: Կյանքը կանգ և առել: Բոլոր կենդանի եյակները թաղնովել են: Սաոցէ անապատով յերբեմն միայն անցնում և սովիտակ արջը:

Յերբեմն յերկինքը պարզվում և և այդ ժամանակ սառցե անսապատը լուսավորվում և ասուղերի վայլով և լուսնի լույսով: Յերբեմն ել յերկնակամարի վրա շողչողում և հյուսիսափայլը:

Ամառը: Արել մի քանի ամիս շարունակ լուսավորում և և բոլորովին մայր չի մտնում: Ավկիանոսի մտկերեսութի վրա սառույցն սկսում և հալվել: Սառցաղաշուերը կոտրատվում, ջարդվում են: Նրանք հալվում են շատ դանդաղ, և ամբողջ ամառվա ընթացքում լողում են ովկիանոսում:

Սառույցների վրա տաքանում են փոկերը: Յերեսում են իւլմ-բերով անհաշիվ տառեիներ, ձողաձկներ ու այլ ձկներ:

Նոր Յերկիր կղղիների ժայռոտ տփերի մոտ յերեսում են ծովացուլերի մեծ հոտեր: Խոկ Ասիտայի տփերի մոտ՝ կետեր:


Առաջադրույյուն. 1. Կիսազնդերի քարտեզի վրա զտեք Հյուսիսային Սառույցալ ովկիանոսի այն մասը, վոր պատկանում և նորհրզային Արությանը: 2. Գտեք հետեւյալ ծովերը՝ Բարենցի, Սովիտակ և Կորսյի:

ԲԵՎԵՇԱՅՑԻՆ ԿՂՋԻՆԵՐ

Հյուսիսային Սառույցյալ ովկիանոսի սառցապատ մտկերեվույթից բարձրանում են բազմաթիվ մեծ ու փոքր կղղիներ:

Բեկուային կղղիներում տարվա մեծ մասը ձմեռ և լինում և կղղիներն ովկիանոսի հետ միասին պատաժ են սառույցներով ու ծածկված են ձյունով:

Բնությունն այսուեղ կենդանանում և միայն 2—3 ամսվա
ընթացքում: Զյունը և սառույցները հալվում են: Քարաժայուե-
րը մէրկանում են: Տեղտեղ յերեսում և աղքատ բուսականու-
թյուն՝ գույնզգույն քսուր, մամուռների կանաչ բարձեր (խէ
մամուռի մէջ փոքրիկ ծաղիկներ), բևեռային կակաչներ, ան-
ձոռուկներ, զանգակիկներ:



Նկ. 7. Թռչնի շուկա

Կղզիների ծավավնյա ժայռերի վրա հավաքվում են բազմա-
թիվ թռչուններ: Այստեղ բուն շինուու և ձագեր հանելու հա-
մար հարավից չվում են այդերուկները, սուզահավերը, վորոր-
ները: Յերբեմն սրանց բների շարքը տարածվում և մի քանի կի-
լոմետր: Թռչունների յերաժներն ամպերի պէս անցնում են ժայ-
ռերի վրայով: Թռչունների աղմուկը լցնում և ողը: Զուր չե,
վոր այդ տեղերն անվանում են քռչնի շուկա:

Բայց ամառն այդ բեկուային կղզիների վրա կարճատե ե:
Դեռ ձյունն ու սառույցը բոլորովին չհալված, նորից գալիս են
ցրտերը: Թռչունները թռչում են դեպի հարավ և ձմեռը կրկին
վերադառնում են:

Դաժան և բեկուային կղզիների բնությունը:

Մարդիկ միայն վերջերս են սկսել բնակչություն հաստա-
տել նրանց վրա:

ՆՈՐ ՅԵՐԿՐՈՒՄ

Առաջին բնակիչները: Վաթուուն տարի առաջ նոր Յերկրը
կղզիների ափին մոտեցավ մի նավ, վորի վրա զտնվում ելին
նևնեց արդյունաբերողներ—ֆոմա Վիլկան իր ընտանիքով և ըն-
կերներով:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք նոր Յերկրը կղզիները:

Նրանք ափ իջան, բարձրացան ժայռերը:

Վիլկան նայեց իր շուրջը: Սև ժայռոտ լեռներ, տեղ-տեղ
ծածկված ձյունով, մեկ ել ծերպերում մամուռ... Վո՛չ մի
շունչ... Վո՛չ մի ձայն: Մարսափը պատեց նրանց:

Մտածում ելին վերադառնալ տուն, բայց յերբ ծովափին
մի կիսափարխուլ խրճիթ գտան, վորոշեցին մնալ: Տեղը նրանց
արդյունաբերության համար բավական հարմար եր՝ հեռու տե-
ղերից գալիս ելին այստեղ փոկերի մեծ հոտեր. լեռներում թա-
փառում ելին յեղջերուներ:

Վորսորգները շատ գաղանեցին և սկսեցին հայրե-
նիք վերադառնալու պատրաստություն տեսնել: Բայց Վիլկան
չցանկացավ տուն վերադառնալ. նա իր կնոջ, յերեխաների և մի
ընկերոջ հետ մնաց այս կղզում: Խրճիթ շնուցին: Մթերքների և
վառողի բավականաչափ պաշար ունելին:

Յեկավ ձմեռը: Ծովը ծածկվեց սառույցով: Արեւ թագնվեց,
քամիներն աղմկեցին: Սուլաց փոթորիկը: Ամեն ինչ ծածկվեց
ձյունով: Մանր եր ձմեռը: Տնակը համարյա ամբողջապես թաղ-
վել եր խոր ձյունի մեջ. ստիպված ելին լինում ծխնելույղով
դուրս գալ: Արջերը շատ անգամ մոտեցան տնակին ուտելու բան
ճարելու համար: Բայց ամենից ծանրը մթությունն ու ցուրտն
եր: Վիլկայի ընկերն այնպես ել գարնան արև չտեսալ—մեռալ:

A 35054

Բայց ահա զերեւոց պրել : Յեկաղ զարունը : Սատուցյը շարժվեց գեղի ծովը : Սասաւցյների վրա յերեացին փոկիր : Յեկան թռչունները : Հետներից աղմկերով շած հոսկցին հեղեղները : Ակեկան շատ ծովային գաղաններ ու թռչուններ խփեց :

Բայց նա կարոտել եր մարդկանց : Նա նավով պառույտ կատարեց նոր Յերկրի շուրջը, վորպեսպի մի վորեե մարդ զտնի : Սակայն վոչ վոքի չհանդիպեց :

Զմեոը յեկաղ ու կրկին անցավ : Հետեւյալ զարնանը նա հանդիպեց արդյունաբերողների, վորոնք տունդըսայից եյին յեկել Վիլկան իր ամբողջ վորաց վաճառեց արդյունաբերողներին և փոփարենը ձեռք բերեց վառող, հրացան և մթերքներ : Արդյունաբերողները վիրապմարձան տուն և պատմեցին, վոր նոր Յերկրում առատ վորս կա և վոր այստեղ ապրում և և վորսորդությամբ ու ձկնորսությամբ և զրաղվում Վիլկան :

Այն ժամանակ տունդըսայից չքավոր նենեցներն սկսեցին նոր Յերկիր փոխադրվել : Այսպես հիմնվեց առաջին բնակավայրը նոր Յերկրում :

Նոր բնակիչներն արտել կաղմեցին և Վիլկային ել ավագ ընտրեցին : Մանր եր նոր Յերկրի առաջին բնակիչների կյանքը : Եպտերը նրանցից մեռան, վորը լնդախտից ու սովից մեռալ, վորը ծովում խեղդվեց, վորը սառուցյների տակն ընկավ, ջարդվեց, կամ սառուցյը նրան բաց ծով տարավ, կորցրեց :

Խմչպես վախվեց կյանքը նոր Յերկրում : Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կյանքը մեծ փոփախության յևնթարկվեց նոր Յերկրում :

Նոր Յերկրում այժմ չորս գյուղ կա : բնակիչների թիվը հասնում է 300-ի : Նենեցները կաղմել են վորսորդական արտելներ : Ծովային գաղաններ խփելու համար նրանք այժմ մոռորային նազակով են ծով դուրս գալիս : Նրանք ձեռք են քերում մեծ քանակությամբ բևեռային աղվեսի, արջի մորթի :

Տարին յերկու անգամ նոր Յերկիր են ուղևորվում ջոզենովեր, վորոնք նենեցների համար փոխադրում են զանազան աղբանակներ, վառող, զենք, փոկ դրանց փոխարեն նենեցներից սուսնում են մորթի, ճարող :



Նկ. 8. Նոր Յերկրում


Կառուցվել և դպրոց, յերկու հիվանդանոց, յերկու ուաղիս-կայան, կաղմակերպված և հետազոտական կայան, արդտեղ կայանում ուսումնասիրում են Նոր Յերկրի բնությունը:

Նոր Յերկրում կա Աորհուրդ, վորը կարդավլործում և Նոր Յերկրի բնակիչների կյանքը: Աորհուրդի նախագահը՝ Վելկայի աղջից և :

ԲԵՎԵՌԱՑԻ ՎՈՐՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Շատ ծովային գաղաններ, ձիներ ու թուչուններ կան ԽՍՀ Միության բներային գոտում:

Այս հարստություններն ոգտագործելու համար խորհրդային կառավարությունն այստեղ կաղմակերպում և բներային վորսարդյունաբերական տնտեսություն: Կաղմվում են ձկնորսական և վորսորդական կոլեկտիվ տնտեսություններ, հիմնվում են ձըկ-նորսական բազաներ:



Նկ. 9. Փոկերի վորս

Ցուրաքանչյուր բաղա տասնյակներով վորսորդական ու ձըկ-նորսական նավեր ունիւ:

Վորսորդներին և ձկնորսներին ողնում են սառցահատ նա-վերը, սալառնակները և ուղիոն:

ՓՈԿԵՐԻ ՎՈՐՍԸ ՍԱՄԹԱՀԱՏՈՎ

Գարնանային արեի տաք ճառագայթների տակ թափանցիկ, կապտավում սառույցների վրա տաքանում են փոկերը: Նրանք հաղարներ են: Տաքանալով նրանք ժամերով նիրհում են, յեր-բան միայն կողքից-կողք դառնում:

Զի քնում միայն ծեր, փորձված փոկը—դահակը:

Յերկնքում յերեաց մի սալառնակ: Դա հետախույզն է բարձրացել սառցահատից և փոկերի հոտ և փնտռում: Ողաչուն տեսավ փոկերի հանդատի տեղը և ուղիոյով հաղորդեց սառցա-հատին:

Շուտով հեռվում յերեում և սառցահատը: Վորսպեսդի փոկե-րը չվախենան ու փախչեն, նա կանգ և առնում փոկերից բալա-կան հեռու: Վորսորդները հաղնում են սպիտակ խալաթներ և իջ-

նում սառուցի վրա : Նրանք հրացանները ձեռքներին կամաց մտենում են փոկերին : Ամենալավ հրացանաձիդը զնում և առջելոց : Անշեղ հարվածով սպանում և պահապան փոկին :

Սկսվում ե արագ կրակոց և կարճ ժամանակամիջոցում սովանակում են հարյուրից ավելի փոկեր : Հրացանաձիդներն առաջ են դնում :

Հրացանաձիդներին հետևում են քերթողները : Նրանք ունեն մեծ, սուր դանակներ : Նրանք սպանված փոկերից հանում են կոչին և ճարպը :

Դալիս ե սառցահատը, բարձում և վորոք և շարժվում դեպի փոկերի նոր հանդստավայրը . ողաչում այդ մասին արդին ոսուիոյով իմաց և տվել :

ԶԿՆՈՐՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կոլա թերակղու հյուսիսային ափին, այստեղ—այնտեղ ցըր-ված են ձկնորսական կայաններ, ձկնորսական բաղաներ :

ԽՍՀՄ-է քարտեզի վրա դանք Կոլա թերակղուն :

Հաճախ դալիս են այստեղ առաջատարին և մոտորային նավեր և ծովածոցում խարիսխ ձում : Վոմանք ձուկ են բերում, խկ վոմանք, վերցնելով ողաշար, սուրք և խայծեր, զնում են վորոխ :

Եերը ձկան վորսն սկսվում ե, նավերն անընդհատ ձուկ են կրում : Զուկը նավահանգստում դատարկում են, դարսում տակառների մեջ, վրան աղ ցանում և շոգենալերով փոխադրում պահեստները :

Զողաճուկը սովորաբար ծովափերին մոտենում ե խիտ շերտով, վոր ունենում ե մի քանի կիլոմետր յերկարություն և լայնություն : Նույնպիսի խիտ և մեծ շերտով ե շարժվում նաև տառեխուրը : Սա կանգ ե առենում ափերի մոտ և մտնում ե խաղաղ ծովախորշերը : Հենց այստեղ ել նրան ուռկաններով փակում են և վորսում մեծ շերեփներով, պարկերով և դույլերով :

Զուկն աղ են դնում, չորացնում, ծուխ տալիս :

Մեծ քանակությամբ ձուկ վորսում են մանավանդ տրաս-



Նկ. 10. Զկան վօրս տրաուլերով

լերթերով։ Խորհրդային նոր արաուլերը մէ ամբողջ լողացող զործարան է։

Նա վոչ միայն ձողաձուկ և վորսում, այլև այդ ձուկը մշտակության և յենթարկում և գարճնում պատրաստի մթերք։

Հենց վոր արաուլերը ծով և դուրս գալիս, նրա վըս զտնը վոզ ուազիուխայանն սկսում և իր աշխատանքը։ Ռազմիստը կասրվում և այն բոլոր տրաուլերների հետ, վորոնք այդ ժամանակ դանդում են ծովում։ և, ձկան շարժման մասին ստացած տեղեկությունների հիման վրա, նավապետը նշում է վորսի տեղը։

Տրաուլերն ուղերզվում և գեղի նշած կետը։ Տրալը (հատուկ ցանց) իջեցնում են ծով։ Նավը շարժվում է, և սկսվում է վորսը։

Մի ժամկից հետո արալը հանում են, ճախարակի միջացով բարձրացնում և ձուկը մասսայորեն «հռում» ե» տախտակամածի վրա։ Տրալը ժամը մեկ բարձրանում և և ամեն անզամ իր հետքերում մոտ հաղար կիլոդրամ ձուկ։

Սկսվում է ձկան ժշտելումը։ Զինորանավառիները կազմակերպում են կենդանի կոնվեյեր։ Մեկը մեծ պատառքազ բռնում է ճողաճումկը և զնում յերկաթն թիթեղով պատած մաքուր սեղանի վրա։ Յերկրորդ նավառին կացնի ճորողիկ հարվածով կտրում է ձկան գլուխը։ և զվարաւած ձուկն սկսում է սողալ սեղանի հարթ, փայլուն մակերեռութով։ այսող ճորողիկ ձեռքերը բռնում են ձուկը, սուր գանակով փորը ձեղքում, ևն և փորութիքը հանում։

Ձուկը ձեռքից ձեռք և անցնում։ Հանում են նրա մաչկը, սուր գանակով նրան յերկարությամբ յերկու մասի յեն բաժանում և հանում վողնաշարը։ Զկան փափուկ մասերն աղ են զնում և տրյում տեղափոխում։

Հենց այստեղ ել, արաւուկերի վրա վոսկորներից վոսկրային ալյուր են պատրաստում, իսկ ճողաճկան լյարդից ձկան յուղ են հանում, վորը գործ և ածվում վորպես բժշկական միջոց և սննդարար նյութ։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՈՎԱԹԻՆ ՃԱՆԱԳԱՐՀՅ

Մեր Միության հեռավոր հյուսիսում բնական շատ հարըստություններ կան։ Լայն շերտով հաղարավոր կիլոմետր տարածության վրա ճգվում են զարավոր անտառներ, այդ անտառներում շատ թանգարժեք մուշտակավոր գաղաններ կան։ Զանազան տեղերում գտնվել են ածուկն, նավթ, զրաֆիտ և ուրիշ շատ ուստակար հանածոններ։

Բայց ի՞նչ ճանապարհով գուրք բերել այդ հարստությունները՝տայգայի և տունդրայի ընդարձակ դժվարանցանելի տարածությունների վրայով։

Նայեցեք Խորհրդային Միության քարտեզին։ Ընդարձակ ջրառատ գետերը շատ տեղերում կտրում են Միության ամրող հյուսիսային մասը և իրենց ջրերը տանում գեպի Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս։ Այդ ովկիանոսով ամառը կարելի յե գնալ Միության հյուսիսային ծովափի վորուե կետը, ինչպես և ուրիշ յերկներ։

Բայց Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում նավլով ճանապարհորդելը շատ վտանգավոր է։ Սառուցներից շատ նավեր են


Խորտակվել այդ ովկիանոսում։ Խորհրդային կառավարությունը
վորոշել և հետազոտել Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը և
բացել անվտանգ ծովային ճանապարհ Միության ամբողջ հյու-
սիսային ափի յերկարությամբ։

Այս նախատակով ամեն տարի ուղարկվում են հզոր սառցահատներից և սալառնակներից բաղկացած գիտարշավներ. նրանք բառում նաև հրուում են բնեուային ծովերը:

Կղզիների վրա շինված են մի շարք բևեռային կայաններ,
վորոնք շարունակ գիտում են յեղանակը և բևեռային սառուց-
ների շարժումը։ Նրանք իրենց դիտողությունները ուագիտյով
հաղորդում են այն բոլոր նավերին, վորոնք լողում են բևեռային
ծովերում։

Վերջին տարիներում խորհրդային սառցահամերը կարայի ծովալ ոտար չատ նավեր են անցկացնում:

Վերջին խորհրդային գիտաբակները մի ամառվա ընթացքում կարողացան անցնել Հյուսիսային Սառուցյալ ովկիսանոսը մեր Միության հյուսիսային ափերի մոտ :



Նկ. 11. Հյուսիսային ծովային նամապարհով Փատարված
եխաղեղիցիաների քարտեզը

Քարտեզի վրա ցույց տվեք Սէրեբրակով, Զելյուսակին, Լիտկեյի դիմարշագունքը ճանապարհու:

Բայց բենուային ծովերը դեռ լավ ուսումնասիրված չեն և նավելը շատ տեղերում դեռևս շատ վտանգավոր են: Այդ պատճառով եկ Հյուսիսային բենուային ծովերի հետազոտությունը դեռ շարունակվում է: Կազմակերպվում են նոր գիտարշաներ: Զանալան տեղերում կառուցվում են բենուային նոր կայաններ:

Դաժան և կյանքը բենուային կայաններում: Մանր են նաև վելու սրայմանները բենուային ծովի սառուցների մեջ. մեծ հաստատակամություն, տոկունություն և խիզախություն ունեն այն հարյուրավոր խորհրդային աշխատավորները՝ ծովագնացներն ու գիտնականները, վորոնք կովի յեն բոնվել Սառուցյալ ովկիանոսի դաժան բնության հետ Հյուսիսային մեծ ճանապարհի համար, մեր բենուային դոնայի յուրացման համար:

Աշխատանք արտադայան ժամանակ. Լրտղների միջոցով հետեւցեք թե ինչ ճանապարհներով են անցնում այս տարվա դիտարշամները: Քարտեզի վրա փոքրիկ գրոշակներով նշանակեցեք այդ նավերի անցած ճանապարհը:

«ԶԵԼՑՈՒՍԿԻՆԻ» ՅԵՐԹԵԼ

Այս հոգվածը կարդալիս պնտք և շարունակ հետեւել քրոտեղին:

1933 թ. ոգոստոսին Մուրմանսկից դուրս յեկավ «Զելցուսկին» բենուային մեծ շոգենավը: «Զելցուսկինը» տանում եր գիտարշավ Հյուսիսային Մովային ճանապարհն ուսումնասիրելու համար:

Գիտարշավի պետն եր հայտնի գիտնական և բենուային հետազոտող Ռ. Յու. Շմիդար: Շոգենավը վարում եր փորձված բենուային կազիտան Վորոնինը:

Առաջին սառուցյալերը: Առաջին յերկու որը «Զելցուսկինը» գնում եր Բարենցի ծովով:

Խաղաղ եր: Տաք: Մեկ-մեկ պատահում եյին ձինորսական խոշոր նավեր: Յերեմն, ճեղքելով ջուրը, ծովի մակերեւութիւնը յերեռում ե կետի մեջքը:

Յերրորդ որը շոգենավը մատենում ե Նոր Յերկը ձյունապատճառությունը ավերին և կղղիների միջև գտնվող նեղուցով դուրս գալիս Կարայի ծովը:

Կարայի ծովում շոգենավը հանդիսում և հոկայական սա-

ռույցների : Շուտով «Զելյուսկինն» ընկնում է անընդհատ, միապաղաղ սառույցների մեջ : Սառույցները հսկայական ուժով դարձվում են չողենավիր կողերին : Կատիաան Վորոնինը շարունակ փոխելով նաև ուղղությունը, աշխատում է թուլացնել հարվածները : Բայց դա քիչ է ողնում : Մեծ սառյուցների հետ ունեցած հենց առաջին ընդհարման ժամանակ «Զելյուսկինը» ճեղքվածք ստացավ : Գետք եր խորոգել նաև :

Վերջապես սառույցները դառնում են անանցանելի : «Զելյուսկինն» ստիրլած ե կանոց առնել : Ռադիոյով ոզնության են կանչում «կրասին» սառցահատը, վորը հանում ե նրան ծանր սառույցների միջով : Շոգենավը շարունակում է իր ձանապարհը : Նրա վրա վոչ մի բողք չի ընդհատվում կազմակերպված աշխատանքույին կյանքը : Կապիտանն իր կամրջակից աշալուրջ հետեւմ ե ծովին : Գիշեր-ցերեկ լսվում է շտուրմանի հրամանը : Գիշեր-ցերեկ կանգնած են մեքենավարները շոգենավի կաթառների մոտ : Յուրաքանչյուր չորս ժամը մեկ փոխում ե նախառախների պահնողությունը : Գիտական աշխատավորներն անընդհատ զբաղված են հետազոտությամբ :

Շոգենավը դանդաղաբեն առաջ է զնում Կարայի ծովավ : Սառույցներից նա ընկնում է մութ մառախոսազների մեջ : Մառախոսազներից հաղիկ ազատութելով նա կը կին շրջապատվում է սառույցներով :

Վերջապես, 17-րդ որը շոգենավը մոտենում է Զելյուսկին Հրանգանին : Ենիկ ի՞նչ ուրախություն : Այսուեզ նա հանդիպում է Խորհրդային Միության բեեռային հինգ լավ նավերի :

«Զելյուսկինը» Զուկույան ծովի սացե գերության մեջ : Զելյուսկին հրվանգանից հետո շոգենավն ամրող 10 որ դնում է գեպի թերթնդյան նեղուցը, չհանդիպելով վորեկ արդելքի :

Արդեն հեռու չե Վրանգելի կողին, իսկ նրանից հետո մնում ե վերջին Զուկույան ծովը : Բայց սա ճանապարհի առենաղըժվար ժամն է : «Զելյուսկինը» կրկին ծանր սառույցների մեջ է ընկնում :

Մատենում է ձեռուք : Սառույցներն սկսում են իրար հետ միահակ, առաջել : Շոգենավի ավելի ու ավելի գանղաղ ե առաջ շարժվում : Յերրեմ սառույցներն այսպիսի մեծ ուժով են ճշ-

շում շողենավը, վոր նա շարժվում և նրանց ճնշման ուժով։ Ահա, վերջապես, մերինդյան նեղուցը։ Բայց հանկարծ, բոլորովին անսպառելի կերպով, սառույցները ճնշում են շողենավը դեպի հետ և նրան կրկին Զուկոտյան ծովը տանում։

Գովիս և ձմեռը և սառույցները շղթայում են ծովը։ Շողենավը սառած մնում է Հակայական սառցադաշտի մեջ... Ատիզված են ձմեռել սառույցների մեջ։ Շոգեկաթուայի կրակարանները հանդցնում են, վորպեսդի վառելիքը խնայիի։

Բայց չելյուսկինցիները չեն վհատվում։ Գիտական ալիքատավորներն ավելի մեծ յետանդով շարունակում են իրենց աշխատանքները։ Բոլորն սկսում են ամենայն լրջությամբ սովորել։

«Զելյուսկինի խօրսակալմբ»։ Արդեն յիրկու ամսից ավելի յէ, ինչ «Զելյուսկինը» ձմեռում և Զուկոտյան ծովի սառույցների մեջ։ Հակայական սառցադաշտի հետ միասին նա թափառում և ծովում։

Մովք ծածկած սառցադաշտերն ուղման են իրար։ Սառույցները դղրդոցով և ճայթյունով կոռարտվում, վշրջում են և իրար վրա կուտադիրում։ Անցնում են դեկտեմբերը, հունվարը։ Ահա արգեն փետրվարի 13-ն եւ։

«Զելյուսկինի» վրա կյանքն ընթանում է ինչպես մէշտ, թե պետ այժմ ավելի հաճախ են լսվում կոտրտվող սառույցների հարվածներ ու ճարճայուններ։ Բայց բոլորն ընտելացել են դրան։ Միայն նովի հրաժանատարական կաղմը Շմիդտի և Վարոնինի դլիմալորությամբ աչալուրջ հետեւում են սառույցներին և իղուր չեն, հետեւում։

Հանկարծ ցերեկվա ժամը 2-ին լսվում են շմեցնող հարված և սառցե վիթխարի պատը շարժվում են դեպի «Զելյուսկինը»։ Սառույցների դարկից նաևլի կողքում մեծ ճեղքվածք են առաջանում։

Հրամայվում են անմիջապես նավը դատարկել, անհրաժեշտ պաշարն իջեցնել սառույցների վրա։ Մի քանի վայրկյանից հետո բոլորն իրենց տեղերուան են և նավը դատարկվում է։ Վոչ մի իրարանցում, վոչ մի աղմուկ։

Սառույցները նորից ճնշում են շողենավը։ Յեկ մեկո մյուսի

Հետեւից տրաքվում են չըջածածկի յերկաթե թերթերը։ Շողենավի ձախ կողքը պատռված է։ Ձուրն սկսում ե նավի մեջ հոսել։ «Չելյուսկինը» սուզվում է։ Բայց վոչ ճիչ, վոչ հուսահատություն։ Աշխատանքը շարունակվում է։ Շուտով բոլոր անհրաժեշտ պաշարը, գիտական գործիքները և նյութերը սառցի վրա յեն։ Բայց ահա նավի քիթն սկսում ե թեքվել։ Տախտակամածը ծածկվում ե ջրով։ Լսվում ե հրաման՝ «Թողնել նավը»։

Շողենավի քիթն արագորեն ջրի տակ ե անցնում։



Նկ. 12. «Չելյուսկինի» խորտակումը

Ամենից վերջը շողենավը թողնում են գիտարշավի պետ Շմիդտը և կապիտան Վորոնինը։ Մի քանի վայրկյան ևս և «Չելյուսկին» անհետանում ե սառույցների տակ։

Ճամբար սառույցի վրա։ Շողենավը խորտակվեց, և մարդիկ մնացին անոթեան սառցե անապատի մեջ։

Մթություն է։ Փոթորկի։ Սաստիկ սառնամանիք։

Շտապ կանգնեցնում են ռադիոկայմը, վրաններ են դնում։ Աշխատելի սոսկալի ծանր եւ գործիքներ չկան, սառնամանիքից

մատները չեն ծալվում, քամին դլորում և նրանց, փոթորիկը կուրացնում ե աչքերը: Վերջապես ուժասպառ, թրջված, սառած մտնում են վրանները, քնում ծանր քնով:

Առավոտը նրանց ուրախ, հուսադրող լուր և բերում: Ուելինի ռազիոնակայանը (Զուկոտյան թերակղղու վրա) լսում ե չելյուսկինցիներին: Շմիդտը ռազիոյով հաղորդում ե Մոսկվա շոգենավիթի խորտակման. մասին:

Կազմատեն... Պետք ե միայն դիմանալ, մտածում ե ամեն մեկը: Աստիճանաբար կյանքը կարգի յե ընկնում: Ճամբարի վրա ծածանվում ե խորհրդային կարմիր դրոշակը:

Ռազիոյով լուր են ստանում, վոր Մոսկվայից ոգնության են գալիս սավառնակներ, դիրիժարըներ և «Կրասին» սառցահատը: Բոլորի տրամադրությունն ավելի ևս բարձրանում ե: Մկնում են փնտուել և մաքրել հրապարակներ սավառնակների վայրեջի համար:

Բայց այն սառցադաշտը, վորի վրա գտնվում ե ճամբարը, չարունակ չարժիում ե: Այստեղ-այնտեղ յերեան են գալիս մեծ ծեղեր, սաղույցները կուտակվելով իրար վրա հսկայական թըմքեր են առաջ բերում: Մեկը մյուսի հետեւից կոտրատվում են և աերողքոմները: Սպոցակույտը քանդում, և խոհանոցը, իսկ մի ուրիշ անդամ՝ հանրակացարանը: Մի անգամ քիչ մնաց սառցէ տակ անցներ ռազիոնայմը: Ճամբարն ամեն մի բոլե վտանգի մեջ ե: Իսկ ողնություն դեռ չկտ: Խանդարում են բուքը և մառախուզները: Արդեն մոտ մեկ ամիս թափառում ե ծովում լողացող ճամբարը: Բայց չելյուսկինցիները չեն վհատվում: Նրանք բոլցիկական համառությամբ կովում են սառույցների դեմ, շարունակում են հետազոտել ջուկոտյան ծովը: Կոմունիստները և կոմյերիտականներն ամեն տեղ, ամենածանր և պատասխանառու աշխատանքի մեջ կանգնած են առաջին շարքերում:

Աշխատյաժ տրամադրություն պահպանելու համար կաղմակերպում են ընթերցանություն, խաղեր, յերգեցողություն, լույս են ընծայում պատի թերթ՝ «Անձնատուր չենք լինի»:

Վերջապես, մեկ անգամ ճամբարի վրա յերեաց սավառնակը, վորը ճեղքել անցել եր մառախուզի և փոթորկի միջով: Չելյուսկինցիների առաջին խումբն աղատված ե:

Բայց մառախուղն ու փոթորիկը սաստկանում են : Սախո-
ված են դարձյալ սպասել :

Մի ամբողջ ամիս գնու շարունակվում է համար կորիզը սա-
ռուցյների գեմ լողացող ճամբարում :

Ամբողջ Խորհրդային Միությունը լրագրերի ժիշտով, լար-
ված հետևում են, թե ինչ ե կատարվում հետավոր հյուսիս-արև-
վելքում : Բոլորն անհամբեր սպասում ենին պարզ ու խաղաղ ո-
րերի Զուկուրյան ծովում :

Վերջապես, ապրիլի սկզբին դալս են արդարիստ որեր : Սա-
կառնակները մեկը մյուսի հետևից իշխում են սառուցյների վրա
և առնում չելցուակինցիներին : Ապրիլի 13-ին թոշում են վերշին
մարդիկ : Բոլորն ել ազատված են :

Ուրախությամբ ու Հարաբությամբ դիմավորում և չելցու-
կինցիներին ու նրանց աղասող հերոսներին ամբողջ յերկիրը :

«Չելցուակին» շողենավի խորանիվելը չկանգնեցրեց Հյուսի-
սային ծովային ճանապարհի հետազոտությունը : Հինգ ամիս հե-
տո «Լիտկե» սառցահատը Հյուսիսային Սառուցյալ ովկինանոսով
անցավ այդ ծովային ճանապարհը՝ Բերինդյան նեղուցից մինչև
Մուրմանսկ :


Քարտեզի վրա դրաց ավելի ռանցուակինից խորանին անց և Շվեյցարիա
Հանապարհը Վաղինասովից մինչև Մուրմանսկ :

ԲԵՎԵՌԱՑԻՆ ԿԱՅԱՆԱՒՄ

Ծանր են քենոային կայաններում ճմռողների կյանքի պայ-
մանները : Բայց նրանք լավ են հասկանում, թե վորքան մեծ
նշանակություն ունի քենոային ծովերի հետազոտությունը . ա-
րիարար առնում են կյանքի բոլոր դժվարությունները քենոա-
յին սառուցյների մեջ, և քենոային դիշերվա խալարի մեջ բոլոր
աշխատանքները կատարում են հարվածային կարգով :

Ահա թե ուաղիոյով ինչ ե պատմում Ֆրանց Հովսեփի յերկրի
քենոային կայանի կյանքի մասին այդ կայանում ճմռողներից
մեկը :

«Լաեցեք, լսեցեք : Խոսում ե Ֆրանց Հովսեփի Յերկրը : Այս
բոսկեյիս քենոային գիշեր ե : Արդեն յերկու ամիս ե, ինչ ակռամ



Նկ. 13. Թիեզային կայած

և նու: Տունը շրջապատված և հակայական ձյունակույտերով: Զրունը ծածկում և դուներն ու պատռւհանները: Աժեն որ ստիլ-վաճ ևնք մաքրել արդ ձյունը, վորպեսպի նրանք բացվեն: Մեկ-մեկ այնպիսի քամի լե բարձրանում, վոր սառցնող ցուրաը թա-փանցում և տան բոլոր անկյունները:

Ձյունի մեջ բացված աստիճաններով, լասպաները ձեռքներիս բարձրանում: Ենք ձրւնակիւյտի զլուկը, վորպեսպի այնուղիղ իշենք պահեստը վառելիք բներելու համար:

Ինչ յեղանակ ել լինէ, կայանի աշխատանքները կանգ չեն առնում: Դիտողն իր ժամանակին, վորպիկ լասպաները ձեռքին, համարյա աննկատելիք բենույին գիշերվա խռախրի մնչ, ուղե-վորվում և յեղանակի դիտողությանների համար պատրաստած հրապարակը: Մի ուրիշ գիտող նույնապիսի լասպաներով յուրաքան-ըլուց ժամը մեկ անգամ զնում և սառցի վրա հաստատված գոր-ծիքի մոտ, վորով չափվում և ժակընթացությունը և տեղատվու-թյունը:

Յուրաքանչյուր 15 բողեն մեկ դուրս ե. գալիս հերթապահը
դիտելու բնեուափայլը:

Աշխատանքը յեռում ե և տան մեջ: Լարորատորիայի մեջ
լովում ե ժամացույցի և ինքնազիր գործիքի ուրախ չըխկէլու-
կոցը:

Միջանցքում պատրաստում են ճանապարհորդական նավակ-
ներ, ծոռում են սահնակի հիմնածողեր, մշակում են գաղանի մոր-
թիներ: Խոհանոցում կաթսաներով աղմկում ե խոհարարը:

Ընթրիքից հետո ուղիոյով լսում ենք յերեկոյան լրագրի և
Համերգի հաղորդում, խաղում ենք շախմատ, շաշկի, կարդում.
Ենք գրքեր»:

Առաջադրություն: ԽՍՀՄ-ի վարչական քարտեզի վրա դաեք թե վոր կողե-
ների վրա յեն դանվում գլխավոր ուղիոկայաները:

ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԲԵՎԵՌԱՑԻՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՅԵՂԱՆԱԿԻ ՎՐԱ

Գիտական հետազոտություններն ապացուցում են, վոր հյու-
սիսային բնեուային շրջանի յեղանակը մեծ աղղեցություն ունի
մեր յեղանակի վրա: Հյուսիսային բնեուային շրջանը մի հսկա-
յական սառցարան ե, վորտեղից դեպի մեզ փչում են ցուրտ քա-
միներ: Վորքան շատ սառույցներ են կոտակվում Հյուսիսային
Սառուցյալ ովկինառոսում, այնքան ավելի ցուրտ ե լինում մեզ
մոտ:

Բնեուային շրջանում ամեն տեղ նույն կլիման չե: Ինչպես գի-
տենք, սառցապատ ովկինոսի մեջ դանվող ջրի տաք շերաը
կախված ե Գոլֆշտրոմ տաք հոսանքից: Յեթե չլիներ այդ հո-
սանքը, Յելլուպայի հյուսիսը բանված կլիներ սառույցներով,
դաժան սառնամանիքը կպատեր բոլոր կենդանի եյակներին: Տաք
հոսանքի ջերմաստիճանի մեջ տեղի ունեցող ամեն մի փոփոխու-
թյուն անդրադառնում ե մեր յեղանակի վրա:

Յեղանակը ճիշտ դուշակելու համար, մենք պետք ե լավ ի-
մանանք, թե ինչպես ե փոխվում յեղանակը Հյուսիսային Բնե-
ուային դոտում, ինչպես են շարժվում սառույցները Հյուսիսա-
յին Սառուցյալ ովկինոսում:

Վարժություն. Կոնսուրային քարտեզի վրա Միության Բնեռույթին գոնույի շուրջը դիմ քաշեցէ: Գրեցեք բնեռույթին զնույք ձեզ հայտնի եռվերէ, կղզիներ և թերակղզիների անունները:

Գծեցեք Լիտկե սառցահատի անցած Հյուսիսային ծովային ճանապարհը: Աշխատամեք արտադայամ ժամանակ. Բացիկներից, նկարներից, լրագրերի և ամսադրերի կորպածքներից կազմեցեք ալբոմ՝ «ԽՍՀՄ մի բնեռույթի գոնան»:

2. ՏՈՒՆԴՐԱՆԵՐԻ ԶՈՒԱ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ամիերով, ամրող Խոր-Հրսդային Միության յերկարությամբ ձգվում ե տունդրան:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա գտեք տունդրայի գոտիներ:

ՏՈՒՆԴՐԱՑՈՎ ԶՄԵՌԸ

Յեղջերուները մեղ արագորեն տանում եյին տունդրայով: Մեր շուրջը փուլում եր ձյունապատ անսահման հարթություն:



Նկ. 14. Զմեռը տունդրայում

Նա փախչում եր գեղի հետ. ամայի, միապաղաղ: Ամեն ինչ սպիտակ եր: Մեր շուրջը մի բիծ անդամ չեր նշմարվում:

Սուր, սառը քամին շունչներս կտրում եր և ձյունի փռչին
ածում մեղ վրա:

Զմեռային կարճ ցերեկը կամ ավելի ճիշտ ձմեռային աղջա-
մուղչն արագ անցավ: Դիշերը մոտենաւմ եր: Մշուշը խտա-
նում եր:

Քամին մի ակնթարթ դադարեց, բայց հետո սկսեց մռնչալ
նոր ուժով:

Հանկարծ ձյունի հսկայական դանդվածներ թաղվեցին մեղ
վրա: Ձյունե մրրիկը սոլիտակ միստրաղաղ շերտով պտտվում եր
մեր շուրջը: Մի բովեյում գոյացան հսկայական ձյունակույ-
տեր: Սահնակները մերթ ծանրացած դանդաղորեն բարձրանում
եին հայտնաթմբի դլուխը, մերթ աբաղորեն ցած սահում: Ձյունե մրրիկը տեսեց մի քանի ժամ, բոլորավին չթուլանալով:

Մենք մի քանի անգամ կանգ առանք յեղերսւներին հան-
դրստացնելու համար: Վերջապես նրանք բոլորովին ուժասպառ
յեղան և կանգ առան:

Մենք սահնակներից հանեցինք մորթիներ, սլատրաստեցինք
վրանի նման մի բան: Մինչդեռ մենք դրազված եյինք, ձյունը
մեղ բոլորովին ծածկեց:

Մենք թաղվեցինք ձյունի տակ, կտրվելով ամբողջ աշխար-
հից:

Ձյունը ծածկեց մեղ, ձյան շերտը բարձրանում եր վեր ու
վեր:

Մոտ 4 ժամ մնացինք ձյունի տակ սրառկած:

Յերբ ձյունաթմբի տակից դուրս յեկանք, մնացինք դարմա-
ցած: Կարծես ձյունի մրրիկը բոլորովին չեր ել յեղել: Մեր շուր-
ջը հեղեղված եր բևեռային շողշողսւն լույսով: Ձյունի հար-
թությունը կայծին եր տալիս և ծիածանի բոլոր դույներով
փայլվում:

Մենք յեղերուները լծեցինք և առաջ գնացինք: Յեղերու-
ները յերկար հանգստից հետո կրկին սկսեցին վաղել արագ և
համասար քայլով:

Ականց լուսանալ: Շուտով յերեացին յերեք վրան (չում):

ՏՈՒՆԴՐԱՅՈՎ ԱՄՍՈՒՅ

Զորս ամիս հւառ մենք նույն ճանապարհով հետ ելինք դառն
նում : Ամառ եր : Տունդրան չեր կարելի ճանաչել : Նա այժմ ամ-
բողջապես ծածկված և կանաչ ու գորշ մամուռներով , մոխրա-
դույն քսուրով-յաղերով : Մամուռի միջից կարմրին ելին տալիս
լուսամբեր պատուղները , նայում ելին ճախնամորու թփերը , կա-
պույտ հապալաւոնները : Տեղտեղ աչքի ելին ընկնում անմոռուկ-
ների , բևեռային կակաչների և զեղին ակոնիտոնի ծաղիկների
վառ բծերը : Յերշեմն ել յերեսում ելին դաճաճ կեչիներ և ու-
ռենիներ :

Վոր կողմն ել նայում ենք , ամենուրեք մեր առաջ փայլում
են անհամար լճեր : Բարձր տեղից նրանք կապույտ , փայլուն հա-
յելիների ելին նմանվում :



Նկ. 15. Ամրանք տաւնդրայում

Արևն ամենեին մայր չեր մանում : Տունդրայում կյանքն
ուժով որը յեռում եր : Միլիոնավոր սոզեր , բազեր , կարսու-

Ներ և ուրիշ թուչուններ ծածկում եյին լճերը և թուչում եյին ու-
գում : Գիշեր-ցերեկ լճերի վրա աղմկում - եյին թուչունները :

Մենք հանգստանում եյինք լճի ափին : Այստեղ մի փոքրիկ
բլրի վրա եյին նենեցների վրանները : Նենեցներն ամբողջ որը
վրասում եյին թուչուններ , բռնում եյին ձկներ , հետո նրանց
ծխահարում , չորացնում և ձմեռվայլա համար պաշար սլատրաս-
տում :

Ամառային արեգակը լուսավորում եր և տաքացնում : Մարդ-
կանց և յեղերուների համար առատ սնունդ կար : Բայց մոծակ-
ները թունավորում եյին նրանց կյանքը : Նրանք մեծ խմբերով
թուչում եյին ողում մշտչի նման շրջապատելով ամեն մի կեն-
դանի եյակ : Նրանք այնքան շատ եյին , վոր մարդիկ հազիվ եյին
կարողանում չնչել : Եեղերուների հոտերը խելազարի պես վա-
զում եյին բաց տեղեր , վորտեղ մոծակ քիչ և լինում , վորովհե-
տեւ բաց տեղերում էջում և քամի և քշում մոծակներին :

ՏՈՒՆԴՐԱԾԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱԿԻ

ԽՍՀՄ-ի Ֆիդիկական քարտեղի վրա գտեք տունդրայի դումին :

Տունդրայի մակերևույթը : Համարյա ամբողջ տարածությու-
նը , վոր բռնված և տունդրայով , ներկված և կանաչ գույնով :
Այդ նշանակում ե , վոր տունդրայի մակերևույթը հարթ ե :

Մի քանի տեղերում տունդրայում բլուրներ կան : Պատա-
հում ե և լեռնոտ տունդրա :

Դիտեցեք քարտեղը և ցույց տվեք այն տեղերը , վորտեղ
լիները կտրում են տունդրան :

Կիլման : Տունդրայի համարյա ամբողջ գոտին գտնվում ե
թեսային շրջանից հյուսիս , վորտեղ արեգակը ձմեռը մի քանի
որ և նույնիսկ մի քանի ամիս շարունակ բոլորովին չի յերեսում
յերկնակամարի վրա : Տունդրայի ափերը վողողում են ցուրտ
ծովեր , վորոնց մեջ ամառվա ընթացքում անգամ լողում են մեծ
քանակությամբ սառուցյաներ : Այդ սլատճառով ել տունդրայի
կլիման խիստ ե : Զմեռն այստեղ տեսում ե 8—9 ամիս : Հաճախ
լինում են սոսկալի սառնամանիքներ և փոթորիկ . հաճախ փշում .

Են ցուրտ և չոր քամիներ : Զյուն քիչ և գալիս , և գետինը սառա չում և բալական հաստ շերտով :

Ամառը տունդրայում կարճատե եւ : Արևն որեր և ամիսներ շարունակ մայր չի մտնում : Բայց նա կեսորին անդամ շատ չի բարձրանում և յերկիրը քիչ և տաքացնում : Այդ պատճառով եւ տունդրայում 50—100 սանտիմետր խորության մեջ գանվում եւ հավերժական սառածության շերտ :

Տունդրայի գետերն ու լեռը : Հավերժական սառածության շերտը թույլ չի տալիս , վոր հարված ձյունի ջրերն անցնեն զետնի խորքերը : Այդ պատճառով տունդրան հարուստ և լճերով : Քիչ չեն և ջրառատ գետերը , վորոնք կտրում են տունդրան : Այդ զետերի մեծ մասն սկսվում եւ հեռու հարավում : Տունդրայում նրանք հոսում են փոքր տարածության վրա և թափվում են բնեռային ծավերով :

ԽՍՀՄ-ի Փիդիկական քարտեղի վրա գտեք հետեյալ զետերի գետարերանները՝ Պեչորա , Որ , Յենիսեյ , Լենա :

Բուսականությունը : Տունդրայի բուսականությունը հարուստ չե : Ցածրադիր տեղերում աճում են մամուռներ , բարձրադիր տեղերում՝ տունդրայից ամենից հաճախ պատահում , և յագելը : Եերեմն պատահում են գետնի վրա փուլող մանր ծառեր՝ գաճաճ կեչի , ուռի , սոճի : Մամուռների մեջ շատ կան հատապտուղ բույսեր՝ լոռամբղի , ճախնամորի , կապույտ հապալաս , հավամբղի :

Միայն ցուրտ քամիներից պաշտպանված տեղերում աճում են խոտեր , գույնդգույյն , վառ ծաղիկներով :

Տունդրան անտառազուրկ տարածություն ե , ծածկված մատ մուռով և քոսերով :

Տունդրայի կենդանական բնակչությունը շատ բազմազան չե , բայց բազմաթիվ ե :

Բներում ապրում են բնեռային անթիվ մկներ , վորոնք կերամկում են քոսերով և տունդրայի ուրիշ բույսերով :

Բազմաթիվ լճերի ափերը ծածկված են չվող թռչուններով՝ բաղերով , սաղերով , կարապներով : Այստեղ նրանք գտնում են պուտտ մնունդ՝ ջրային բույսեր , մանր ձկներ և ջրային ուրիշ կենդանիներ : Գետերում և լճերում բազմաթիվ ձկներ կան :



Նկ. 16. Բնեռային աղվես

Նկ. 17. Բնեռային բու

Տունդրայում շատ կան նաև բևեռային աղվեսներ (ուստի) և բնեռային բվլեր, վորոնք կերակրվում են մկներով և չկող թուզուններով։ Պատահում են հաճախ և դայլեր։ Ամառը տունդրայի ողջ ցցվում և մոծակների բղդոցով։ Նրանք ամպերի պես խիստ հետապնդում են ամեն մի կենդանի երակի։

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տունդրան յերկու անգամ ավելի մեծ տեղ և բռնում, քան Անդիխան, Ֆրանսիան և Գերմանիան միասին վերցրած։ Այս հսկայական տարածության վրա շատ նոսք և բնակչությունը։

Տունդրայում ապրում են հետեւյալ ժողովուրդները՝ Ունիցները, լոպարմերը, չուկչաները, կամչադալները։ Մոտաներն ապրում են տունդրայում՝ գտնվող սակավաթիվ քաղաքներում և գետափերին։

Քարտեղի վրա ցույց ավելի այն տեկերը. վորտեղ ապրում են այդ ժողովուրդները։

Համարյա այդ բոլոր ժողովուրդները զբաղվում են վորսորդությամբ, ձկնորսությամբ և բազմացնում են յեղիբուների հոտեր։ Համարյա բոլորն ել ապրում են վոչ թե քաղաքներում ու գյուղերում, այլ քոչում են տեղից-տեղ, վորոնելով անունդ 'թե՛ իրենց և թե՛ յեղիբուների համար։

Տանդրայի վաշկառուն բնակչության կյանքը մինչև վերջին

Ժամանակներս մեծ կախում ուներ նրան շրջապատող դաժան բնությունից :

Յեթե շրջակալքում առատ կեր կա յեղջերուների համար գլորսն առատ ե, տունդրային բնակիչն ել լավ և ապրում: Բայց ահա զետինը սառույցի բարակ շերառվ ծածկվեց, յեղջերուն այլևս կեր չունի. Նա նիհարում և սատկում: Գաղանները հեռանում են ուրիշ տեղ և վորսը վերանում ե: Նենեցի ապրուստը գելարանում ե. տարածվում են սովոր, հիվանդությունները և աղքատությունը:

Տունդրային բնակիչները դեռ տղետ են և սնահավատ: Խորհրդային իշխանությունը համառ պայքար և տանում տունդրային ժողովուրդների կյանքը վերակառուցելու համար:

ՆԵՆԵՑՆԵՐ

Նենեցները—յեղջերվապահներ են: Նրանց ամբողջ կյանքը յեղջերուների հետ և կապված: Ամբողջ տարին նրանք ապրում են վրաններում, վորոնք ծածկված են յեղջերվի մորթով: Քնում են յեղջերվի մորթու վրա, կերակրվում են ձկներով և յեղջերվի մսով, խմում են յեղջերվի արյունը, յեղջերվի մորթուց չոր են կարում (նկ. 18):

Յեղջերուները կերակրվում են մոխրապույն քոսերով—յագելով, վորոնք ծածկված են տունդրայի ընդարձակ տարածություններ: Յերբ յեղջերուներն ուտում, վերջացնում են յագելը, այն ժամանակ նենեցները քոչում են նոր արստատեղեր:

Նենեցների համար մեծ նշանակություն ունի աղվամաղ և ծովային գաղանի վորսը: Խփում են ըմեռային աղվեսներ, գայլեր, արջեր, ծովացուկեր և փոկեր: Աղվամաղ գաղանի վորսը սկսվում ե հենց ձմռան սկզբից:

Ամառն ղբաղվում են ծովային գաղանի վորսով, ձկնորսությամբ, բռչնորսությամբ և ձվեր համաքմով:

Զմեռը նենեցները քոչում են զեպի հարազ, ավելի քոտ անտառներին, իսկ ամառը շարժվում են զեպի ըմեռային ծովերի ափերը:

Սառնամանիքի, փոթորկիկի, մառախուղի և բևեռային գիշերվա խավարի մեջ տունդրայի ձյունապատ լուս տարածությունների, անծայրածիր հարթության վրա թափառում են նենցները:



Նկ. 18. Նենցները վերադարձել են Փակտորիայից

Հենց վոր սառած գետինը համլում ե, բևեռային ծովերի ամիերը կենդանանում են, նենցներն ամեն ամառ դալիս են այստեղ: Ծովային քամին յեղքերուների վրայից քլում, հեռացնում ե մոծակներին ու բոռերին:

Բայց բևեռային կարճատես ամառը չուտ և անցնում: Ծովային ծածկվում են խիստ մառախուղով: Ձյունն ավելի ու ավելի հաճախ և գալիս, սուլում և վոռնում և քամին: Թռչունները չլում են, գաղանները հեռանում են, մարդիկ ել քոչում. են տունդրայի խորքերը, ավելի մոտ անտառներին:

ԶՈՒԿՉԱՆԵՐ

Զուկչաներն առլում են Զուկչայն թերեկղում, Ասիայէ հեռավոր հյուսիս-արևելքում:

ԽՍՀՄ -ի Փիզիկակոն քարտեղի վրա դուք Զուկույոն թէրակղղին:

Զուկչաների մի մասը— գծովափնյաները՝ ապրում են ծովափին և դրաղփում են ծովային վորսավ։ Մյուս մասը— յեկեղ, ջերմապահաման՝ չուկչաները— նենեցների նման յեղջնրվապահությամբ են դրադլում և իրենց յեղջնրուների հետ քոչում են չուկույան տունդրայում։

Մովափնյա չուկչաների գլխավոր վորսը ներպան ե (փոկը), վորի մորթուց չուկչաները շոր են կարում, միսն ուսում են; իսկ ճարպը գործ են ածում վորպես վառելանյութ և լուսավորելու համար։

Վորսի հաջողությունից ե կախված ծովափնյա չուկչաների ամբողջ կյանքը։ Յերբ ծովի վրա փոթորիկը յերկարում ե— վորսն ել յերկար ժամանակով զատքարում ե։ Զուկչաներն, այդ ժամանակ, սպառելով ունեցած պաշարը, նստում են բնակարաններում առանց սննդի և առանց ջերմանալու։

Մովափնյա չուկչաների գյուղերը ցրված են ծովափին։ Նրանք բաղկացած են 20—30 վրանից։

Չուկույան վրանը մեծ և և բարկացած և մի քանի բաժանմունքներից։ Ներքին բաժանմունքի մեջ կա ոջախ, բացի այդ կան լապտերներ, վորոնց մեջ այրվում ե փոկի ճարպը։ Զմեռը, նույնիսկ 45°-ի սառնամանիքներին, վրանի մեջ շատ տաք և լինում։ Միայն թե փոկի ճարպն անպակաս լինի։

Շներն անհրաժեշտ կենդանիներ են ծովափնյա չուկչաների համար։ Նրանք փոխարինում են յեղջնրուներին։ Յերբ չուկչան ցանկանում ե ձմեռը զնալ ծովը վորսի կամ ապրանքներ զնել։ Կամ զազան բռնելու համար թակարդ լարել, նա շները լծում ե սահնակին և հաջող շների վոհմակն սկսում ե վաղել առանց սանձի, զեկավարվելով չուկչայի ձայնով միայն։

ԻՆՉՊԵՍ Ե ԽՈՐՃՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ
ՏՈՒՆԴՐԱՑԻ ՎԱԶԿԱՑՈՒՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵԱՆՔԸ

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐ ՏՈՒՆԴՐԱՑՈՒՄ

Ճարսի ժամանակ խրավաղուրկ՝ տունդրայի վաչկառուն ժովուրդները հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դար-

ձան Խորհրդային Միության համահավասար քաղաքացիներ :
Խորհրդային որևէնքներով նրանք ունեն իրենց առևտրային
խորհուրդները : Քոչում և տունդրայի բնակչությունը, դրա հետ
քոչում և տունդրայի խորհրդային իշխանությունը—ամառը դե-
պի Հյուսիս, ծովափը, իսկ ձմեռը, սառնամանիքներին՝ դեպի
հարավ, անտառների հովանավորության տակ ձմեռելու հա-
մար :

ԳԻՇԱՏԻՉ-ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԲԵՆ ԹԱԿՑՈՐԻԱՆՆԵՐ

Յարական իշխանության որով տունդրայի ժողովուրդները
տղետ եյին և անողաշտպան :

Ծունդրա յեկող վաճառականները հեշտությամբ խարում եյին
տունդրայի անսահման տարածությունների մեջ մենակ ընկած
քոչվորին : Այդ վաճառականները բերում եյին վոչ միայն տուն-
դրայի բնակչների համար անհրաժեշտ ապրանքներ—վրասրդա-
կան պարագաներ, ալյուր, աղ, լուցկի, այլև ողի : Նրանք հար-
բեցնում եյին տունդրայի բնակիչներին, չնչին գներով զնում
եյին յեղջերուների հոտեր և թանգարժեք մորթի ու հարստա-
ցած վերապանում :

Իսկ մութ, անողնական քոչվորները տարեց-տարի աղքա-
տանում եյին :

Խորհրդային իշխանությունը քեեց տունդրայից դիշատիչ
վաճառականներին : Ամբողջ տունդրայում բացվեցին բաղմաթիվ
պետական առևտրական գրասենյակներ—Փակտորիաներ : Այստեղ
գնում են մորթիներ, թե՛ փողով և թե՛ ապրանքներով :

Նենեցների ամառային իշխանավայրից վոչ հեռու տեղավոր-
վել և Պետառի Փակտորիան :

Յերկու մեծ ամրար լցված են զանազան ապրանքներով : Մե-
կի մեջ պարկեր են լցված ալյուրով, ձավարով և աղով : Մյուսի
մեջ՝ վառող, մանրագնդակ, կապար, լուղ, թեյ, շաքար, կան-
ֆետներ : Ամաններ ել շատ կան, կան շորեր, գրքեր, պլակատ-
ներ :

Թակտորիայում մեծ կենդանություն եւ : Մեկը մյուսի հե-
տեւից դալիս են մորթիներ հանձնողներ : Վորսն առաս եր —

ապղանքը բերում են հա բերում։ Սեղանների, պատուհանների և շղակի հատակի վրա—ամեն տեղ թափված են բնեսային աղվեսի մորթիներ։

Աշխատողներն ուժասպառ են լինում։ Վոմանք նայում, զրննում են մորթին, վոմանք հաշվում են, վոմանք ել տալիս են մթերքներ ու ապրանքներ։

Մորթեղնը հանձնելուց հետո, նենցները թեյ են խմում և սպառում, վոր հաշիվներն ստանան։

Ստանակով բոլոր անհրաժեշտ ապրանքներն ու մթերքները և սահնակի վրա տեղավորելով, նենցները տուն են վերադառնում։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՏՈՒՆԴՐԱՑՈՒՄ

Տունդրայում՝ կուլտուրական մեծ աշխատանք և տարսվում քոչվորների հետ այն տեղերում, վորտեղ նրանք ձմեռում են։ Այստեղ հիմնում են կուլտրադաներ։ Նրանցից յուրաքանչյուրի մեջ կառուցում են դպրոց, հիվանդանոց, ուսումնակայան, սոցիալիստական կուլտուրայի տուն, կոոպերատիվ։ Տունդրայի հարյուրավոր բնակիչներ վոտքով, յեղթներուների կամ շների սահնակներով դալիս են կուլտրադաները։

Կազմակերպում են նաև շարժական վրաններ։ Յեղթերուներով, չներով քոչում են տեղից-տեղ ուսուցիչը և բուժակը, իսկ նրանց հետ և կինոն, ուագիոն, գրադարանը, գեղատուակ։ Շարժական վրանները թափանցում են տունդրայի ամենախուլ անկյունները, տեղափոխվում են տեղից-տեղ և տարածում խորհրդադարյան։

Տունդրայի համարյա բոլոր յերեխանները սովորում են դպրոցներում։ Մինչև ամենավերջին ժամանակները տունդրայի քոչվոր ժողովուրդները սեփական դիր չունեյին։ Այժմ մշակված և այբուբն և հրատարակված են այբենարաններ նենցներւն և չուկոտերեն լեզուներով։

Մեծ նշանակություն ունեն այն դպրոցները, վորոնց կից կան համբակացարաններ։ Նրանք քոչվորների յերեխաններին սովորեցնում են կուլտուրական կյանքի։


ԻՆՉՊԵՍ Ե ԽՈՐՀՄԱՆԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ
ՏՈՒՆԴՐԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՂՅԵՐՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

ՅԵՂՅԵՐՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՆԴՐԱՅԻ ՄՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻմնական ճյուղն ե:

ՅԵՂՅԵՐՈՒՄ չի սպասարկում միայն քոչվորին: Նրա միաը գնում և պահածոների գործարանը, կաշին կարևոր հումք և արդյունաբերության համար: Մինչդեռ յեղյերուները սաստիկ տառապում են տունդրայի դաժան բնությունից:

Ամրողջ հոտեր վոչնչանում են սառույցից ու սաստիկ ձնաբուքերից: Նրանք, մանավանդ ջահել յեղյերուները, հաճախ բեմեռային գիշերները զոհ են գնում վայրենի գաղաններին, տառապում են խայթող միջաններից՝ բոռերից, մժեղներից, մոծակներից, կոտորվում են համաճարակից, տարափոխիկ հիվանդություններից:



Նկ. 19. ՅԵՂՅԵՐՎԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՄԱՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային իշխանությունն այժմ ամեն, միջոց գործ է գնում, վորակեսղի բարձրացնի տունդրայի յեղյերվապահությունը: Հիմնվել ե յեղյերվաբուժական կայան, վորտեղ մասնագետ-

Ներն ուսումնասիրում են յեղջերպիլին և նրա հիմանդությունները՝
Հիմնում են յեղջերպապահական ցուցադրական խորհրդային
տնտեսություններ :

Բացվել ե յեղջերպապահական տեխնիկում :

Կազմակերպվում են յեղջերպապահական կոլեկտիվ տնտեսու-
թյուններ :

ՄՈՒՇՏԱԿԱՎՈՐ ԳԱԶԱՆՆԵՐԻ ՎՈՐՍԸ

Տունդրայում շատ մեծ նշանակություն ունի մուշտակավոր,
դաղանների, մանավանդ բնեռուային աղվեսների վարսը :

Շատ յերկրներ մորթեղենի մեծ կարիք ունեն : Նրանք մեր
մորթիներն ուրախությամբ են զնում : Մորթեղենից Խորհրդային
Միությունն ստանում ե վոսկի, վորով մենք արտասահմանում,
զնում ենք մի քանի տեսակ մեքենաներ մեր գործարանների հա-
մար : Մենք պետք ե աշխատենք զարգացնել մուշտակավոր զա-
ղանների վրասորդությունը և մեծացնենք մորթու արտահանումն
ուրիշ յերկրներ :

Տունդրայում կազմակերպվում են վորսորդական արտելներ :

Հիմնվում են գաղանային ֆերմաներ, վորտեղ տունդրայի
ավելի արժեքավոր գաղանները բաղմացվում են, ինչպես ընտա-
նի կենդանիներ :

ՏՈՒՆԴՐԱՅԻ ՈԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տունդրայի յերկրային ընդերքը դեռ քիչ ե ուսումնասիր-
ված : Բայց արդեն այժմ ել պարզ ե, վոր տունդրան ԽՍՀՄ-ի
սոցիալիստական շինարարության համար շատ կարևոր ոգտա-
կար հանածոներ կարող ե տալ : Ամենից լավ ուսումնասիրված
են կուտ թերակղզու տունդրաների ոգտակար հանածոները :

Անտառային ճահիճների և լճերի մեջ բարձրանում են այն-
քան ել վոչ բարձր խիբինյան լեռները : Ներքեւում աճում ե սոճու
անտառ : Ավելի բարձր՝ յեղենի և կեչի : Խոկ հետո լեռնային
տունդրայի մամուռները և քոսերը :

Քարտեզի վրա ցույց տվեց Աբգեք Աթրբնյան լեռները. Նրանք դանելում են Կոչա
Բերակղջում։

Ամայի և անմարդաբնակ եյին այս տեղերը մի քանի տարի
առաջ՝ Գլխանականներն ամբողջ չորս տարի աշխատում եյին այս-
տեղ։ Նրանք հետազոտում եյին Աթրբնյան լեռների հանածո հս-
ըստությունները։ Շատ արժեքավոր ոգտակար հանածոններ
գտան նրանք մամուռներով ու քոսերով. ծածկված վայրենի,
անմարդաբնակ ժայռերի մեջ։ Առանձնապես մեծ արժեք ունեցավ
Աթրբնյան ավատիտը, վարից շատ լավ պարարտանյութ և սաաց-
վում հողի համար։



Նկ. 20. Կիրովսկ քաղաքը

Անցալ մի քանի տարի և Խիրբնյան վայրի տունդրան կեն-
դանացալ։ Առատիտի հանքերում գիշեր-ցերեկ աշխատանքը

իսուսմ և Բանվորների թիվը հաղարների յե համուսմ Խուլ շղղում են պայթյանները ։ Դողանջում են շողեցակները ։ Աչիստում են հորատիչ մեքնաները ։

Լեռների թեք լանջերի միջև, վճիտ լճի ափին նոր քաղաք դաշից ։ Քաղաքն աճեց ընկ ։ Կիրովի անսառան եներգիայի և բուշիկյան անհողղուղղ կամքի շնորհիվ և նրա անունով ել կոչվեց Կիրովսկի ։

Քարտեղի վրա զանք Կիրովսկ քաղաքը ։

Կիրովսկ քաղաքի հիմնադրությունից ընդամենը հինգ տարի յե անցել, բայց այնտեղ այժմ արդեն կան մի քանի գործարաններ, քարե շենքեր, մի քանի հիվանդանոցներ, դպրոցներ, ակումբներ, դրադարաններ և մեծ հնչուն կինո ։

Կիրովսկի փողոցով անցնում են ավտոմոբիլներ ու ավտոբուսներ ։ Նրա մեջ ապրում ե 30 հաղարից ավելի մարդք ։ Քաղաքից քիչ հեռու չինված ե ելեկտրակայան, վոր ելեկտրական հոսանք և տալիս քաղաքին և հանքերին ։

Այսպես փոխվեց Խիրիխյան վայրենի տունդրան ։ Կանցնի մի քանի տարի և շինարարությունը կծավալվէ նաև տունդրայի ուրիշ շատ տեղերում ։

ՏՈՒՆԴՐԱՅԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տունդրայի բնակիչները հաճախ սովի եյին մտանվում ։ Նրանց կերակուրը միատեսակ եր և վատառողջ—ձուկ, յեղինքի միս և ծովային գաղանների միս ։ Վոչ հաց, վոչ բանջարեղին ։ Միայն խորհրդային կոռպերացիան եր, վոր օկսեց տունդրա ներմուծել ալյուր, աղ ։ Նրանք չգիտեյին, թե ինչ բան ե բանջարեղինը ։ Զեային վոչ արտեր, վոչ բանջարանոցներ ։

Մի՞թե սառած հողի, ճահիճի վրա կարող են հացահատիկներ աճել—այսպես եյին մտածում բոլորը ։ Փորձեր կատարեցին և պարզվեց, վոր կարող են ։ Այժմ Կոլա թերակզզում հիմնված ե մի փորձնական գյուղատնտեսական կայան, վորտեղ աճեցնում են վոչ միայն կարտոֆիլ ու կաղամք, այլև յելագ ։ Փորձակայանն ապացուցեց, վոր տունդրայում կարելի յե զբաղվել բանջարարությամբ, գյուղատնտեսությամբ ։

ՀԱՂԲՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏՈՒՆԴՐԱՑՈՒՄ

Նայեցեք քարտեղին : Յերկաթուղին կտրում ե տունդրան
Իլայն արևմտյան մասում : Դա Մուրմանի յերկաթղիծն է :

Տունդրայում ել ուրիշ յերկաթուղի չկա :

Հաղորդակցությունը տունդրայի տարբեր կետերի միջև
գլխավորապես յեղջերուներով ու չներով ե կատարվում :

Տունդրայի համար կարեոր նշանակություն ունի գետային
Տաղորդակցությունը :

Բևեռային ծովերի ափին մի քանի խոշոր ծովային նավա-
հանդիսաներ կան : Դրանց վրայով մեր Մուրման առևտուր ե
անում զանազան պետությունների հետ :

Դրանցից կարեռներն են՝ Մուրմանսկը, Արխանգելսկը,
Իգարկան : Մուրմանսկն ամենահարմարն եւ Նա ամրող տարին
չի սառչում, վորովհետեւ նրա մոտով հոսում ե տաք հոսանքը :

Վարժություն. Կոնտուրային քարտեղի վրա տունդրայի շուրջը մատիտով
լեցեք : Գրեցեք տունդրան կորող գլխավոր գետերը, Կոնտուրային քարտեղի
վրա նշանակեցեք թե վարեղ են ազգում լողաբները, նենցեները, շուկա-
ները և կամչաղուները :

Նշանակեցեք Կիրովսկը և Հյուսիսային կարեոր նավահանդիսաները՝ Մուր-
մանսկը, Արխանգելսկը :

Դաեք, թե վո՞ր կողմից ե մասում նարենցի ծովը Գուլֆուրում առ Հո-
ռակը :

Աշխատանք արտադասյան ժամանակ. Կաղեցեց մի ալրու «Տունդրայի
զարին» թեմայով :

3. ԱՆՏԱՌՆԵՐԻ ԶՈՆԱ

Տունդրայից հարավ ամրող ԽՍՀՄ-ի վրայով նրա արևմըտ-
յան սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը տարածվում են ան-
տառներ :

Տունդրայի և անտառների միջև վոչ մի տեղ վորոշ սահ-
ման չկա : Տունդրան փոխվում ե անտառների աստիճանաբար :


Սկզբում տունդրայում յերեսում են առանձին վախտ, ցածրիկ
եառեր չորացած գագաթներով : Դա անտառատունդրան եւ Ա-
լելի դեպի հարավ ծառերը դառնում են ավելի խոշոր, ավելի

ուժեղ։ Նըանց թիվը հետզհետե աճում է։ Վերջապես տունդրան
անհետանում է և տեղի տալիս անտառների։

«Բնական դոտիներ» քարտեղի վրա գտնք անտառատունդրան։

Անտառները բունում են շատ ավելի մեծ տարածություն, քան
թե տունդրան։ Տանկութ այնպիսի պետություն, ինչպիսին
Ֆրանսիան է, կարող ելին տեղավորվել անտառների դոտում։

Այդ անտառների մեծ մասը բաղկացած է փշատերև ծառե-



Նկ. 21. Անտառատունդրա

րեց և կազմում է վայրենի, անանցանելի տայգա։

Այն անտառները, վորոնք գտնվում են անտառային զոնայի
հարավ-արևմտյան մասում, բաղկացած են թե՛ փշատերև և թե՛
սաղարթավոր տեսակներից։ Դրա համար ել նրանք կոչվում են
խառն անտառներ։

«Բնական դոտիներ» քարտեղի վրա ցույց տվեք անտառատունդրան, տայ-
գան և խառն անտառները։

ՏԱՅԴԱՅԻ ՎՐԱ ՑԵՎ ՏԱՅԴԱՅԻ ՄՆՁ

Սալվառնակը բարձրացալ Կրասնոյարսկ քաղաքից և Յենի-

սեյ գետի վրայով թռավ դեպի հյուսիս :

Գտեք Յենիսեյ գետի վրա Կրասնոյարսկ քաղաքը :

Ներքեռում սկին եր տալիս միջատերեւ անտառը : Տայդան տա-

րածվում եր դեպի ամեն կողմ—դեպի հյուսիս, հարավ, արևելք

և արևմուտք :



Նկ. 22 ա. Տայդայում

Միայն գետի արծաթափայլ ժամավենն եր կտրում այդ ան-

տառները, մերթ գալարվելով, մերթ ուղղվելով : Տեղ—տեղ գե-

տի մոտ, սեղմված խիտ անտառների մեջ, պատուղարվել են գյու-

ղեր . յերբեմն—յերբեմն ծխում եյին փայտի գործարանները :

Մոտ հաղար կիլոմետր թռանք Յենիսեյի վրայով և մեր

շուրջը, իրաքան աչքներո կտրում եր, դեղի ամեն կողմ ձղվում եր անսահման տարբան:

Յեղբ սպավառնակն իջավ, յես մի նեղ, հաղիսլ նկատելի արահետավ մտու տայդան: Հաղիսլ մի կիլոմետր չանցած, յես ընկա անանցանելի թափուտի մեջ:

Միարադաղ պատի պես ամեն կողմէից շրջապատեցին ինձ բրդու կնդրերը, բարձր յեղենիները և մայրիները:

Չնայելով, վոր որն արևոտ եր, անտառի մեջ այնքան խռվար եր, վոր կարծես դիշերը վրա յե հասնում:

Ամեն տեղ կուտակված եյին արմատախիլ յեղած ծտակը, չոր-չոր փայտեր, քաղակոշտեր և այս բոլորը պատաժ եյին մոռուով և քսերով: Մեռելային լոռություն եր:

Յես կախեցա մոլորի և շոտպեցի դեղի սալառնակը:

ՏԱՅԳԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթը: Նայեցեք ԽՍՀՄ-ի Փիղիկական քարտեզին: Տայգայի բոնած տարածության մեծ մասը քարտեղի վրա ներկված և կանաչ գույնով—դա դաշտավայրեր են: Համարյա մեջտեղում այդ դաշտավայրերը կտրվում են Ռուալյան լեռներով: Յենիսեյից սկսվում և Արևելյան-Սիրիական բարձրավանդակը: Զանադան ուղղությամբ նա կտրուվում և լեռներով:

Կլիմա: Տայգայի գոտին գտնվում և տունդրայից հարավ: Այդ պատճառով արեգակն այստեղ ավելի յե բարձրանում և ավելի յե տաքացնում, քան տունդրայում: Գետինը հալվում և մեծ խորությամբ:

Ջմեռը տայդայում յերկարատե և ցուրտ ե, բայց ավելի կարճ ե, քան թե տունդրայում (6—8 սմիս):

Տայգայի կլիման նրա տարբեր մասերում միատեսակ չե: Տայգայի արևմայան (յելքոպական) մասում կլիման ավելի մեղմ ե. տայգայի այս մասն, ավելի մոտ և Ատլանտյան տաք սվերանուին: Տայգայի ասիստական մասն ավելի դաժան կլիմա ունի: Ատլանտյան ովկիանոսի կողմից այստեղ չեն հասնում տաք և խոնավ քամիներ, իսկ հյուսիսային ափերը վողողվում են բեզեռային ցուրտ ծովերով:

Զմեռն այստեղ լինում են 40° և 50° սառնամանիքներ։ Իսկ Վերխոյանսկ քաղաքում սառնամանիքները հասնում են մինչև 70° —սա ամենացուրս տեղն և ամրողջ յերկրագնդի վրա («ըրբ-տության ընեռ»)։ Այսպիսի սառնամանիքների ժամանակ սնդիկը պնդում է, յերկաթը դառնում է փխրուն, ծառերը ճայթյունով ճաքում են, թռչունները թռչելիս սառում են ու ընկնում գետին։

Քարտեզի վրա դանք Վերխոյանսկ քաղաքը։

Գետեր։ Տայգան կտրում են մեծ ու ջրառատ գետեր։ Նրանք սկսվում են հոռավոր հարստվում, մեծ մասամբ լեռներից, անցնում են տայգայի և տունդրայի միջով և թափվում ըստեային ցուրտ ծովերը։ Գետերի հովիտներով տարրածվում են հրաշալի վողողվող մարգագետիններ։

Բարեկան վրա դանք Հյուսիսային Դվինա, Գեչորա, Որ, Յենիսեյ և Լենա գետերը։

Բուսականություն։ Տայգայի տարրեր մասերում նրա մակերեսույթը և կլիման միատեսակ չեն, միատեսակ չեն և բուսականությունը։

Ենթական տայգան բաղկացած է սոսի և յեղնինի ծառերից, վորոնց հետ խառն աճում ե նաև կեշին, կաղամալխին։

Ասիական տայգայում, վորտեղ կլիման ավելի խիստ է, ուրիշ ծառեր են աճում, այն ե՝ կեղր, խիժոտ փինի, յեղնինի։

Մութ ե տայգան։ Նրա փշատերև խիտ ծառերի միջով քիչ լույս ե թափանցում։ Այստեղ միշտ կիսախավար է, թաց և խոնավ։ Յեղնիների մութ ծածկոցի տակ լսով աճում են միայն մամուռներ, քոսեր և սունկեր։

Փշատերև անտառի մեջ հողը միշտ ծածկված է լինում թափված փուշ-տերևներով։

Շատ տեղ տայգան անանցանելիք յեւ ամենուրեք ընկած են ծառեր, կուտակված են քարակոշեր, հաճախ պատահում են ճահճներ։

Մուայլ ե ու լուս տայգան։ Նրա մեջ չի լսվում թռչունների ուրախ ծըլլոցը։ Կենդանիները հաղվաղեալ են պատահում։ Նրանք

բոլորն աշխատում են հեռու մնալ տայդայի արահետներից : Միայն փոթորկի ժամանակ խուլ աղմուկը լցնում է տայդան, յերբեմն այդ աղմուկը փոխվում - ե վոռնոցի, կարծես վոռնում . և կատաղած ու անհանգստացած դաղանը :

Տայդան նոսրանում ու հետ ե քաշվում միայն այնտեղ, վորտեղ հոսում են զետեր կամ տարածվում են մեծ ճահիճներ, վորտեղ կառուցվում են քաղաքներ և գյուղեր :

Հողեր : Տայդայում հողերը ծածկված են մամուռի և թափված փուչ-տերեների խոնավ ծածկոցով : Այս ծածկոցը պահպանում ե այն խոնավությունը, վորը հողի միջով ծծվում ե դեպի ցած : Զուրը հողից հեռացնում ե սննդարար նյութերը : Այդ պատճառով տայդայում առաջանում են մոխրահողեր . նրանք սակայ արգավանդ են — պարունակում են փոքր քանակությամբ սննդարար նյութեր :

Կենդանական աշխարի : Տայդայի կենդանական աշխարհը հարուստ ե ու բաղմաղան : Թռչուններից տայդայի մեջ մշտապես ապրում են՝ ցախաքլորը, մայրեհավը և սալամրը : Նրանք կերակրվում են տերեններով և հատապտուղներով, ձմեռը՝ սերմերով և բողբոջներով : Տայդայի մշտական բնակիչ ե նաև կտցահարը : Իր սուր ճանկերով նա կազչում ե ծառերի կեղեկին, սուր կտուցով ծակում կեղեր և այնտեղից ճիճուններ հանում :

Անտառային խոշոր կենդանիներից այստեղ ապրում ե խցայծյամը : Նա ամառը կերակրվում ե խոտով, իսկ ձմեռը կրծոտում ե ճփերը և ծառերի ճյուղերը :

Հեշտությամբ ծառից-ծառ ե ցատկում սկյուռը : Նրան այդ բանում ոգնում ե իր յերկար ու բրդոտ պոչը : Սկյուռը կերակրվում ե փշատերեւ ծառերի սերմերով և բողբոջներով :

Տայդայում շատ դիշատիչներ կան : Գիշերները թռչուններին ու սկյուռներին հետևում են կզաքիսը, ժանտաքիսը, սամույրը : Համարյա առանց աղմուկի թռչում են բվերն ու բվեճները : Մանր կենդանիներին ու թռչուններին վորսում ե աղվեսը : Մառերի վրայից նույնիսկ խոշոր կենդանիների (իշայծյամների), վրա յե հարձակվում լուսանը :

Անտառի ծայրամասում ապրում են գայլերը : Ձմեռը նրանք վոհմակներ են կաղմում և հարձակում գործում նույնիսկ շատ խոշոր կենդանիների վրա :

Թաղ անտառի մեջ ապրում ե մուգ դարչնալույն արջը :
Նա կերակրվում է բույսերով, հատապտուղներով և կենդանին-
ներով։ Զմեռն անց է կացնում վորջում կիսաքում վիճակում :

Առաջադրություն։ Ինչո՞վ է տարրերվում տայզայի կլիման տունդրայի
կլիմայից։ Ի՞նչ տարրերության կա արևմտյան և արևելյան տայզայի կլիմայի
մեջ։ Ինչո՞վ է տարրերվում արևելյան տայզայի բուսականությունը արևմտյան
տայզայի բուսականությունից։ Ի՞նչ կենդանիներ են ապրում տայզայում և
ինչո՞վ են նրանք տարրերվում տունդրայի կենդանիներից։

ՏԱՅԴԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տայզայի զոնայում ապրում են ևլենկները (տունդրաները),
յակուտները, կարելները, կոմի, ոռուները :

Եվենկներն զբաղվում են վորսորդությամբ, յեղջերվածա-
հությամբ և ձկնօրսությամբ։

Նսճակյաց և կիսանստակյաց յակուտներն զբաղվում են
յերկրագործությամբ, անասնապահությամբ և վորսորդությամբ։

Կարելները, կոմի և ոռուները նստակյաց են և զբաղվում են
գյուղատնտեսությամբ և մուշտակավոր գաղանների վորսով։
Նրանք ապրում են դլամավորապես գետերի և յերկաթուղիների
մոտ։

Գետերն ու գետակներն առաջ միակ ճանապարհներն եյին
անտառի խորքներում։ Գետերով մարդը թափանցում եր տայզա-
յի մեջ, կացինն ու հրացանը ձեռքին։ Գետակների ափերին,
բարձրագիր թմբերի վրա, մութ անտառների մեջ մարդիկ հիմ-
նում եյին գյուղեր, կարասելով և այրելով շրջակայքի անտառ-
ները վարելահողերի համար։

Բնակավայրերն անտառի խորքերն են թափանցում այնտեղ,
վորտեղ մարդիկ կաղմակերպված հարձակում են գործում տայ-
զայի վրա—զա անտառի և դանազան ոգտակար հանածոների
շահագործման տեղերն են։ Ներկայումս արդեն բավական շատ
քաղաքներ են տայզայում։ Համարյա բոլոր քաղաքները գտնը-
վում են տայզայի հարավային ծայրամասում կամ յերկաթու-
ղիների, կամ գետերի յերկարությամբ։

Վարժություն։ Դաեւ (102 էջ) բարտեղի վրա, թե յելբողական տայզայի

վոր տեղումն ևն ապրում կարեները և կոմին, ասխական տայղայի վոր ժամ-
սերումն են ապրում յոկուտները և եվենիները, տայղայի վոր ժամերում են
ապրում ռաները։

ԻՆՉՊԵՍ Ե ԼԱՎԱՆՈՒՄ ՏԱՅԴԱՅՑԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՑԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

Ցարական ժամանակ եվենիները և մյուտ ժողովուրդները,
վորոնք տայդայում վորսորդությամբ եյին զբաղվում, կտրված-
եյին կուլտուրական կենարուններից և իրենց ամբողջ կյանքն անց
եյին կացնում պայքարելով դաժան բնության դեմ։ Վատ զին-
ված, նրանք իրենց յեղիներուների հետ թափառում եյին տայ-
դայում՝ վորոնելով մուշտակալոր դաղաններ։ Մորթեղենը չըն-
չին զներով տալիս եյին կեղեքիչ մեծագնորդ վաճառականնե-
րին։ Նրանք ամբողջտպես կախված եյին այդ վաճառականնե-
րից։

Խորհրդայնացումից հետո տայդայի ժողովուրդների, ինչ-
պես և տունդրայի ժողովուրդների կյանքն սկսեց արագորեն
փոխվել։ Կեղեքիչ վաճառականների փոխարեն յեկան Պետառի
ֆակտորիաները։ Հիմնվում են հաստատում բնակավայրեր, կուլ-
տուրական բաղաներ, դպրոցներ, կոռուկատիվներ։

Տայդայի քոչվորների և վորսորդների մի մասը դեռ մինչ
հեղափոխությունն սկսեց անցնել նստակյաց կյանքի և զբաղվել
յերկրագործությամբ, բայց այդպիսիների տնտեսությունը շատ
աղքատ եր։ և նրանք հաճախ սովոր եյին մատուցում։

Խորհրդային իշխանությունը վճռականորեն սկսեց վերակա-
ռուցել նրանց տնտեսությունը։

ԵՎԵՆԿՆԵՐԸ ՎՈՐՄՈՐԴՆԵՐ ԵՆ

Հենց վոր տայդան ծածկվում ե ճյունպվ, սաստիկ սառնա-
մանիք և, սկսվում ե վորսը, եվենիների անտառային յեռուն
աշխատանքը։ Մի քանի որ շարունակ նրանք վորսում են իրենց
իջևանատեղի շրջակայքում։ Յերբ բոլոր սկյուռներին կոտորում
են, նրանք անցնում են տայդայի խորքը։

Տայդայի մեջ կորած մի զետակի ափին փուլել են եվենկ-

Ների պլանները։ Մուխը քուլա-քուլա բարձրանում և վըաններեց։ Քիչ հեռու արածում են յեղջերունները։

Վրանից դուրս յեկավ վորսորդը։



Նկ. 22ր. Եվեմկը վորս անելիս

Գնում և նա տայդայում գետակից գետակ, դադաթից դադաթ աչքները սրած, ականջները լարած։ Նա լավ գիտե, թե վորտեղ և թագնվում սրաքիթ աղվեսը, տեսնում ե, թե ուր ոնաց փոքրիկ խորածաննէ կնդումը, լսում ե, թե վորտեղ և ցատկում, անհոգ սկյուռը... Սպիտակ ձյան վրա նա կարդում և անհանկանալի, հաղիվ յերեացող նշաններ։ Վորսորդի հետ գնում ե և շոմը։ Յերեեմն շոմը կանգ և առնում վորեե ծառի մոտ։ Ընդհատ-ընդհատ հաջում ե և ճանկերով կեղմը ճանդուտում։

Վորսորդը նստում ե, հրացանն ուղղում, կրակում և զնում առաջ։ Գոտուց մի սկյուռ ևս կախվեց։

ՅԵՐԵԿՎԱ ՎՈՐՍՈՐԴԻՆ ԱՅՍՈՐ ԴԱՌՆՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐ

Զմեռվա վերջն ե։ Ժամանակն և տայդայից գնալ գետափը ձուկ վորսալու։ Մի մառախլասլատ առավոտ ելենկ Պյոտր Մի-

բան իր վորդու հետ ուղևորվեց դեպի Յենիսեյ գետը:

Մնացել էր անցնելու կեսորվա ճանապարհ:

Մանօթ առուներ, ճահիճներ, ծառեր... բայց այս ի՞նչ պատահեց յեղջերուների հետ: Նրանք կանգ են առնում, այս ու այն կողմն են ընկնում, ճամառում են, առաջ չեն գնում: «Եերեկի արջի բներ կան դետափին», մտածում ե Միրան, քշելով վեր-վեր թռչող յեղջերուներին:

Հանկարծ յեղջերուները կանգ առան: Տայդայում լսվեց ինչ վոր սարսափելի վոռնոց՝ «ուղուղուղու»:

Կելզան, Միրայի վորդին, հրացանը վերցրեց, շվիացրեց շանը և մտավ տայգա: «Այդ ինչ չար վորդի յե, պետք ե տեսնել», մտածում եր Կելզան: Նա յեկավ այն տեղը, վորտեղ անցյալ տարի կանգ եյին առել և ճանաչեց այդ տեղը: Դետի վրա մեկը մյուսի հետեւից կանգնած են փայտե լստեր: Յերկաթե ճանկերը բռնում են գերանը, նետում վեր և գերանները մեկը մյուսի հետեւից թագնվում են չոգենավերի ահռելի յերախներում: Մարդիկ ծառերը տապալում են, գետինը փորում, տներ չինում: Գետափին արդեն շինել են մի մեծ տուն, վորի մեջ կարող ե հարյուր վրան տեղավորվել:

Կելզան հոր հետ տայգա չվերադարձավ: Նա մնաց աշխատելու գործարանում:

Յերեկվա քոչվորը բանվոր դարձավ:

Յերեք տարուց հետո այդտեղ բարձրացավ մի նոր քաղաք—Իգարկա:

ՅԱԿՈՒՏՆԵՐՆ ԱՆԱՍՆԱՊԱՀ ՈՒ ՅԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՆ

Լենա դետի միջին և ստորին հոսանքների յերկու կողմերում ընդարձակ տարածության վրա ապրում են յակուտները: Այս յերեկիրը կտրտված ե լեռնաշղթաներով (տե՛ս Ֆիլիկական քարտեղը), ծածկված ե անտառներով ու ճահիճներով: Ամենացուրտ ձմեռներն ամբողջ աշխարհում լինում են այստեղ: Բնակչությունը շատ նոսր ե:

Յակուտներն զբաղվում են անասնապահությամբ և մասամբ ել յերկրագործությամբ:

Գետահովիտներում, լեռների անանցանելի անտառների և
ճահիճների մեջ իրարից հեռու ցրված են յակուտների փոքր
բնակավայրերը: Շրջակայքում արածում են անասունները՝ կո-
վերը, ձիերը: Կանայք ինձամում են անասուններին: Տղամար-
դիկ խոտ են հարում: Ամբողջ որը համարյա առանց հանգստա-
նալու աշխատում են նրանք: Հյուսիսային ամառը կարճատեւ ե,
պետք ե խոտի պաշար հավաքել ցերկարատեւ և խիստ ձմեռվա
համար:

Յակուտական փոքրիկ կյուղերում դեռ մնացել են յակու-
տական հին վրանները (յուրտանները): Նրանք շինվում են փայ-
տից և դրսից ծեփվում կալով. ձմեռն ապակու փոխարեն պա-
տուհանի մեջ սառցի կտորներ եյին դնում, տանիքը շինվում
եր ձողերից, հատակը՝ հողից: Յուրտի մեջտեղն ոչախն և ծըս-
նելույզով: Կրակի շուրջը շինված եյին թախտեր. նրանց վրա
և աշխատում եյին և քնում:

Կոլեկտիվ տնտեսության զարգացման հետ արագորեն լա-
վանում ե յակուտների կյանքը: Եինվում են նոր տներ, հիմնը-
վում են դպրոցներ, հիմանդանոցներ, ակումբներ և կուլտուրա-
կան ուրիշ հեմնարկներ:

Զարդացնում են անասունների տվելի կաթնատու ցեղեր: Յերեան
են դալիս խոտ հարող մեքենաներ: Կազմակերպվում
են խորհրդային տնտեսություններ, վորտեղ. յակուտները սովո-
րում են, թե ինչպես պետք ե պահել և խնամել անասուններին:

Յակուտիայի հարավային մասում սկսել ե ուժեղ կերպով
զարդանալ յերկրագործությունը: Մինչեւ հեղափոխությունը մի-
այն հարուստներն եյին հացահատիկ ցանում: Զքավորները վոչ
վլարելահող ունեյին, վոչ ել դործիքներ: Հացը յերբեք չեր բա-
վականանում, չքավորներն ալյուրի հետ ծառի կեղև եյին խառ-
նում:

Այժմ դյուղատնտեսությունն արագորեն բարելավվում ե:
Խորհրդային տնտեսություններում ստանում են ցրտին դիմա-
ցող հացահատիկների տեսակներ: Դաշտերում յերեացին տրակ-
տորներ: Այժմ յակուտ դյուղացին ուտում ե բավականաչափ
քանակությամբ հաց, իսկ բանջարեղենը դարձել ե նրա սովորա-
կան ուտելիքը:

Արագործն զարդանում և բանջարաբուծությունը։ Նույնիսկ
վերիսոյանուկ քաղաքում մշակում են բանջարեղեն։

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության մեջ տայգան շատ մեծ տարածություն և բանում։ Անտառի այսչափ մեծ տարածություն վոչ մի պեսություն չունի ամբողջ աշխարհում։

Մեր անտառը միշտ դրավիկ և ոտարաղդի վաճառականների ուշադրությունը։ Շատ փայտ ինքներս ենք դործածում, բացի այդ, մեծ քանակությամբ փայտ արտահանում ենք ուրիշ յերկրներ և ստացած վոսկով այնտեղ դնում մեղ համար անհրաժեշտ մեջնաներ։



Նկ. 23. Անտառահատում


Ցարական փայտարդյունաբերող վաճառականներն անխնակերպով վոչնչացնում եյին անտառի ընդարձակ տարածություններ։ Նրանք միայն շահույթի մասին եյին մտածում։ Նրանք բոլորովին չեյին հետաքրքրվում անտառային տնտեսության զարգացմամբ։ Անտառը կտրատում եյին այնպիսի տեղերում, վոր-

տեղից փայտը հեշտ եր տեղափախել, այն եւ՝ դետափերին, տայ-
գայի ծայրամասերում, այսինքն՝ հենց այն տեղերում, վորտեղ
պետք եր պահպանել անտառը:

Խոպառ կտրատելով, վոչնչացնելով անտառը, նրանք բոլո-
րովին չեցին մտածում նրա վերականգնման մասին:

Աշխանանքներն անտառում տարվում եյին ամենահասարակ
ժեռով: Փայտամթերման վրա աշխատող մարդկանց մասին ար-
դյունաբերող վաճառականները չեցին ել մտածում:

Խորհրդային Միության մեջ անտառային անտեսությունը
կառուցվում ե սոցիալիստական հիմունքներով: Կազմակերպիած



Նկ. 24. Գետով անտառանյութ են տեղափոխում

Են անտառային արդյունաբերական անտեսություններ: Նախկին
«ձմեռային» վորչերի փոխարեն, վորտեղ ապրում եյին անտա-
ռահատները, այժմ փայտամթերման տեղերում շինվում են լու-


սավոր հանրակացարաններ, տներ: Բանվորներն աշխատում են բրիգադներով:

Անտառային տնտեսությունն այժմ ունի իր մշտական բանվորներ: Աշխատանքը մեքենայացվում է, գործադրվում են մեխանիկական սղոցներ: Փայտը դուրս են բերում անտառից տրակտորներով:

Անց են կացնում նոր ճանապարհներ, շինում են առանձին սառցե ճանապարհներ, վորոնց վրայով հեշտությամբ սահում են գերանների ծանր բեռ ունեցող սահնակները, մաքրում են գետային ճանապարհները, վորոնցով լողարկում են փայտ:

Այստեղ, վորտեղ առաջ վոչ մի մարդ չկար, և տեր ու տնօրենն արջն եր, այժմ աճում են նվայտահատների բնակավայրեր, վորտեղ հիմնվում են կոռզերատիվներ, դպրոց և հիվանդանոց:

Փայտը գործ ե ածվում շենքերի համար, բացի այդ՝ նա հում նյութ ե հանդիսանում մի շարք արտադրությունների համար: Փայտից պատրաստում են զանազան շինանյութեր, թուղթ և քիմիական նյութեր:



Նկ. 25. Թողթի փարրիկան տայգայում

Այդ հումքն ավելի ձեռնտու յե վերամշակության յենթարկել տեղում, քան թե անմշակ ձևով տեղափոխել զանազան տեղեր և այդ փոխադրության վրա ծախսեր անել:

Զեռնտու յե նույնպես ոտար յերկրների վաճառել պատրաս-
տի շնանյութեր և փայտամշակման ուրիշ նյութեր, քան թե
հում, անմշակ փայտ :

Եել ահա մութ, անանցանելի տայգայում կառուցվում են և
արդեն աշխատում են սղոցաբաններ, թղթի ֆարբիկաններ և քե-
միսկան գործարաններ :

ՄՈՐԹԵՂԵՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մորթեղենի տնտեսությունը տայգայում շատ ե ընկել: Վոր-
ոռը առջներն անխնա կոտորում եյին գաղաններին, վոչչացնելով
տայգայի մուշտակեղենի հարստությունը: Թանդարժեք գաղան-
ների քանակը հետղհետե քչանում եր: Մուշտակեղենի հարստու-
թյունը կորսուց աղատելու և մորթեղենի արդյունաբերությու-
նը բարձրացնելու համար, Խորհրդային իշխանությունը սահմա-
նում ե մուշտակուր գաղանների արդելավայրեր: Այդ արդե-
մայլայրերում բոլորովին արդելած ե դազանի վորոր: Դա ար-
վում ե այն նպատակով, վոր մուշտակավոր գաղանները բաղ-
մանան:

Հիմնվում են նույնպես գաղանաբուծական ֆերմաններ, վոր-
տեղ պահպատ են ամենահաղթաղջուտ դազանները՝ սամույրները,
կղաքիսները, կնդումները, ուև դարչնագույն աղվեսները: Ըն-
տըրլում են առանձնապես արժեք ունեցող ցեղեր: Նրանց լավ
խնամում են և կանոնավոր կերամկում: Նրանց վրա կատարում
են գիտական գիտողություններ և փորձեր:

Կաղմակերպվում են վորսորդական կոլեկտիվ անտեսու-
թյուններ:

ՏԱՅԳԱՅԻ ՀԱՆԱԵՐ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տայգայի ողտակար հանածոները մինչեւ վերջին որերս քիչ
եյին ուսումնասիրված: Վերջին տարիների հետազոտություննե-
րը ցույց տվին, վոր տայգայի ընդերքում շատ հարստություն-
ներ են թաղնշած՝ վասկի, արծաք, կապարի և ցինկի հանքեր,
քարածուխ, աղ, զրաֆիտ:


Շատ մեծ նշանակություն ունի Կուղնեցկի ավաղանի քարածությունը : Կուղնեցկը գտնվում է Նովոսիբիրսկից գեղի հարավ-արևելք : Հետախուզումները ցույց տվին, վոր Կուղնեցկի ավաղանում չափազանց շատ առաջնակարգ ածուխ ե գտնվում :

Վերջին տարիներում մեծ չափերի յև հասել Կուղնեցկի ածխի արդյունաբերությունը : Կուղնեցկի ավաղանի ածուխը բացառիկ նշանակություն ունի մեր արդյունաբերության զարգացման համար :

Առաջադրություն: ԽՍՀՄ-ի քարտեզի վրա դանք թե տայպայի վոր անդերում են տարածված հետեւյալ սղանակար հանածոները՝ քարածուխ-Կուղնեցկի ավաղան (Նովոսիբիրսկից դեպի հարավ-արևելք), նավթ (Պեչորայի վտակի վրա և Ուրալյան լեռների արևմտյան լանջաւմ), վասկի (Լենա գետի և Ալյան վտակի վրա) :

ԲԵՐԵԶՆԻԿԻ

Ուրալից արևմուտք կամայի ճախ ափին գետի առակ փլու-վում. ե զանազան աղերի խառվ, վորի հաստությունը հասնում ե



500 մետրի : Աղերից վուանք դործ են ածվում կերակրի մեջ—
դա մեր սպառական, կերակրի աղն ե : Մյուսները հրաշալի պա-
րաբուանյութեր են վարելահողերի համար—դրանք կալիումի ա-
ղերն են :

Աղերի այդ հարսնատ շերտերից վաչ հեռու գտնվում են քա-
րածխի և Փոսֆորիտների շերտեր : Ցարական իշխանության ո-
րով այդ հոկայական հարստությունները շատ քիչ եյին շահա-
դործվում :

Ներկայում այստեղ կառուցված ե ամենամեծ քիմիական
կոմբինատոն ամբողջ աշխարհում՝ Բերեզմիկիմ : Սա բաղկացած
ե մի քանի խոշոր գործարաններից, վորոնք այստեղ արդյունա-
հանող ոգտակար հանածոներից պատրաստում են զանազան պա-
րաբուանյութեր : Յերեկոները մի քանի տասնյակ կիլոմետր հե-
ռավորությունից կարելի յե տեսնել կոմբինատի բազմաթիվ շեն-
քերը, վորոնք հեղեղված են ելեկտրական լույսով :

Այստեղից պարաբուանյութեր կամա դիտով տեղափոխում
են ԽՍՀՄ-ի զանազան տեղերը, կուեկտիվ և խորհրդային տնտե-
սությունների անձայրածիր դաշտերը :

Քարտեղի վրա ցույց տվեք Բերեկիմին :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՅԴԱՅՈՒՄ

Անտառի շահագործումը և ժուշտակեղենի արդյունաբերու-
թյունը կազմում են տայգայի գոտու անտեսության հիմնական
ճյուղերը և բնակչության հիմնական զբաղմունքը :

Բայց տայգայի բնակչությունը զանազան սննդամթերքների
կարիք ունի : Նրան պետք են հաց, բանջարեղեն, կաթնեղեն,
միս : Այս բոլորը հեռվից ըերելը դժվար ե և ճեղնուու չե : Այդ
պատճառով անհրաժեշտ ե, վոր սննդամթերքներից ինչ վոր
հնարավոր ե տեղն ու տեղն արտադրվի :

Տայգայի բնական պայմանները դյուղատեսեաությամբ
դրազվելու համար նպաստավոր չեն . այստեղ հողերն արգա-
վանդ չեն, լինում են ցուրտ գարուններ և վաղահաւ սառնամա-
նիքներ : Սակայն փորձերը ցույց տվին, վոր չնայելով այդ

բնական դժվարություններին, տնտեսությունը կանոնավոր տառնելու դեպքում, այստեղ կարող են զարգանալ և յերկրագործությունը, և անասնապահությունը:

Այստեղ կարող են հասնել գյուղատնտեսական բույսերից շատերը, վորոնք մինչ վերջին ժամանակներն աճում ենին միայն ավելի հարավ ընկած վայրերում:

Մշակվում են այդ բույսերից այնպիսի տեսակներ, վորոնք կարողանում են ցրտին դիմանալ:

Կաթնատու անասունները կարող են ավելի տուատ կաթ տալ, յեթե նրանց լազլ խնամեն և ընտրեն ցրտին դիմացող տեսակներ:

Խորհրդային իշխանությունը վորոշել և բարձրացնել տայր գայի զոնայի գյուղատնտեսությունը:

Կազմակերպվում են խորհրդային և կուեկտիվ տնտեսություններ: Խորհրդային տնտեսություններն իրենց որինակով ցույց են տալիս, թե ինչպես պետք է վարել յերկրագործությունը, բանջարաբուծությունը, ինչպես պետք է խնամել անասուններին:

Խորհրդային իշխանությունն առանձնապես մեծ ուշադրություն դարձրեց տայրայի զոնայում կաթնատու անասունների բարձրացման վրա, վորովհետեւ այստեղ դետերի հովիտներում, լավ մարզագետիններ կան:

ԳԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՏԱՅԳԱՅՈՒՄ

Տայրայում արագորեն առաջ և գնում քաղաքների կառուց ցումը:


Եերկուս և կես տարվա ընթացքում հեռավոր արևելյան տայրայում աճեց մի նոր քաղաք՝ կոմսոմոլսիք՝ Ամուր գետի վրա:

Դա ԽՍՀՄ-ի ամենանոր քաղաքներից մեկն է:

Խորհրդային Միության զանազան քաղաքներից տայրա յեկան կոմյերիտականները, կտրտեցին տայրայի մի հողակտորի ծառերը, չորացրին ճահճները և Ամուր գետի ափին բարձրա-

յասվ նոր արդյունաբերական քաղաքը՝ իր դործարաններով ու ֆաբրիկաներով, իր յերկնարկանի տներով, հիվանդանոցներով, ակումբներով, խանութներով, կինոներով։

ԽՍՀՄ Փիղիկական քարաեղի վրա գտեց Կոմսոմոլսկ քաղաքը։



Նկ. 27. Քաղաքի շինարարությունը յակուտական տայգայում

ՀԱՅՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԳԱՐՀՆԵՐԸ ՏԱՅԱՐՈՒՄ

Տայգայի միջով յերեք յերաթուղի յե անցնում։

Մի գիծն անցնում է տայգայի հարավային ծայրամասով—
Լենինգրադ—Վոլգդա—Գերմ—Նովոսիբիրսկ—Իրկուտսկ—
Վլադիվոտովկ։ Մյուս յերկու գիծը տայգան լայնությամբ են
կտրում։ 1) Լենինգրադ—Մուրմանսկ և 2) Վոլգա—Արխանգելսկ։

Տարաեղի վրա յուրց ավել այդ յերկորսուղիները։

Տայդայի տնտեսության զարդացման համար մեծ նշանակուն
թյուն ունեն զետային ճանապարհները և Հյուսիսային ծովային
ճանապարհները։ Նրանցով կարելի յե դուրս բերել տայգայի ընա-
կան հարստությունները և ներմուծել տայգա անհրաժեշտ բոլոր
իրերը։

Բայց միայն ջրային ճանապարհները բավական չեն։ Անհրա-
ժեշտ են նաև լավ ավտոմոբիլային ճանապարհներ հենց տայգա-
յի մեջ։ Յեղի այժմ այդպիսի ճանապարհները չինվում են։ Մի,
քանի տեղերում նրանք արդեն ձգվում են հարյուրավոր կիլո-
մետր յերկարությամբ։

Փայտն արագածաման և փոխադրություն հետեւյու ծովային
նավահանդսաններով։ Արխանդելսկ, Սուրբմանսկ, Իդարկա։

ՍՏԱԼԻՆԻ ԱՆՎԱՆ ՍՊԻՏԱԿ-ԲԱԼԹԻԿՄԱՐՑԱՆ ԶՐԱՆՑՔ

Մեծ հարստություններ են թողնված տայղայի հյուսիս-
արևմտյան անկյունում, Ֆինլանդիայի սահմանի մոտ։ Հրաշտ-
մի անտառները տալիս են արժեքավոր փայտ և մուշտակնեղին։
Ուդասկար հանածնների մեջ կան յերկաթի և պղնձի հանքեր։
Վոսկի, պարարտանյութեր՝ դաշտերի համար։ Առատությամբ
գտնվում են այնպիսի դիմացկուն շինանյութեր, ինչպիսին դրա-
նիտներն են։ Արագածոս գնտերն ու ջրվեժները կարող են շատ
ելեկտրականություն ունալ։

Բայց ցարական ժամանակներում ոա մի վայրենի, խուզ
անկյուն եր։

Այստեղ վոչ յերկաթուղիներ կային, վոչ ել հաղորդակցուո-
թյան հարմար ճանապարհներ։

Քարտեզի վրա գտեց տայգայի հյուսիսարևմտյան անկյունը։

Դեռ 300 տարի առաջ նշում եյին, վոր կարելի յե տայգայի
հյուսիսարևմտյան մասի գետերի և լճերի միջոցով միացներ
երար հետ յերկու ծով։ Բալթիկ և Սպիտակ։

Ցարական ժամանակ շատ եյին խօսում ու գրում այլ մաս-
պին, բայց ծովերն այնպես ել մնում եյին չմիացած։

Այն, ինչ չարեց ցարական կառավարությունը, անսովոզ առ

Դադությամբ իրազրոցեց խորհրդային էշխանությունը՝ 20 ամսական ընթացքում շինվեց աշխարհում ամենամեծ՝ Ստալինի ամվան ՍՊԻՏԱԿ-ԲԱԼԹԻԿՄԱԿԱՑԱՆ ԶՐԱՆՑՔԸ, վորեւ յերկարությունն և 200 կիլոմետր:



Ֆի. 28. Բալթիկ ծովից դեպի Սպիտակ ծով նախապարհի սխնդանի


Այդ ջրանցքն Ռենդայի լեճը միացնում է Սպիտակ ծովին:
Տեսականությամբ կարելի յեն 5-6 որում լենինգրադից հասնել Սպիտակ ծովը: Առաջ այդպիսի ճանապարհորդության համար 17 որեր պետք է վորովհետեւ պետք եր պատուել Յելլրոպայի հյուսիսային ափերի շուրջը:

Սպիտակ-Բալթիկ ծովյան ջրանցքը մեծ նշանակություն ունի ամբողջ Խորհրդային Միության համար:

Այդ ջրանցքով հյուսիսից Խորհրդային Միության զանազան տեղերն ուղարկվում են՝ փայտ, ձուկ, մորթի, պարարտանյութեր, շինանյութեր, իսկ զեպի հյուսիս փոխադրվում են՝ հաց, նավթ, աղ, լայն գործածության զանազան ապրանքներ:

Ջրանցքի յերկարությամբ կառուցվում են ելեկտրական կա-

յաններ, Փարբիկաններ և դործարաններ։ Ելեկտրական պայման
լույսը հեղնդում և նախկին «չվախեցող թռչումների յերկերը»։
Բազմաթիվ Փարբիկաններում և դործարաններում պատրաստվում
են տախտակներ, Փաներներ, թուլթ։ փայտի թափթփուկներից՝
շաքար, սիրուլ, քացախ, սպիրու։ Անտառների անանցանելի թառ



Նկ. 29. Տայգան Սպիտակ-թալքիկ ծովյան ջրանցքի սուս։

Վուտներով կանցնեն խճուղիներ, կուլանան ելեկտրական գնացքներ։

Զորացած ճահիճներում հացահատիկները հատկ կղցեն, կուց
բախուտերը կանաչին կտան։ Յեվ այնտեղ, վորտեղ դեռևս քեզ
առաջ թափառում եր «անտառների բրդոտ տերը»—արջը, կուց
ռաջանան մեծ բնակալայրեր ու քաղաքներ։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ ՆԱՎԱՀԱՆԳԻՒՏԸ


Քարտեզի վրա գտեք Արխանգելսկ նավահանգիստը։

Ցածրադիր ճահճոտ ափերի միջև փռվել ե Հյուսիսային
ֆլինայի լայն գետաբերանը։ Յերկնակամարը ծածկվել ե մուշ

ամպերով՝ յուսըլ են Դվինայի կտտաղի ալիքները։ Բայց այդ ափերի կյանքն ուրախացնում է մարդուն։ Վոր կողմն ել նայում են—ամենուրեք փայտի անվերջ պահանակներ։ Իրար վրա գարս ված են հաստ գերաններ, սղոցած տախտակները թեթև աանիքների տակ իրար վրա գարսված են բարձր կիտվածքներով։

Վերամբարձ մեքենաները ջրեց դանդաղորեն հանում են, բարձրացնում վեր և առա կանոնավոր կերպով իրար վրա դարսում ամրող ծառեր, վորոնք բերովել են լաստերով։

Վաղում են ելեկտրոքարշի վագոնները, շաշում են սղոցարանի սուլիչները, սուլում են շոգենավերը։ Հարյուրավոր յեկվոր բանվորներ տոսլրակներն ու սղոցները մեջքներին լցվում են նավահանգիստը։



Նկ. 30. Սղոցագործարան

Հազարավոր սոտք շոգենավեր յեկել են Արիանդելսկ բարձելու տախտակ և գերան։ Նրանց բարձր կայմերն ու դույնը դույն գրաշակները ծածկել են գետը։

Այդ շողենավերը մեր փայտը անդախոխում են աշխարհի
բոլոր ծայրերը :

Անցնում են մեր սուսական ձկնորսանավերը, մարդատար
շողենավերը, զորոնք բանվորներ են տեղափոխում։ Բայց նրանք
կորչում են փայտանյութի մասսայի մեջ։ ամենուրեք փայտե
տախտակներն ու գերանները բռնել են Դվինայի ափերը, փայտը
բարձր կիսովածքով դարսված և ոտար նավերի վրա։ Նավահան-
դիստներում բարձում են գերաններ և տախտակներ։

ԻԳԱՐԿԱՆ—ԲԵՎԵՌԱՑԻՆ ՆԱՎԱՀԱՆԴԻՍ

Բարտեզի վրա գտեք Իգարկա նավահանդիսը։

Յենիսեյի աջ ափին վերջին տարիներում աճեց նոր նավահան-
դանդիսութ Իգարկան։

Դեռևս քիչ առաջ Իգարկայի կառուցողներն առանց իս-



Նկ. 31. Իգարկա նավահանգիստը

բույկների և պահապանների չեյին կարողանում քնել։ արջերը
միշտ կարող եյին գիշերով նրանց վրա հարձակվել։

Նորածին քաղաքի տուաջին բնակիչները կտրված եյին ամբողջ աշխարհից, սննդամթերքների մեծ նեղություն եյին կրում, համառորեն պայքարում եյին տայգայի և բնեուային ցրտերի դեմ:

Յերկու տարվա մեջ բնեուային շրջաններից դեպի Հյուսիս տուաջացավ արդյունաբերական մի նոր քաղաք և նավահանդիստ Փայտի համար այստեղ գտվիս են ոտար շոգենալիք բարձումը կատարվում և համարյա անընդհատ գիշեր-ցերեկ:

Մխում են գործարանային ծխնելույզները: Այստեղ յերեք տղոցարան փայտ են սղոցում Յելբոպա և Ամերիկա արտահանելու համար: Նրանց կողքին մի քանի ուրիշ գործարաններ չկատրաստում են Փաներա և փարտանյութի մասսա, վորից կարելի յե պատրաստել թուղթ և արհեստական մետաքս: Աշխատում են պահածոների գործարանները: Քաղաքի դիմաց գտնվող կղզու վրա տրակտորներով մշակում են հողը: Բանջարանոցներում աճում են կարտոֆիլ, կաղամբ, սոխ և ուրիշ բանջարեցներ:


Մարզագետիններում արածում են ազնվացեղ կաթնատու անասուններ: Քաղաքի մեջ կան շատ տներ, լայն փողոցներ, ոյուններ՝ ելեկտրական լարերով: Աշխատում ե ելեկտրակայանը: Խոսում ե ռադիոն: Կառուցել են մինոտ, բացել գոլրոցներ, հիվանդանոցներ, տօլարան: Ակումբում կարդում են դասախոսություններ, դեմքուցումներ, գաղմակերպվում են յերեկույթներ:

- Վարժություն 1. Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք տայգայի դուտին:
 2. Գրեցեք տայգայով հոսող գետերի անունները:
 3. Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք Վերինյանոկ, Յակուտսկ, Բերեզիկի, Արխանգելսկ, Մուրմանսկ, Խոմրկա քաղաքները:
- Աշխատանք արտադայան ժամանակ: Կազմեցեք ալբում «Տայգայի դուտի» քեմայով:

ԽԱՌԻՆ ԱՆՏԱՌԻՆԵՐԻ ԶՈՒԱ

Խառն անտառների դոնան դտնվում է տայգայից դեպի հարավ-արևմուտք: Տայգայի և խառն անտառների միջի սահմանն անցնում է մոտավորապես Լենինգրադ—կաղան գծով: Հարավում սահմանն անցնում է կաղանից մինչև կիեվ:

Քարտեզի վրա դուռ խոռն անտառների դուտին:



Նկ. 32. Խառն անտառների գոնայում

ՍԱՎԱՌՆԱԿԻ ՎՐԱՅԻՑ

Այս հոդվածը կարդալիս հետևեցիք քարտեղին:

Սավառնակը մի կողմը թողեց վիշնի վոլոչեկ քաղաքը և բռնեց Մոսկվայի ուղղությունը: Ամեն ուղղությամբ տարածվում են ընդարձակ անտառներ: Նրանք հաճախ ընդհատվում են կարտած անտառատեղերով և ճահիճներով: Յերկիրը հարթ երայց նրա վրա տեղ-տեղ յերեսում են բլուրներ: Ներքեւում նըշմարվում են գետերի արծաթափայլ թելերը և բազմաթիվ գյուղեր շրջապատված վարելահողերով և բանջարանոցներով:

Վորքան առաջ ենք զնում, այնքան արի հաճախ ենք հանդիպում կտրտված անտառատեղերի, վարելահողերն ավելի յեն ընդարձակվում, գյուղերն ավելի շուտ-շուտ են պատահում:

Ահա յերեսում ե վուշի գմրուխտե մեծ դաշտը: Մեկը, մյուս... Մրանք վուշի կոլեկտիվ տնտեսությունների ցանքերն են և կալինին քաղաքի մոտ ընկած ե տորֆի ճահիճների ընդարձակ տարածություն: Միում են կալինինի գործարանների և ֆաբրիկաների ծխնելույզները:

Սավառնակը կտրում ե Վոլգայի գալարվող միայլուն ժառանգնելը և դարձյալ ներքեռում անտառների ծածկոց, միայն ավելի նոռը, քան հյուսիսում։ Յեզ նրանք այժմ խոզի մազի պես բիգրիզ չեն կանգնած—նրանց ուրվազծերն ավելի քնքույշ ե։ Այս անտառներում սաղարթավոր ծառերն ավելի շատ են։

Դարձյալ մի հարյուր կիլոմետր և և սավառնակը կլինի Մոսկվայում։ Մեկը մյուսի հետեւից արագորեն անցան գյուղեր, բանվարական նոր ավաններ, Յերևացին գործարաններ և Փարբիկաներ։ Անտառներն ավելի և նոորացան։ Միայն առանձին շետրաված անտառի մնացորդներով կարելի յէ դադափար կադալ, վոր մի ժամանակ այստեղ նույնպես անտառ և յեղել։

Բնությունը նահանջել և մարդու կամքի առաջ, շինարարության առաջ։

Աւա և Մոսկվան... Մոճու, կեչու և բարդու անտառի փոխարեն—գործարանային ծինելույզների անտառ և քարե շենքերի զանգված։

ԻՆՉՊԵՍ Ե ՓՈԽՎԵԼ ԽԱՌՆ ԱՆՏԱՐՆԵՐԻ ԳՈՏՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ


Հին ժամանակ խառն անտառների ամբողջ դուսին ծածկված եր անանցանելի մութ անտառներով։

Այս աեղերը հարմար եյին մարդկային հին բնակատեղերի համար։ Անտառը պաշտպանում եր թշնամիների հանկարծակի հարձակումներից։ Դեպի ամեն կողմն ցըվող գետերը հաղորդակցության լավ ճանապարհներ եյին անանցանելի անտառներում։ Մարդը կացինը ձեռքին հարձակվեց անտառի վրա։ Նա կտրեց ծառերը, մաքրեց բացուտը ցանքի և բնակարանի համար։

Մութ անտառները հետղհետե վոչնչանում եյին, նոորանում։ Նրանց փոխարեն յերևան եյին գալիս վարելահողեր, մարդագետիններ, առաջ եյին գալիս գյուղեր։

Անցան դարեր, և մարդկանց շատ սերունդների աշխատանքից խառն անտառների դուսին բոլորովին անճանաչելի դարձավ։

Անտառի ահադի՛, տարածություններն անհետացան։ Նա



Նկ. 33. Ֆարբրիկաներն ու գործարանները խառն անտառների գոտում

պահպանվեց միայն քիչ տեղերում։ Զորացվել են հաղարավոց հեկտար ճահճիներ։

Անհետացած անտառների վոխարեն առաջացան գյուղեր, քաղաքներ, գործարաններ և ֆարբրիկաներ, ամեն ուղղությամբ տարածվեց յերկաթուղիների ցանցը։ Հոկտեմբերյան հեղափոռ խությունից հետո փռվեցին կոլեկտիվ, խորհրդային տնտեսություններ։ Ամեցին նոր հոկա գործարաններ։ Անտառների ու այս գիների կանաչի մեջ կտուցվել են նոր քաղաքներ։ Վերակառ ոռոցվել ու ծառազարդվել են հին քաղաքները։

ԽԱՌԻ ԱՆՏԱՐԱԴՐՄ

Գետակի սփին ապառան և գտել մի փոքրիկ գյուղ։

Գյուղի շուրջը տարածվում են դաշտեր, իսկ նրանցից հետո անտառներ... Ամառային շոգ որերին անտառը հրապուրում է իր խիտ կանաչով, խոստանալով ստվեր և հով։ Անտառի յեղը ծածկվել է ջահել կեչիներով։ Արեկի ճառագայթներն անցնում են ճյուղերի միջով և պայծառ թեր զցում խոտի խիտ, գույնզգույն զորդի վրա։ Կապտին են տալիս գանգակիները, կարմրին և տալիս մեխակը, առվուրյու։ Տեղ-տեղ հրապուրիչ հայացքով նայում են մորու հաստապտուղները։

Յեղից հեռու անտառն աստիճանանորար խոտնում է, կեշիները քշնենում են։ Սրանց խեղջում են բարձր, մութ յեղնի-

Արը: Նրանց մեջ աճում են լորի, բարդի ծառեր։ Սպիտակին
են տալիս փոխնոր խոշոր ծաղիկները։ Խոտն այլես այնպես իիտ
չեն և ծաղիկներով խայտարղետ չե։ Հատապտուղներ քիչ կան։
Բայց դրանց փոխարեն պատահում են ոսմկեր։ Հաճախ լսվում
ե, թե ինչպես ե կտցահարն իր կտուցով ծեծում հին յեղենու
կեղեր։ Յերբեմն ծառերի ճյուղերի մեջ յերեսում ե սկյուռի շեկ
ժուշտակը։ Ճուղողում են անտառային թուչունները։

Ահա մի մեծ բացուտ։ Շարքերով դարսված են կտրտված
փայտերը, իսկ նրանց մեջ ցցված են թարմ կոճղեր։ Անտառն
այտաեղ հենց այս ձմեռն են կտրատել, իսկ բացուտն արդեն
ծածկվել ե բարձր, հյութալի խոտով, կոճղերի շուրջը բռնել են
մոռի թփերը։

Բացուտից հետո դարձյալ անտառ, բայց ճահճոտ։ Ամառը
նրանց միջով անհնարին ե անցնել։

ԽԱՐՆ ԱՆՏԱՐՆԵՐԻ ԶՈՆԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խառն անտառների զոնայի մակերեսույթը, ինչուս քարտե-
ղից յերեսում ե, դաշտավայր ե։ Մեջտեղով, հյուսիսից դեպի
հարավ անցնում ե Միջին Ռուսական բարձրությունը։

Հարթության մակերեսույթը միանգամայն հարթ, ուղիղ չե,
այլ բլրուու։

Գետերը։ Քարտեղից յերեսում ե, վոր խառն անտառների զո-
նայով հոսող գետերն սկիզբն են առնում Միջին Ռուսական բարձ-
րությունից և հոսում տարրեր ուղղությամբ դեպի հետեւյալ
յերեք ծովերը՝ Բալթիկ, Սև և Կասպից։

Այս հողվածը կարդալիս հետեւյեք քարտեղին։

Քարտեղի վրա դանեք Վոլգա, Դոն, Դնեպր, Արևմտյան Դվինա դետերը։

Ցույց տվեք նրանց ամբողջ հոսանքը, սկսած ակունքից մինչև գետարե-
քանը։

Խառն անտառների զոնայի կլիման ավելի տաք ե, քան տայ-
դայի կլիման։ Արևմուտքից, տաք Արևանտյան ովկիանոսի կող-
մից փչող քամիները բերում են տաքություն և մեղմացնում են
ձմեռային սառնամանիքները։ Զմեռն այստեղ տեսում ե մոտ 5

ամիս, բայց ավելի տաք եւ, քան թե տայգայում։ Ամառն ավելի
յերկարատե եւ եւ տաք, քան տայգայում։ Հաճախ անձրևներ են
գալիս։ Անձրևներ բերում են Առլանտյան ովկիանոսի կողմից վէջ՝
քամիները։

Հոդերը մոխրահողային են, ինչպես տայգայում։ Բայց
նրանք այստեղ ավելի արդավանդ են։

Բուսականություն և կենդանական աշխարհ։ Կիմայի մեղ-
մության չնորհիվ այստեղ աճում են սաղարթավլոր ծառերի զա-
նազան տեսակներ՝ կեչի, կաղնի, թխկի, հացի, լորի։ Փշատերեւ
և սաղարթավլոր ծառերն աճում են իրար հետ խառը մեջընդմեջ։
Տորֆային ճահիճներն ընդարձակ տարածություն են բռնում։

Չատ առաջ այստեղ գտնվում եին մութ, անանցանելի ան-
տառներ։ Այժմ նրանք համարյա բոլորովին կտրտված են։ Մեծ
տարածությամբ անտառներ մնացել են միայն ամենաարեւմտյան
մասում, Պոլսայում։

Այնտեղ, վորտեղ անտառները պահպանվել են, ապրում են
նույն անտառային դազաններն ու թուունները, ինչ վոր տայ-
դայում։

ԻՆՉԳԵՍ Ե ԶԱՐԴԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՌՆ ԱՆՏԱԲՆԵՐԻ ԶՈՆԱՅՈՒՄ

Նայեցեք քարտեղին։ խառն անտառների զոնայում նշանակ-
ված են յերկու մեծ արդյունաբերական շրջան։ Մեկը Լենինդրա-
դի մոտ, իսկ մյուսը՝ Մոսկվա, Կալինին, Խվանովո, Գորկի քա-
ղաքների միջև։


Այս շրջաններում առաջ ել շատ գործարաններ ու Փարբե-
կաներ կային։ Բայց արդյունաբերությունն այստեղ առանձնա-
պես զարգացավ խորհրդային իշխանության որով։

Հիմնովին վերակառուցվեց Մոսկվայի և Լենինդրադի ար-
դյունաբերությունը։ Այստեղ կառուցվեցին և սարքավորվեցին
բարձր իշխանությունը գործարաններ։ Այս գործարաններում սկսե-
ցին առաջին անգամ պատրաստել զանազան բարդ մեքենաներ,
և ՍՀՄ-ի տարրեր տեղերում կառուցվող գործարաններն ու ե-
լեկարակայանները սարքավորելու համար։

ԱՃԵց ավտոմորիլային գործարան—ըլիդանս Գորկի քաղաքում : Ընդարձակվեցին ու վերակառուցվեցին Մոսկվայի, Կալինինի և Խվանովյանի մանվածքային գործարանները :

Խառն անտառների զոնայում արդյունաբերությունը դարձանում է մեծ թափով : Շատ վառելիք ե ոլետք, վորպեսդի նրա բազմաթիվ դործարաններն ու Փարբիկաններն անընդհատ աշխատեն :

Սկսեցին արդյունահանել այն տորֆը, վորն այսուեղ, անանեանելի ճահիճների մեջ դարերով ընկած եր առանց շահագործ-



Նկ. 34. «Կրասնի ռկույարը» ելեկտրոկայանը

Ֆան : Իսկ վորպեսդի այդ տորֆի շահագործումն ավելի ձեռքնառու լինի, սկսեցին ելեկտրակայաններ շինել Հենց տորֆային ճահիճներում : Արդեն կառուցված են և տորֆով աշխատում են յերկու մեծ ելեկտրակայան—Լենինի անվան Շատուրայի ելեկտրակայանը, վոր Մոսկվայից 135 կիլոմետր դեպի արևելք և չանվում և հարմար հոկտեմբերը—Լենինդրադի մոտ :

ԼԵՆԻՆՑԱՆ ՇԱՏՈՒՐԱ

Քարտեղի վրա գտնեց Շատուրայի ելեկտրոկայանը :

Այնտեղ, վորանդ այժմ կանգնած է Շատուրայի ելեկտրակայանը, անհիշելի ժամանակներից ձգվում եյին տորֆային անահցանելի ճահիճներ :

Հազարամվոր հեկտար տարածությամբ փռվում եյին ճահանուններ և վտիտ ցածլիկ անառառներ:

Տեղադրությունների մեջ գտնվող կղղիների վրա պատռվարված եյին խղճուկ ծառեր:

Ճահանունները գյուղացիների համար աղքատություն և հիվանդացւթյուններ եյին բերում: Մինչդեռ նրանք իրենց մեջ մեծ հաջողություն եյին պարունակում—դա տորֆի հսկայական պահան եք:

Յեկալ 1917 թ. Հոկտեմբերը: Բանվորներն իշխանությունն իրենց ձեռքը վերցրին: Սկսվեց արյունահեղ պատերազմ սպիտակիների հետ: Գեներալները գրավեցին այն տեղերը, վորոնց ստացվում եր նավթ և ածուխ: Մոսկվայի արդյունաբերական կենտրոնը մնաց առանց վառելիքի:

Գործարանների կրակարանները հանդչում եյին: Բնակարանները մնացել եյին առանց տաքացնելու: Ելեկտրական լազարներն աղոստ լույս եյին արձակում:

Ինչ դնով ել լինի պետք եր վառելիք ճարել:

Հիշեցին Շատուրայի ճահիները:

Վ. Ի. Լենինը կարգադրեց անմիջապես շահագործել տորֆը:

Աշխատանքը յեռաց: բանվորներն սկսեցին առուներ փորել և ճահճի ջուրն այդ առօններով հեռացնել, տորֆն արդյունահանել:

Այդ տորֆը յերկաթուղով փոխադրվեց Մոսկվա և արդյունաբերական այլ կենարոններ:

Տորֆի արտահանությունը Շատուրայում հետզհետե ընդարձակվում եր: Բայց այդ տորֆը ձեռնութեալ չեր յերկաթուղով տեղափոխել—դրա համար շատ վագոններ եյին պետք:

Այն ժամանակ մի այսպիսի միտք ծաղեց՝ ճահճի մոտ մեծ ելեկտրակայան կառուցել և ելեկտրական հոսանքը հաղորդիչներով ուղարկել ուր վոր պետք ե:

Անցալ մի քանի տարի: Յեկ Շատուրայի ճահիների վրա աճեց տորֆով աշխատող ամենամեծ ելեկտրակայանն ամբողջ աշխարհում:

15 տարի աշխատում և Շատուրայի ելեկտրակայանը: Նրա

Արակարաններում այրվում ե Շատուրայի տորֆը : Աշխատում են շողեմեքնաները և գոլորշով շարժման մեջ դնում տուրբինները (թևերով անիցննր), իսկ դրա հետ և ելեկտրական մեքնաները :

Պատովում են ելեկտրական մեքնաները, և հոսանքը հաղորդիչներով վաղում ե դեպի զանազան կողմեր, տասնյակ և հրայրավոր կիլոմետր :

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խառն անտառների զոնայում շատ հին ժամանակներից սկսած պրաղվում են յերկրագործությամբ :

Այս զոնայի հողերը փոքր ինչ ալելի արդարանդ են, քան տայգայում : Կիման ավելի մեղմ ե, յերկրագործության համար ալելի հարմար :

Հին ժամանակներից սկսած այստեղ մշակում են դարի, վարսակ, հաճար, վուշ, կանաչի, կարտոֆիլ և ուրիշ բանջարեղեն : Վերջերս շատ տեղերում սկսել են մշակել նաև ցորեն :

Բայց խառն անտառների զոնայում գյուղատնտեսությունը յերեք չի կարողացել հոգալ նույնիսկ գյուղացու կարիքները : Հողը կարիք ուներ լատ մշակման և պարարտացման, իսկ ցարական կառավարության և կալվածատերների կողմից քայլքայլած գյուղացիները չեյին կարողանում հողը կանոնավոր մշակել և չափ պարարտացնել : Շատերն անասուններ և անհրաժեշտ յերեքագործական գործիքներ ու մեքնաներ չունեյին, և այդ բոլորի հետ միասին գյուղացիները միշտ կախված ենին կուլակներից ու կալվածատերներից :

Մինչդեռ արդյունաբերական աճող կենտրոնների համար աննշամթերքների պահանջն ավելի ու ավելի յե մեծանում, և գյուղատնտեսությունը կարող և հոգալ այդ կարիքը :

Գյուղատնտեսությունը վճռական վերակառուցման և յենթարկվում խառն անտառների զոնայում :

Կոլեկտիվ անտեսություններն ամրացել են, Ստեղծվել են խորհրդային պնտեսություններ, մեքնատրակտորային կայան-

Ներ: Խոշոր արդյունաբերական կենտրոնների շուրջը զարգացել են բանջարաբուծություն և կաթնատվություն:

ԽՍԹՆ ԱՆՏԱՌՈՆԵՐԻ ԶՈՒԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Անտառն անտառների զոնայում ապրում են գլխավորապես քելուուսներ և ոռուսներ:

Ալպառեղ և գոնզում ԲԵԼՈՌՈՒՍԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (ԲՍԽՀ):

Քարտեղի վրա դանեք այդ հանրապետությունը:

Աշխատավոր բելոռուսներն աղքատիկ կյանք եյին վարում ցարի ժամանակ: Ճահիճների ու անտառների մեջ եյին ցրված բելոռուսական գյուղերը:

Անրերի հողերը ցածր բերք եյին տալիս: Ալպառեղ շատ քիչ եր զարգացած արդյունաբերությունը: Բնակչությունը խավար եր ու անգրադնտ: Սակավաթիվ դպրոցներում ուսուցանում եյին միայն ոռուսներն լեզվով:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխատավոր բելոռուսների կյանքը խիստ բարելավվեց:

Բելոռուսիայում շատ մեծ ուշադրություն ե դարձվում անանցանելի ճահիճների զեմ պայքարելու գործի վրա, քանի վոր այդ գյուղատնտեսության գլխավոր չարիքն ե հանդիսանում: Զորացվել են վիթխարի տարածությամբ ճահիճներ, վորոնց տեղն այժմ նոր վարելաշողեր—արտներ են փոխած:

Զորացված տորֆային ճահիճների վրա հիմնվել են ելեկտրոկայաններ, վորոնք այժմ եներգիա յեն տալիս գյուղատնտեսությանն ու արդյունաբերությանը: Բարելավվում, կարգավորվում ե գյուղատնտեսությունը:

Կառուցված են փայտի վերամշակման բաղմաթիվ գործարաններ:

Բելոռուսիայում արագորեն զարգանում ե նաև կուլտուրական կյանքը: Այնտեղ մտցված ե ընդհանուր ուսուցում: Բելոռուսական լեզվով հրատարակվում են բաղմաթիվ թերթեր ու ժուռնալներ: Ստեղծվել են մի քանի տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատություններ ու գիտահետազոտական ինստիտուտներ:

Նայեցեք քարտեզին։ Դուք տեսնում եք, վոր խառն անտառների զոնայով ամեն կողմից դեպի Մոսկվա յեն ուղղվում յերկաթուղիներ։ Տանեամենկ յերկաթուղի միանալով իրար հետ կաղմում են Մոսկվայի յերկաթուղային հանգույցը։ Նրանք Մոսկվան, իսկ դրա միջոցով նաև մոտակա արդյունաբերական կենտրոնները միացնում են Միության հեռավոր շրջանների հետ։

Խառն անտառների զոնայի արդյունաբերական կենտրոններում արտադրած զանազան ապրանքների միլիոնավոր տոններ այդ ճանապարհներով հոսում են դեպի Միության տարրեր անկյունները։ Այդ նույն ճանապարհներով համառակ ուղղությամբ փոխադրվում են բազմազան հում նյութեր, ինչպես և վառելիք։

Քարտեզի միջոցով պարզեցեք թե Մոսկվայից ապրանքները յերկաթուղով ուր կարելի յէ փոխադրել։

Բայց մենք դեռևս բավարար չափով յերկաթուղիներ չունենք։ ճանապարհների մեջ ամենից եժանը ջրային ճանապարհն եւ։

Նայեցեք ԽՍՀՄ-ի քարտեզին։ Խառն անտառների զոնայում սկսվում ե Յեվրոպայի ամենամեծ դետը։ Դա Վոլգան ե։ Նա կաղմում ե ջրային մի յերկար ճանապարհ։ Ավելի քան $3\frac{1}{2}$ հազար կիլոմետր յերկարություն ունի նա։

Զախ կողմից Վոլգայի մեջ թափվում են մեծ դետեր, կըտքելով խիտ անտառները։ Աջ կողմից Վոլգայի մեջ ե թափվում Ոկա դետը Մոսկվա վտակով, վորի վրա գտնվում ե Մոսկվա քաղաքը։

Վոլգան կտրում ե խառն անտառների համարյա ամբողջ զոնան, հոսում ե կալինին, Գորկի, Կաղան քաղաքների մոտով և եր Ջրերը տափաստանների միջով տանում ե դեպի Կասպից ծովը։

Բայց Մոսկվա քաղաքը, վոր խառն անտառների զոնայի ամենախոշոր արդյունաբերական կենտրոնն ե և ամբողջ Խորհրդակային Միության մայրաքաղաքը, այդ մեծ ջրային ճանապարհի

Մի կողմն ե մնում: Վոլգայի մեծ չողմնավերը Մոսկվա սակա-
վաջուր գետով չեն կարողանում մոտենալ Մոսկվա քաղաքին:
Մինչդեռ Վոլգան բախականին մոտ ե հոսում:

Քարտեղի վրա ցույց տվեք այն տեղը, վորտեղ Վոլգան ամենից շատ
և ժամանում Մոսկվային:

Խորհրդային կառավարությունը վորոշել ե ջրային ճանա-
պարհը հացնել Մոսկվա քաղաքը, Մոսկվա գետը նախարկելի
դարձնել: Վոլգայի և Մոսկվայի միջև պետք ե փորձի մի
ջրանցք: Վոլգայի ջուրը կթափալի Մոսկվա գետի մեջ և սա ջրա-
ռաստ կդառնա:

Յեղ կարմիր մայրաքաղաքից կանցնեն ջրային ճանապարհ-
ներ դեպի մեր ընդարձակ յերկրի տարբեր կողմերը՝ դեպի Կաս-
պից, Բալթիկ և Սպիտակ ծովերը:

Ջրանցքում կառան մեծ չոպենավերը: Նրանք Մոսկվա կրե-
րեն միլիոնավոր տոնն բեռ՝ հաց, աղ, ձուկ և նալթ, քար և
փայտ:

Իսկ Մոսկվայից կտանեն ուրիշ բեռներ՝ մեքենաներ, զանա-
ղան գործվածքներ և գրքեր Միության բոլոր ժողովուրդների
համար:

173 եջում զետեղված քարտեղի վրա ցույց տվեք Մոսկվայից
դեպի Կասպից, Բալթիկ և Սպիտակ ծովերը տանող ջրային ճա-
նապարհը:

Վարժուրյան. Կոնտուրային քարտեղի վրա նշանակեցիք իտան անառա-
ների դատին:

Նշանակեցիք այն տեղը, վորտեղ պետք է ջրանցք անցնի:

Գորկի, Կալինին, Խվանչավալ:

Նախակեցիք այն տեղը, վորտեղ պետք է ջրանցք անցնի:

Աշխատանք արտադասայն ժամանակ: Կազմեցիք ուրու Շետն անառաների
դատի թեմայով:

4. ԱՆՏԱՌԱՄԱՓԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆ- ՆԵՐԻ ԶՈՆԱ

Անտառներից հարավ հազարավոր կիլոմետր տարածության
վրա ձգվում ե սեահողային տափաստանների դինան:

Նա սկսվում է ԽՍՀՄ-ի արևմտյան սահմանի մոտ, անցնում
և Միության ամբողջ յելքողական մասով և ժողով Ասիայի
խորքերը:

Անտառները միանդամից չեն փոխվում տափաստանի: Մկրտ-
քում անտառների մեջ յերևան են գալիս անտառազուրկ տեղեր—
անտառները փոխվում են անտառատափաստանների: Դեպի հա-
րավ անտառազուրկ տարածությունները հետզետե՛ շատանում,
են, իսկ անտառները՝ քչանում: Վերջապես, անտառները բոլո-
րովին անհետանում են և տեղի տալիս միապաղաղ տափաստան-
ների:

ԽՍՀՄ-ի յելքողական մասում սևահողային տափաստաննե-
րը հասնում են մինչև Սև և Աղովի ծովերը:

ԱՆՏԱՐՆԵՐԻ ԳՈՏՈՒՑ ԴԵՊԻ ԱԵՎԱՀՈՂ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԸ

Քարտեղի վրա գտեք անտառատափաստանի դութիւն:

Այս նկարագրությունը կարգվելու հետևեցեք «քնտկան գոնաներ» քար-
տեղին:

Մենք Մոսկվայից Ռոստով ենք գնում:

Մոսկվան իր գործարանային ծխնելույզների, անտառով ու
հազարավոր քարակոփ շենքերով մեր հետեւ և մնացել:

Վագոնի պատուհանի առաջով սլանում են անտառներ, դաշ-
տեր, մարգագետիններ:

Տեղ-տեղ անտառը բոլորովին մոտենում է յերկաթուղունք:

Անցնում են մուգ կանաչագույն յեղենիները, սպիտակաբում
կեշմները, կարմրաբուն սոճիները, կաղամախիները, իսկ յեղե-
րին՝ բաղմապիսի թփուտներ ու ծաղիկներ:

Մի ժամանակ այստեղ ընդարձակ անտառներ են յեղել:
Բայց հիմա այդ անտառները խիստ կտրտվել են:

Վորքան ավելի հարավ եռ գնում, այնքան նվազում են ան-
տառները:

Անցնում ենք Ռկա գետը: Այստեղ շրջակայքն ավելի բաց է:

Վորոնեժի տակ անտառները բոլորովին չքանում են:

Շուրջդ, վորքան աչքը կիտրի՝ անծայրածիր բաց տարա-



Նկ. 35. Վոլգա գետը

ծություններ են։ Տեղ-տեղ միայն փոքրիկ անտառներ կան կուչ յեկած ձորերում ու զետերի մոտ։


Ամեն կողմ փուլած և ցորենի անծայր ու անսահման արտերի ալեհուզ ծովը։

Մենք գնում ենք Մոսկվայից Ռոստով։ Մոսկվան իր գործարանային ծխնելույզների անտառով և հազարավոր քարե շենքերով հետ մնաց։

Տեղ-տեղ յերեսում են արևածաղկի վառ վոսկեպույն բծերը, հասնող ձմերուկներով բոստաններ։

Իսկ նրանց շուրջը դարձյալ նույն հարթ, տեղ-տեղ թեթեվակի բլրոտ արտերի տարածությունները։

Մինչև Ռոստով մեր զնացքն անցնում եր հացահատիկների ծովին միջով։ Յերեսում ե գործարան, հացի ելեվատոր, դյուզ... և դարձյալ ամեն ինչ թաղվում ե անծայր արտերի մեջ։



Նկ. 36. Ամտառատափաստան

Սևահողային տարփաստանները ներկայումս համարյա ամբողջապես հերկված են և վերածված արաերի, այդիների և բանջարանոցների:

Բոլորովին ուրիշ տեսք ունեյին նրանք 200 տարի առաջ: Այն ժամանակ չկային ցորենի արաեր, չկային բռնասաններ ու արևածաղկի դաշտեր, չկային նույնիսկ գյուղեր: Ընդարձակ տարածության վրա ճգլում եյին տափաստաններ, վորոնց գեռ մարդու ձեռքը չեր դիպել:

Ներկայումս խոպան, զեռևս չհերկված տափաստաններ շատ քիչ աեղերում են մնացել:

ՍԵՎԱՀՈՂԱՍԹԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթի կազմությունը: Նայեցնք ֆիդիկական քարտեղին. այն տարածությունը, վոր բռնված և սկսողային տափաստաններով, համարյա ամբողջապես կանաչ դռւյն ունի:

Սևահողային տափաստանները—ցածր հարթություններ են, այսինքն՝ դաշտավայրեր են:

Մի քանի տեղերում, որինակ, արևմտյան սահմանի մոտ, իսկ արևելքում Վոլգա գետի և Ուրալյան լեռների մոտ, կանաչ դունյը փոխվում է դեղինի։ Այդ նշանակում է, վոր տափաստանների մակերևույթն այստեղ բարձրանում է։

Դեղին բիծ գտնվում է նաև Ազովյան ծովից դեպի Հյուսիս։ Սա սևահողային տափաստանների արևմտյան մասի ամենաբարձր տեղն է — Դմինցի լեռնապարը, այստեղ գտնվում է ամբողջ աշխարհին հայտնի Դմիրասը։

Սևահողային տափաստանի հարթությունն ամեն ուղղությամբ կտրոված է ձորերով և ձորակներով, բայց դա աշխարհագրական քարտեզի վրա չի յերևում, վորովհետև քարտեզը շատ փոքր մասշաբ ունի։

Գետեր։ Տափաստանային հարթության արևմտյան մասով դեղինիկ զալարումներով անցնում են մեծ դետեր՝ Դմիստր, Դմեպը, Դմոն, Դմինց վտակով, կուրան, Վոլգա, Ուրալ։ Տափաստանային հարթությունն այստեղ թեքված է հարավային ծովերի կողմը և այդ պատճառով հիշած բոլոր դետերը հոսում են դեպի այդ ծովերը։

Ուրալից դեպի արևելք գտնվող տափաստաններում դետեր քեզ կան։ Համարյա բոլորն ել թափում են Որ դետի մեջ։

Քարտեզի վրա դատեք հիշյալ դետերը։ Իմացեք, թե այդ դետերից յուրաքանչյուրը վորտեղ է սկսվում և վոր ծովն և թափում։

Կլիմա։ Սևահողային տափաստանները գտնվում են ԽՍՀՄ-ի հարավային մասում։ Այդ պատճառով այստեղ ավելի տաք է, քան թե Միության շատ տեղերում։ Սևահողային տափաստաններում ամառը շատ չոք և լինում և յերկար՝ 4—5 ամիս։ Նա սկսվում է արդեն մայիսին։ Ամառն ոգը չոք և լինում։ անձրևները շատ հազվադեպ են։ Եերեմն փչում են չոք և տաք քամիներ։ Նրանք գալիս են թուրանի հարթավայրից։

Կարճատև աշխանը հետևում է ձմեռը։ Ձմեռն այստեղ յերկարատև չե և ավելի մեղմ է, քան թե անտառային դուռում, բայց սառնամանիքները յերբեմն հասնում են մինչև 20°-ի։ Հաճախ փչում են հյուսիս-արևելյան ցուրտ քամիները ձյունի կո-

թորիկ առաջացնելով, վորոնք ճյունով ծածկում են գյուղեր, ճանապարհներ, գնացքները կանգնեցնում են ճանապարհին:

Գարունը շուտ գալիս ե և շուտ ել անցնում: Զյունոտ ճմեռվանից հետո, հողի և ողի մեջ գարնանը շատ խոնավություն ե դրավում: Արեգակը տաքացնում ե ողը և հողը: Կարճ ժամանակամիջոցում ամբողջ բնությունն արթնանում է:

Վորքան դեպի արեւելք ենք գնում, սեահողային տափառաններն այնքան ավելի շատ են հետանում ծովերից: Քամիներն ավելի ու ավելի քիչ խոնավություն են բերում: Կլիման ավելի ու ավելի յե չորանում: Զմեռվա և ամառվա տարբերությունն ավելի զգալի յե դառնում:

ԽՈՊԱՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՈՒՄԱԿԱՆ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՄՀՅԼ

Գարունը տարվա ամենալատվ յեղանակն ե տափառանում: Զմեռային ցուրտ բուքերից ու փոթորիկներից հետո մարտին սկսվում ե յեղանակը տաքանալ: Զյուն արագությամբ հալվում է, և խոնավությամբ հազեցած հողը ծածկվում ե կանաչող խոտերի խայտարդետ գորգով: Ամենից առաջ ծաղկում են ճնձաղիկը, կակաչը: Նրանք անցյալ տարի իրենց սոխարմատների և վերաբերությունների մեջ հավաքել են սննդարար նյութերի պաշար: Հետո յերևում են զանազան խոտեր:


Փափուկ, խոտե գորգի մեջ խմբվում են բղեղներ, ծղրիդներ: Նրանք ստիգմած չեն սնունդ վորոնել: Այդ սնունդն առատորեն գտնվում ե նրանց շուրջը—դա տափաստանի բույսերն են:

Հաճախ պատահում են գետնասկյուռներ, արջամկներ և ուրիշ կրծողներ: Սրանք նույնպես բույսերով են կերակրվում, հետևալես և նրանց համար առատ սնունդն արդեն պատրաստ է:

Հարավից ալսոտեղ են գալիս հազարավոր տեսակ-տեսակ թռչուններ: Ամբողջ որը գարնանային ողը լցված ե թռչունների աղմուկով: Յենք թռչունների այդ ամբողջ բազմությունն աղբում ե տափաստանի միջատների և բույսերի հաշվին:

Բայց ահա գալիս ե ամառը: Արևմանին անխնա այրում ե, շոգն ակօվում է: Հոդը չորանում ե: Գարնանային բույսերը ծաղկու-

Թաղի են լինում և թառամում։ Նրանք արդեն կարողացան իրենց վերաբնատներում և սոխարմատներում սննդի առատ պաշար հավաքել հաջորդ տարվա համար։ Նրանց այժմ փոխարինում են այնպիսի բույսեր, վորոնք կարողանում են տանել շոգը, չոր յեղանակը և խոնավության ռակավությունը հողում։



Նկ. 37. Տափաստանում կոմբայններով հալաֆում են հացահատիկը

Տափաստանն ամառվա պես ծածկված ե հրաշալի գորգով, բայց այժմ արդեն ուրիշ գորգ ե, վորն այնպես վառ չե, ինչպես գարնան գորգը։ Տափաստանից չվում են գարնանն այստեղ յեկած թռչունները։ Տափաստանում մնում են մեծ արոսները, արտույտները և տափաստանային արծիվները։

Գալիս ե ամառվա յերկրորդ կեսը։ Շոգերը սաստկանում են։ Ողում մի կաթիլ խոնավություն չկա։ Տափաստանն անձանաչելի

յեղ դառնում։ Զորանում, վոչնչանում են այն բոլոր բույսերը, վորոնք հրաշալի ծաղկե դորգով ծածկում ենին առափառտանը։ Թառամեցին նրանց ծաղիկները, սերմերը հասունացան և նրանք ավարտեցին իրենց կյանքի ըրջանը։

Մնացին միայն շողին ու յերաշտին լավ դիմացող բույսերը — փետրախոտը, բարձվենյակը և զանազան մոլախոտեր։



Նկ. 38. Փետրախոտ




Նկ. 39. Բարձվենյակ

Այժմ տարիաստանը մուդ-դեղնավուն գույն ունի։

Սա առափառտանի բուսականության վերջին հերթափոխությունն ե։ Թվում ե, թե տափառտանը մեռած ե։ Բայց ցերեկվա լոռությունը խարումիկ ե։

Մինչև արևածագը տափառտանում մեծ կենդանություն ե տիրում։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ վեր են թռչում կաքալների յերամները։ Խոտերի միջից լավում ե միջատների անվ'րջ յերաժշտությունը։ Ամեն քայլափոխում ուղղում են դեանա-

Ակյուտները : Տափաստանի վրայով ճախրում և տափաստանային
արծիվը, վորոնելով իր վորոց :



Նկ. 40. Մեծ արու


Բայց ահա շողը թուլանում է : Սկսում են վչել ցուրտ քա-
միներ : Գալիս և աշունը—սերմերի ցրելու ժամանակը : Քամու
ուղղությամբ գլորվում և և իր սերմերը ցրում յերնջնակը : Լռում
են թռչուններն ու միջատները, պատրաստվում են ձմեռային քուն
մանել նաև մի քանի կրծողներ :

Հոդը : Հազարավոր կիլոմետր տարածության վրա ձգվող այս
ամրող տափաստանը ծածկված և սևահողի հաստ շերտով :

Ամրող աշխարհում վոչ մի յերկիր արդավանդ սևահողի
այսպիսի ընդարձակ տարածություն չունի :

Դարեր շարունակ տարեց—տարի հողը ծածկվում եր տա-
փաստանային խիտ խոտերով : Այն տարի աճում, թառամում
ու փառում եյին այդ խոտերը : Այսպես շատ դարերի ընթացքում
հողի մեջ հավաքվում եր բուսահող, առաջանում են սևահողի
հաստ շերտ :

Սևահողը սևահողային տափաստանների հիմնական հաբը—
տությունն է :



Նկ. 41. Գետնասկյուռ



Նկ. 42. Ցմախ

Յեթե չկա կորստաբեր յերաշտ, ապա տափաստանը տալիս ե հրաշալի խոռ, առաս հացահատիկներ, զանազան պտուղներ և բանջարեղեն :

Առաջադրություն. Սևահողային տափաստանների կլիման. Համեմատեցեք տայրայի կլիմայի հետ :

Համեմատեցեք սևահողային տափաստանների բուսականությունը տայրայի բուսականության հետ :

Պատմեցեք, թե ինչպես ե տարվա ընթացքում փոփոխվում բուսականությունը սևահողային տափաստաններում. Ինչո՞ւ յէ նա փոխվում :

Սևահողային տափաստանների հողը համեմատեցեք տայրայի հողի հետ ինչո՞ւ սևահողային տափաստանների հողի մեջ լատ բուսական կա:

ԱՆՏԱԲԱՏԱՓԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Անտառափափաստանի և սևահողային տափաստանների բնակչությունը խիստ ե: Այդ բնակչության մի մասը յերկրագործությամբ ե զբաղվում:

Տափաստանի գյուղերը մեծ են, բայց հաճախ հեռվից չեն յերեսում, վորովհետև գտնվում են ձորակներում, վորտեղ հեշտ ե ջուր ստանալ, գետերի և գետակների ափերին: Կավոլ ծեփած սպիտակ խրճիթները ձգվում են յերկար շարքերով:

Բնակչության մյուս մասն աշխատում ե գործարաններում և զանազան հիմնարկություններում:



Նկ. 43. Գյուղ տափաստամում :

Այստեղ, ինչպես և խառն անտառների զոնայում շատ կան մեծ քաղաքներ, դործարաններ և ֆաբրիկաներ։ Ամեն ուղղությամբ անցնում են յերկաթուղիներ։

Անտառատափաստանի և սևահողային տափաստանների զոնայում գլխավորապես ապրում են ուկրաինացիներ և ռուսներ։

Վատ եյին ապրում բոլոր աշխատավորները ցարական Ռուսաստանում։ Բայց ռուսներից ավելի ևս վատ ապրում եյին աշխատավոր ուկրաինացիները։ Նրանք իրավունք չունեյին նույնական ազատորեն խոսելու իրենց մայրենի լեզվով։ Հիմնարկներում բոլորը պարտավոր եյին ռուսներն խոսելու։ Ուկրաինացիների յերեխանները պարտավոր եյին սովորելու ռուսական դպրոցներում։ Ուկրաինական լեզվով գրքեր համարյա բոլորովին գոյություն չունեյին։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխատավոր ուկրաինացիների կյանքն արմատապես փոխվեց։ Կաղմակեց Ուկրաինացին Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Արդգործն զարգանում է Ուկրաինայի տնտեսությունը և կուտուրական կյանքը։

Գտեք քարտեղի վրա Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԸ ՍԵՎԱՀՅՈՂԱՅԻՆ
ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Սևահողային տափաստանները ԽՍՀՄ-ի հացի շտեմարանն են :
Սևահողային տափաստանները—դա տասնյակ հաղարավոր հեկ-



Նկ. 44. Ցոքեն, յեղիպտացորեն, բազուկ, արևածաղիկ,
ծխախոտ, բամբակ

տար վարելահողեր, բոստաններ, այգիներ և բանջարանոցներ են :
Սևահողային տափաստանների գլխավոր գյուղանական
կուլտուրաներն են՝ ցորենը, յեղիպտացորենը, ճակնդեղը, արև-
վածաղիկը, ծխախոտը, բամբակը :

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՎԱՐՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԸ ՍԵՎԱՀՅՈՂԱՅԻՆ
ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԸ

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը սևահողային տա-
փաստանների ամենալավ և արգավանդ հողերը խոշոր կալվա-
ծաւերերին և կուլակներին եյին պատկանում :

Միջակ և չքավոր գյուղացիներն ունեյին վոքքիկ հողարա-
ժներ, քիչ անառուն, հաճախ զուրկ եյին լինում ամենակարե-
վոր յերկրագործական գործիքներից, չունեյին արոտավայրեր և
անասուններ ջրելու աեղեր : Այդ պատճառով ել նրանք միշտ
ստրկական վիճակի մեջ եյին գտնվում կուլակների և կալվա-
ծաւերերի ձեռքին :

Մանր գյուղացիությունը տնտեսությունը վարում եր նախ-
նական ձևերով և քայլարդում եր :

ԻՆՉՊԵՍ Ե ՎԵՐԱԿԱՌՈՒԹՎՈՒՄ ՍԵՎԱՀՈՂՍՅԻՆ
ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԴՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

Սևահողային տաղիաստանների գյուղացիական տնտեսությունները վարում են իրենց տնտեսությունը կոլեկտիվ կերպով :

Հիմնվել են և այժմ հիմնվում են հարյուրավոր հացահատիկային և ուրիշ գյուղատնտեսական խորհրդային՝ տնտեսություններ։ Խորհրդային տնտեսություններն իսկական գյուղատնտեսական ֆաբրիկաներ են։ Խորհրդային տնտեսություններում համարյա ամբողջ աշխատանքը մեքենաներով են կատարում :

Հիմնվել են հարյուրավոր մեքենա-տրակտորային կայաններ։ Մեքենա-տրակտորային կայանները և խորհրդային տնտեսություններն իրենց տրակտորներով և որինակելի տնտեսությամբ ռդնում են կոլտնտեսականներին՝ կանոնավոր վարել կոլեկտիվ տնտեսությունը :

Շարունակ պայքար եւ տարվում յերաշտի և վնասատու կենդանիների գեմ :

ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ ԲԵՐՔԱՀԱՂԱՔԻ ԺԱՄԱՆԱԿԻ

Քարտեզի վրա գտեք Ողեստան։

Մենք գնում ենք տակնաստանով, Ողեստայից 100 կիլոմետր հեռու։

Ինչպես և փոխվել տաղիաստանը վերջին տարիներում։ Ամեն տեղ անց են կացրել նոր ճանապարհներ։ Ճանապարհների յերկու կողմը, նրանց ուղղահայաց կերպով և իրարից վորոշ հեռավորության վրա ձգվում են կանաչ, նեղ հողի կտորներ։ Դրանք թփերի տնկարաններ են։ Նրանք վարելահողերը պաշտպանում են քամուց, պահում են ձյունը և խոնավությունը։

Ճանապարհին մենք շարունակ հանդիպում ենք բեռնակիր տղամորիլների և տրակտորների։ Տրակտորներն իրենց հետեւցած են տալիս գութաններ և տափաններ, տեղափոխում են բեր-

զինով և նավթով լի ծանր ցիստերներ, սայլեր, վորոնց վրա նստած են բանվորներ: Ծանտպարհի յերկարությամբ անցնում են մի քանի շարք հեռախոսալրեր:

Ահա հեռվում յերեսում և մի ավան: Դա մեքենա-տրակտո-րային կայանն ե: Շարքերով կանգնած են աղյուսից շինած յերկար շենքեր—գարաժներ: Նրանց մեջ «ձմեռում են» հարյու-րավոր տրակտորներ, կալսող մեքենաներ և տրակտորին կցվող գործիքներ: Նրանցից դենը դտնվում են տներ կայանի տրակտո-րիստների, բանվորների և ծառայողների համար: Մեջտեղը ճա-շարանը և ակումբն ե: Մենք կայան չենք մտնում: Այժմ այնաև դատարկ ե: գնում ենք հարեան կոլեկտիվ տնտեսության դաշ-տերը, վորտեղ ներկայումս աշխատում են կայանի տրակտոր-ները և մեքենաները:

Արդեն հեռվից տեսնում ենք փոշու ամպեր և լսում ենք մե-քենաների աղմակ: Մոտենում ենք աշխատողներին: Դաշտում կալսում են:

Աշխատում են յերեք կալսող մեքենաներ, վորոնք չարժման մեջ են դրվում տրակտորների միջոցով:

Այստեղ են կոլեկտիվ տնտեսության համարյա բոլոր հասա-կավոր տղամարդիկ ու կանայք: Կալսող մեքենայի շուրջը մար-դիկ խումբ-խումբ աշխատում են: Վոմանք բարձրացել են դեղի դլուխը և խուրձերը քանդում են ու դցում մեքենայի մեջ: Մյուս-ները պարկերը պահում են մեքենայի տակ, վորտեղից թեթև չա-չյունով թափվում են մաքուր ցորենի հատիկները: Ուրիշներն անվերջ շարքով պարկերը տեղափոխում են կալի մյուս ծայրը: Այստեղ հատիկները տեսակավորում են:

Կալսող մեքենաների հսկայական ցնցիչ մասերով անընդհատ թափվում ե հարդը: Կանայք հարդը հեռացնում են մեքենայից, տղամարդիկ ճարպկորեն ընդունում են այդ հարդը և դարսում քիչ հեռու կանգնած մամուլի վրա: Մի բոպեյից հետո հարդը մամուլից դուրս ե նետվում մեծ վոկեգույն հակերի ձևով:

Ժամանակ առ ժամանակ մոտենում են բեռնակիր ավտոմո-րեիները, բարձում հացահատիկով լցված պարկերը և տեղափո-խում ելնվածոր:

Աշխատանքը կատարվում է այնպես, ինչպես Փարբիկայում:

Մանոթանալով կողեւկտիվ տնտեսության կալսելու աշխատանք-ների հետ, մենք ուզեւորվում են դեպի ելեվատորը :

Մինչև ելեվատոր 5 կիլոմետր եւ, և այս ամբողջ տարածության վրա իրար հետեւից ձգվում են հացահատիկով բարձած ավտոմոբիլներ և սայլեր :

ՊԱՅՏԱՐ ՅԵՐԱՇՏԻ ԴԵՄ

Յարական Ռուսաստանի սեահողային տափաստաններում յերաշաբաց ամեն տարի տասնյակ հազարավոր հեկտար ընթառիչ էր պաշանում :

Տափաստանների արեւելյան մասում բերքը վէանում եր չոք և տաք քամիներից : Այս տեղերում հաճախ վիզում և տաք քամի, ինչպես շիկացած հնոցից : Դրանից ցորենի հատիկները թոշնում, և չորանում են : Կախվում են ձմերուկների և սեխերի տերեկներն ու սերմնաբողբոնները, կարծես յեռացող ջուր են ածել նրանց վրա . թոշնում և ծառերից դետին են ընկնում պատուղները :

Խորհրդային իշխանությունը մեծ պայքար և մզում գյուղօտանտեսության այդ մեծ չարիքի դեմ : Տարածվում են յերաշտին գիմացող կուլտուրաներ (բույսեր) :

Մզվում և պայքար հողի կանոնավոր վարի համար—այնողին սի վարի, վորը պահպանում եւ խոնավությունը հողի մեջ :

Պայքար և մզվում մոլախոտերի դեմ, վորոնք մեծ քանակությամբ խոնավություն են վերցնում հողից և այսպիսով չորացնում են հողը :

Կաղմակերպվում են «Ճյունարշալներ»—զանազան միջոցառումներ ձյունը դաշտում կուտակելու համար :

Ավելի չոր տեղերում կիրառում են վոռոզում—անց են կացնում ջրանցքներ, վորոնցով ջուր են բերում մոտակա գետերից կամ ուրիշ ավաղաններից :

Անջուր են սառըին Զավոլժյեյի հողերը : Այստեղ չկան գետեր և այլ ջրամբարներ :

Հաճախակի լինում են յերաշտներ, չոք տաք քամիներ, փոքր փոթորկներ :

Զկա ջուր—և հարուստ սեահողերը չնշին բերք են տալիս :
Անանձրեւ տարիները հացի բերքը փշանում և և արտերը մնում
են խանձված, դատարկ :

Արգավանդ սեահողի միլիոնալոր հեկտարները մնում են ան-
տրուս : Մինչդեռ նրանք կարող եյին տալ միլիոնավոր ցենտներ
ցորեն : Միայն թե ջուր լինի :

«Զավոլժյեյի սեահողային տափաստանները պետք և հաց
տան ԽՍՀՄ-ի աշխատավորներին»—այսպես վորոշեցին կոմու-
նիստական կուռարկցությունը և խորհրդային կառավարությու-
նը : Վոլգայի վրա Կամչյին քաղաքի մոտ պետք և կառուցվի
պատվար և հզոր հիգրոելեկտրական կայան : Պատվարը և ելեկ-
տրական ջրմուղ կայանները Վոլգայի ջուրը կրաքարացնեն և
ջուրդայի ջուրը ջրանցքներով հՀոսի Զավոլժյեյի արտերը :

Ստորին Զավոլժյեյի սեահողերը ջուր կստանան և առառ
քերք կտան : Կիոխովի նաև ստորին Զավոլժյեյի աշխարհագրա-
կան քարտեղը—«գետերն»ու «գետակները» կկարեն նրան դանա-
շան ուղղությամբ, կերեան «լճեր» և «լճակներ» :

Քարտեղի վրա գտեք Կամչյին քաղաքը :

ՈԴՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԼ ՑԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ

Սեահողային տափաստանները միայն արդավանդ հողերով
չեն հարուստ : Նրա ընդերքում թաղնված են կարեւոր ոգտակար
հանածոներ—մանավանդ շատ կա քարածուխ և յերկաթահանք :

Քարածխի հսկայական խավեր են դտոնվում Դոնեցի լեռնե-
րում :


Դաեւ Դոնեցի լեռները քարտեղի վրա :

Այս ոմբողջ տարածությունը, վարաել քարածուխ և դտոն-
վում, կոչվում է Դոնեցի քարածխային տվազան (Դոնքաս) :

Դոնեցի քարածխային տվազանը — համամիութենական
հնաց ե :

Դոնքասից դեպի արևմուտք, Դնեպրի մյուս կողմը, Կրիվայ-

Մոգ քաղաքի մոտ, ինչպես և Դրիմի թերակղզու վրա, Կերք քաղաքի մոտ գտնվում են յերկաքահանքի մեծ պաշարներ։ Դրիմի թերակղզու վրա ստացվում են նաև աղ։



Նկ. 45. Մակենի գործարան

Քարտեզի վրա դատը յերկաթահանքի և աղի հՀած տեղերը։ Դատը կրկնվուի մոգ և Կերք։

Դոնբասը, Կրիվոյ-Ռոգը և Կերչը—խոշոր արդյունաբերական շրջաններն են։

Այսուղ կան տասնյակներով ու հարյուրներով ածխահորեր յերկաթի հանքահորեր և մետաղաղործական գործարաններ։

ԴՈՆԲԱՍՆ ԱՌԱՋ ՑԻՄԱ

Դոնբասը միշտ այնպիսին չի յեղել, ինչպես այժմ և։ Հին ժամանակ այսուղ տարածվում եյին անմարդաբնակ, ամառն առ բերց խանձվող տափաստաններ։

Միայն վոչխարի բազմաթիվ հոտեր եյին տրածում այսուղ է իսկ տեղ-տեղ ել պատահում եյին հացահատիկի արտեր։

Ցեղ յերկրի ընդերքում անողութ ընկած եյին քարածիթ հսկայական պաշարներ։

Բայց ահա անցյալ դարի կեսին սկսեցին յերկաթուղիներ չենել, արդյունաբերությունն սկսեց արագորեն դարձանալ։ Հարակավոր եր վառելիք և յերկաթ։ Կապիտալիստները շուտով իմաստացան Դոնբասի քարածիթ և հանքային հարստությունների մասսին։ Սկսեցին Դոնբասում հողեր դնել ածխահորեր ու մետա-

դադործական դործարաններ չինել։ Տափաստանը ծածկվեց ած-իսահորերով։ Տանյակ հաղարիներով աղքատացած դյուզացիներ յեկան այսուեղ և դարձան հանքափորեր և մետաղագործարան-ների բանվորներ։ Աճեցին գործարանային շենքերը։ Զանազան տեղերում վառվեցին հնոցներ։ Զանազան ուղղությամբ ձգվեցին յերկաթուղիներ։ Նրանց վրայով սկսեցին շարժվել հանքավել և ա-ծուխով բարձած դնացքներ։

Խղճուկ խրճիթները շրջապատեցին հանքահորերն ու գործարանները։ Նրանց մեջ ապրում եյին բանվորները։

Որական 13 ժամ նրանք աշխատում եյին խոճավլ հորերում։ Ամբողջ աշխատանքը կատարում եյին ճեռքով, առանց մն-քենաների։

Իրենց ծանր աշխատանքի համար հանքափորերն ստանում եյին կոպեկներ, խոկ կապիտալիստ տերերը նրանց աշխատան-քով հարստանում եյին։

Այժմ հին Դոնբասը չի կարելի ճանաչել։

Նրա նախկին կապիտալիստ-տերերից հետք անդամ չի մնա-ցել։

Դոնբասի բնական հարստությունները, հանքահորերն ու գործարանները դարձել են Խորհրդային Սոցիալիստական Հան-րապետության սեփականությունը։

Շինվել են տասնյակներով նոր ածխահորեր, վերակառուց-վել, ընդարձակվել և կառուցվել են մետաղագործական նոր գոր-ծարաններ։

Բոլորովին նոր հիմքերի վրա յե դրվում աշխատանքը հան-քահորերում։



Նկ. 46. Աշխատանքն ածխահանքն ցարիզմի ժամանակ։

Հանքահարերի մեջ իջևավել են մեծ քանակությամբ՝ հստող մեքենաներ : Այժմ համարյա ամրող աշխատանքը մեքենաների միջազգ և կատարվում : Հանքափորերն սկսել են աշխատել վոչ թե ցրված, ջոկ-ջոկ, այլ կաղմակերպված, բրիդաղներով :


Փոխվել և ե Դոնբասի բանվորների կյանքը :

Նրանց համար կառուցվել են լուսավոր, առողջ տներ : Ամեն տեղ ճաշարաններ, Փարբիկա-խոհանոցներ, մանկապարտեղներ, մառերներ : Տները շրջապատված են ծառերով և այդիներով : Անց են կացվում ջրմուղներ, կոյուղի, շինուած են բաղանիքներ :

ԴՆԵՊՐԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԱՑԱՆԸ (ԴՆԵՊՐՈԴԵՍԼ)

Քարտեղի վրա ցույց տվեք Դնեպրոզենը :

Հմկայական քանակությամբ եներգիա յե պետք Դոնբասի և կրիվորոժյեյի հանքահորերում և գործարաններում հաղարավոր մեքենաներ շարժելու համար : Ավելի ևս մեծ եներգիա պետք կլինի այն ժամանակ, յերբ գործի մեջ կղըլեն նոր գործարաններ և հանքահորեր, վորոնք ներկայումս կառուցվում են և վորոշված և կառուցել : Այդքան եներգիան վո՞րտեղից պետք ե վերցնել :



Ակ. 47. Աշխատանքն ածխանքում այժմ

Պարզվեց, վոր շատ մոտ, հենց բնության մեջ բոլորովին ձրի եներգիայի ահազին պաշարներ են զտնվում։ Դա Դնեպրի հոսող ջրերի եներգիան է։ Այստեղ գոռում-գոչումով, անհիշելի ժամանակիներից քարերի միջով հոսում և Դնեպրը։

Մեծ աշխատանք կարող եյին կատարել նրա ջրերը, յեթե հնարավոր լիներ այդ ջրերը մեծ բարձրությունից թափել մի տեղ։


Կառավարության հանձնարարությամբ ինժեներները մի քանի տարի զբաղված եյին այն հարցով, թե ինչպես կարելի յի ողագործել Դնեպրի ջրերը, և վերջը յեկան այն յեղակացության, վոր սփառք և Դնեպրի վրա կառուցել բարձր պատվար և հիդրո-ելեկտրակայան։

Հինգ տարի հազարավոր բանվորներ և ինժեներներ համառ կուիլ եյին մղում Դնեպրի դեմ։

Մեծ դժվարություններ հաղթահարվեցին պատվարը շինելիս։ Ստիպված եյին մաս-մաս գետի առաջն առնել փայտե պատճեցներով, նրանց միջի ջուրը դուրս քաշել և աշխատել այսպիսի պատճեցների մեջ, շարունակ յերկուող կրելով, վոր ջրի հեղեղները ներս կխռաժեն և կվոչնչացնեն թե՛ ամրող աշխատանքը և թե՛ աշխատողներին։

Դնեպրի առաջն առան մեծ սրատվարով և այդ սրատվարի մոտ կառուցեցին հիդրո-ելեկտրական կայան։

Դնեպրը դեմ առաջ պատվարին և անցավ յերկաթե լոյն խողովակների մեջ, վորտեղ դրված եյին ելեկտրական կայանի տուրբինները։



Զուրին ահռելի ուժով ներս խուժեց յերկաթե խողովակների մեջ, զարկեց տուրբինի թեկերին և պատեց նրանց. ելեկտրական մեքենաներն սկսեցին աշխատել և ելեկտրական հոսանքը ելեկտրակայանից հաղորդիչների միջով դնաց գեպի ամեն կողմ:

Դնեպրոպետսի ելեկտրական հոսանքը կաշխատի 18 միլիոն հասակավոր մարդու փոխարեն: Դնեպրը չի սահմանափակվի միայն նրանով, վոր շարժման մեջ կգնի Դոնքասի և Կրիվորոժյեյի հանքահորերի և գործարանների մեքենաները: Դնեպրի մոտ աճում են նոր գործարաններ՝ թուժաձուլական, պողպատաձուլական, ալյումինի, մեքենաշինարարական, քիմիական: Նրանք նույնպես Դնեպրոպետսի միջոցով են աշխատելու:

Զրի տակ թագնվեցին Դնեպրի ահավոր քարակույտերը Դնեպրն իր ամբողջ յերկարությամբ նավարկելի դարձավ:

Դնեպրից կփորեն ջրանցքներ դեպի Դնեպրի ափերի անջուռ և արեակեղ տափաստանները: Այդ ջրանցքներով բաց կթողնեն ջուր և մեռած տափաստանները կկենդանանան ու կտան բերք:

Կաշխատի Դնեպրոպետս—լրիվ հոսանքը կանցնի խորհրդային և կոլեկտիվ անտեսությունները և կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների դաշտերում կաշխատեն ելեկտրական դութաններ:

Վարժություններ: Կոնտուրային քարտեղի վրա սեահողային տափաստանների զոնան շրջադեռ:

Կոնտուրային քարտեղի վրա գրեցեք այն գետերի անունները, վորսնք կտրում են սեահողային տափաստանները:

Քարտեղի վրա նշանակեցնեք Դոնքասը, Կրիվոյ-Ռոդ և Կերչ քաղաքները: Քարտեղի վրա հշտակեցնեք Դնեպրոպետս, Կամչչինի պատվարը:

5. ԶՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԶՈՆԱ

Կասպից ծովից դեպի հյուսիս Վոլգայի սառըին հոսանքի յերկու կողմերով և ապա դեպի արեալը մինչև Զինաստանի սահմանը տարածվում է չոր տափաստանների զոնան:

Անոնք դուրիներ քարտեղի վրա դաբեց չոր տափաստանները:

ԶՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

(Ճամապարհորդի նամակից)

Եերկու ամիս մեացի չոր տափաստաններում: Իմ չուրջը, մորքան աչք կտրում եր, ձգիւմ եր անուհման, միապազա-

Հարթություն։ Տափաստանը յերկար չմնաց իր դարնանային գույնղղույն զարդարանիքի մեջ։ Թառամեցին նրա վառ ծաղիկ-ները, առաջին իսկ շոգ որերը չորացրին կանաչ խոտերը։ Մի-այն բարձվենյակն ու մոլախստերը կարողացան դիմանալ արեկ կիզող ճառադայթների տակ։ Տափաստանն ստացել եր գեղին-կորչ գույն և ծածկվել եր փոշով։ Աւժեղ քամիներից փոշու ամ-բողջ սյուներ բարձրանում եյին դեպի վեր և շարժվում այս ու այն կողմ։

Կենդանիները թաղնվել են շոգից։ Միայն մողեներն եյին նշարվում բարձվենյակի ցողունների մեջ։

Յերեմին ամպերը կուտակվում եյին, կայծակը փայլառա-կում եր, ամպը գոռում եր, նույնիսկ սկսում եյին թափվել անձ-րեկ առաջին խոշոր կաթիները։ Բայց քամին ցրում եր ամպերը և տափաստանն առաջլա պես մնում եր չոր, փոշոտ։

Այսուեղ-այնտեղ յերեռում եյին աղուտների սպիտակ բծեր։ Ազը բարակ կեղեռով ծածկում եր գետինը և թվում եր, թե ձյուն և յեկել։ Տեղ-տեղ արեկի տակ փայլվում եյին լճերը։ Տա-փաստանն ամայի յեր և անմարդաբնակ։ Յերեմին-յերբեմն հեռ-վում յերեռում եյին կաղակների վրաններ, իսկ նրանց շուրջը ձիերի յերամակներ և վոչխարների հոտեր։ Մեկմեկ ել յերեռում եյին հետախուզողների սպիտակ վրաններ և գորչ վիշկաներ։

ԶՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մակերեռույթի կազմությունը։ Նայեցեք քարտեզին, չոր տա-փաստանի մակերեռույթն ամեն տեղ միատեսակ չէ։

Չոր տափաստանների արևմտյան կեսը ցածրադիր հարթու-թյուն և, վորը ցածրանում և դեպի Կասպից ծովը։ արևելյան կեսը՝ բարձրադիր հարթություն և, վորի վրա բարձրանում են այնքան ել վոչ բարձր լեռներ։

Չոր տափաստանների հարթությունները մի ժամանակ ծովի հատակ եյին. այդ մասին վկայում են բաղմաթիվ աղի լճերը, աղուտները, գետնի մեջ պատահող խեցիները։

Կլիմա։ Չոր տափաստաններում ամառն ավելի տաք և և չոր, քան թե սևահողային տափաստաններում։ Ատլանտյան ով-կիանոսի տաք և խոնավ քամիները համարյա-չին կարողանում



Նկ. 49. Զոր տափաստանում

հասնել այստեղ, և այդ պատճառով ամառները համարյա թե անձրեւ չի դալիս։ Հաճախ վչում են չոր և տաք քամիներ։ Շոգից գետինը չորանում եւ և ճաշճքում։

Չմեռն այստեղ, կարձատեւ եւ, ինչպես սևահողային տափաստաններում, բայց ավելի խիստ եւ։ Չմեռը հաճախ լինում է ծյունի փոթորիկ։ Չմեռվա վերջը յերեմն գետինը ծածկվում և սառցե բարակ չերտով։

Գետերը։ Զոր տափաստաններում գետեր քիչ կան։ Նրանցից ամենախոշորներն են՝ Վոլգայի ստորին Հոսանքը, Ուրալը և Եմբան։ Ամառը գետերը սաստիկ բարակում են։ Ամառվա վերջը, նույնիսկ այնպիսի մեծ գետում, ինչպիսին Ուրալն եւ, նավարկությունը բավական դժվարանում եւ, իսկ մանր գետերը բոլորվին ցամաքում են։ Զոր տափաստանների գետերի մեծ մասը ծով չի հասնում, նրանք կորչում են ավաղների մեջ կամ թափվում են փոքրիկ աղի լճերի մեջ։

Փարսեղի վրա զսե՞ հիշած գետերը։

Բուսականություն: Զոր տափաս-
տանների բուսականությունը, ինչ-
պես և և աւահողային տափաստաններում,
գարնանը, ամռանը և աշնանը վոր-
վում եւ.

Բայց այստեղ գլխավորապես այն-
ողիոի բույսեր են աճում, վորոնք
յիշաշտից չեն վախենում:



Նկ. 50. Բարձվենյակ



Նկ. 51. Ազարույս

Վաղ գարնանը, հենց վոր ձյունը հալվում եւ հողը ծծում
ե խոնավություն, արագորեն աճում են սոխարմատ և վերար-
մատ ունեցող բույսերը՝ կարմիր ու դեղին կակաչները, ձնծա-
ղիկները և ուրիշները։ Կարճ ժամանակում չոր տափաստանները
ծածկվում են նաև կանաչ խոտերով։

Բայց շուտով անցնում ե գարունը և գալիս չոր ու տաք ա-
մառը։ Կակաչները թառամում են, խոտերը չորանում։ Նրանց
փոխարինում են չորասեր բույսեր՝ այնոր հոտավետ բարձվե-
նյակները։ Նրանք ծածկված են մաղմղուկներով և այդ պատ-
ճառով քիչ խոնավություն են գոլորշացնում։ Բաղմանում են նաև

ուղանք վուշ—իշստ խոտը և զանազան ժողախռուեր, վորոնք նույնպես են վախենում յերաշաից:

Չոր տափաստանների բույսերն ունեն յերկար արմատներ, վորոնք խորանում են դետնի մեջ և այնտեղից ծծում խոնավություն:

Նրանք գտնվում են իրարից հեռու: Նրանց արանքում յերեվում և խանձված, չողից ճաքճքված գետինը:

Այնաեղ, վորաեղ հողի մեջ շատ աղ կա, պատահում են առանձին բույսեր—աղարույսեր:

Հողեր: Յերկարատե, շատ շոգ և չոր ամառվա և նոսր բուսականության չնորհիվ, հողի մեջ չի կարող այնքան շատ բուսահող գորանալ, ինչպես սեահողային տափաստաններում: Չոր տափաստաններում հողերը մեծ մասամբ լինում են դորչ և փոքր քանակությամբ բուսահող են պարունակում: Պատահում են նաև աղուտային հողեր: Սրանց մեջ մեծ քանակությամբ ծծված աղեր են լինում:



Նկ. 52. Սայգակ

Կենդանական աշխարհ: Չոր տափաստաններում խոշոր կենդանիներ քիչ կան: Պատահում են արտղավազ սայդակներ: Չուր և սնունդ վորոնելիս նրանք մեծ տարածություններ են անցնում. միայն արագ վազքն և փրկում նրանց դայլերից:

Չոր տափաստաններում պատահում են և աթաղիսի կենդանիներ, վորոնք ապրում են հողի տակ:

Այստեղ շատ կան մողեսներ, ոճեր, իսկ միջաներից ծղրիդներ, մորեխներ:

Չոր տափաստանների կենդանիների մեծ մասն ունի խանձված տափաստանի գույնը և այդ պատճառով նրանք տափաստանի վրա հաղիվ են նկատվում:

Առաջադրությամբ: Չոր տափաստանների կլիման համեմատեցիք սկանզային տափաստանների կլիմայի հետ:

Պատճեցեք ինչպես և փոխվում չոր տափաստանների բուսականությունը դարձնուից մինչև աշուն:

Չոր տափաստանների հողերը համեմատեցիք սկանզային տափաստանների հոգերի հետ: Խեցում չոր տափաստաններում քիչ բուսական կա:

Պատճեցեք, ի՞նչ տառմեծահատկություններ ունեն չոր տափաստանների բույսերն ու կենդանիները:

ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Լայնարձակ չոր տափաստաններում հին ժամանակներից սկսած ասլրում են դագախներ և զալմուխներ: Նրանք զրազվում են դիմավորապես անասնապահությամբ—պահում են վոչխարների, ձիերի և ուղտերի մեծ հոտեր: Չոր տափաստանների բուսականությունն աղքատ և, բայց նա կարող է կերակրել այնպիսի սակավապես կենդանիների մեծ հոտեր, ինչպիսին են վոչխարը և ուղտը:

Ցեղ քոչում են ամառը դաղախներն ու զալմուխները մի արտատեղից մի ուրիշը: Բնտրում են վորեև հարմար տեղ անառներն արածացնելու համար, կանգնեցնում են թաղիքե վրանները և ամառային առուլը (բնակավայրը) պատրաստ են:

Զմեռում են մշտական բնակարաններում: Այդ բնակարանները նրանք շինում են կավից, վորի հետ գոմաղբ են խառնում:

ՂԱԶԱԽՆԵՐԻ ԿՑԱՆՔԻՑ

Գոչը: Անասունները կերան և վոտնատակ արին առուլի շուրջն յեղած խոտը: Գետք և ուրիշ տեղ քոչել:

Առավլոտից առուլում կենդանություն ե: Կանայք քանդում են

վրանը, Հայվաքում են դպրդերը, անկողինը և ամանները։ Տղամարդուկի բարձում են սայլը, ուզտերը։

Ամեն ինչ պատրաստ է։ Ճանապարհ են ընկնում։

Ենթան սայլերին նստած գնում են կանայք ու յերեխաները։

Նրանց հետեւ վեհ քայլվածքով գնում են ուզտերը։ Նրանց սապատներին բարձած են վրանների մասերը։ Ուզտերի հետեւ զնում են ձիերը և կովերը։ Իսկ ամենից վերջը վոչխարների և այծերի հոտերը։ Ճոճում են սայլերը։ Մայրում են վոչխարները, զնում են ուզտերը, բառաշում են կովերը, խրխնջում են ձիերը։ Խովում են յերեխանների զիլ ձայները։

Ամրող քարավանի առջեկց ձիուն նստած զնում և արարը։ Մնացած տղամարդիկ նույնպես ձիերին նստած փակում են յերերը։

Բայց ոչ արեւ թեքվում և դեպի արեմուաք։ Ամպերը դասնում են վոսկեղույն-վարդագույն։ Շուտով կմթնի։ Արայը աալիս և աղղանշան, և քարվանը կանդ և առնում գիշերելու։

Առավոտը, արեւածաղին քարվանը կրկին ճանապարհ և ընկնում, իսկ իրիկնաղեմին կրկին կանդ և առնում հանդստանալու համար։

Այսպիս չորս որ չարժվում և քարվանը դեպի այն կողմը, վորտեղ խոտն ավելի հյութալի յն, վորտեղ կա անուշահամ չուր և վորտեղ անասուններին տվելի լավ կարևոլ յն կերակրել։

Վերջապես, հինգերորդ որը հեռվում փայլվլում և լիճը։ Զրի համը տեսան—լավ և, համեզ։ Յեզ շրջակայքի խոտն ել խիտ և, կանաչ։ Վորոշում են այստեղ կանդ առնել։

Կանգնեցնում են վրանները և առվը պատրաստ եւ։

Եեզ ահա առվի շուրջն ամեն ուզզությամբ ցրվում են ձիերը, կովերը, այծերն ու վոչխարները։ Տափաստանը նրանցից զանում և խայտարդիտ։

Մի յերկու տասնյակ մեծ, կատաղի գամփոեր ողահողանում են հոտը։

Վրանների առաջ վառվում են խարույկները և նրանց վրա ինչ-վոր բան և յեփվում։

Առելց մարդու յերեսին խփում և ծուխը և թթու կումիսի հոտը։

ԴՆԶԳԵՍ ԵՐ ԱԳՐՈՒՄ ԶՈՐ ՏԱՓԱՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄՔԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չոր տափաստանների հսկայական տարածությունները կարող են կերակրել հարյուրավոր միլիոն անառուններ :

Բայց յեղանակն այսուեղ հաճախ անբարենպաստ է : Յերաշախից խոռոչ չըրանում է : Սակավածյուն ձմեռներին լինում և սարուկ : Գետինը ծածկվում և սառցի հաստ չերտով, վորը չեն կարող կոտորել նույնիսկ ձիու սմբակները : Այն ժամանակ սկսվում է «ջուտը», ոննդի պակասությունից անառունների մասսայական կոտորվելը : Բացի այդ, հաճախ անառունները հիվանդանում են իշխախտով, սիրիբախտով և ուրիշ հիվանդություններով :

Խավար, հետամնաց քոչվորներն ամբողջապես կախված եյին քառությունից : Նրանք վոչ մի միջոց չեյին դործազրում անառունների մասսայական կոտորածի առաջն առնելու համար—այն սուկալի աղեղի, վոր ընկնում եր նրանց դիմին :

Անառունները հիվանդանալու ժամանակ նրանք գիտում են իսխարդին, վորի բժշկությունն ավելի ևս տարածում եր հիվանդությունը և անառունների կոտորածը :

Ցարական կառավարությունը բոլորովին հոգ չեր տանում տափաստանի քոչվորների տնտեսության մասին :

Չոր տափաստանում դժվար ե ջուր ճարել : Գետը և խոր ջրհորներ փորել : Տափաստանի ամենալավ ջրհորները պատկանում եյին բայերին (Հարուսաններին) :

Բայերն ոգտվում եյին չքավորների ազիտությունից : Կերի սրավառությունը, անառունների կոտորածը նրանց նոր հարստություններ եյին բերում—ավելի շատ չքավորներ եյին դառնում նրանց բատրակները :

Այս տափաստանների բնակչությանը քայլայում եր և ինքը՝ ցարական կառավարությունը : Նա խլում եր տափաստանային քոչվորներից արոտառեղերն ու վարելահաղերը և տալիս ուստ գաղթականներին :

Ի՞Չ Ե ԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՓԱՌ-
ՏԱՆԱՑԻՆ ՔՊՉՎՈՐՆԵՐԻ ԿԵՑԱՆՔԸ ԲԱՐՎՈՒԹԵԼՈՒ ՅԵՎ ՏԱՓԱՌ-
ՏԱՆԱՑԻՆ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Խորհրդային իշխանությունը վճռականորեն վերակառու-
ցում և քոչվորների տնտեսությունը և կյանքը: Նա ամենից ա-
ռաջ պայքար և տանում անասունների քանակը մեծացնելու հա-
մար, վորովհետեւ դրանից և կախված քոչվորի ամբողջ բարեկե-
ցությունը:

Խորհրդային իշխանությունն աշխատում և քոչվորներին
նոտակյաց գարձնել: Նա ամեն կերպ սպառություն և հասցնում,
քոչվորներին:

Կազմվում են բնկերություններ խոտը միասին հարելու, խոտ
ցանելու համար, կառուցվում են ընդհանուր դոմեր, շինում են
ջրհորներ, ջրամբարներ: Հիմնում են անասնաբուժական կե-
տեր:

Քոչվորների կուլտուրական ժակարդակը բարձրացնելու հա-
մար հիմնում են «կարմիր վրաններ», դպրոցներ: Կառուցում են
հիմնադասոցներ:

Զոր տափաստանները յերկրագործության համար անհարմար
են, բայց դրա փոխարեն նրանք կարող են կերակրել հարյուրա-
վոր միլիոն դրամ անասուն:

Տափաստանային անասնապահական տնտեսությունը լավ
վարելու դեպքում հսկայական քանակությամբ միև կարող են
տալ տափաստանները:

Եեվ ահա չոր տափաստաններում ծավալվում և խորհրդային
տնտեսությունը, կառուցվում են անասնաբուժական խորհրդա-
յին տնտեսություններ:

Այժմ արդեն բազմաթիվ անասնաբուժական խորհրդային
տնտեսություններ կան այնտեղ:


ՈԴՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵծ քանակությամբ հանածո հարստություն մինչեւ վերջին
ժամանակներս անողուտ ընկած եր չոր տափաստանների բնդեր-
քում:

Չոր տափաստանները կենդանություն առան այնտեղ, վորակեղ սոցիալիստական հանրապետություն կառուցաղների համառ աշխատանքի չնորհիվ բացվեցին տափաստանների ընդհարքը:

Կարազանդայի հանքահորից անընդհատ հեղեղով յերկրի մակերևույթի վրա թափվում են սև, պսպղուն ածուխը: Կասպից ծովի յեղերքին, նավթահորերից զիշեր-ցերեկ խողովակների մի-չով հոսում են Եմբայի նավթը: Բալսաշ լճի ափին կառուցվում են պղնձամուլական գործարան, վոր իր մեծությամբ առաջինն են լինելու ամերող աշխարհում:

Թարտեղի վրա դառն կարազանդան, Եմբայի նավթահոնքերը և Բալսաշ լճի ափի պղնձամուլական գործարան, վոր իր մեծությամբ առաջինն են լինելու ամերող աշխարհում:



Նկ. 53. Չոր տափաստանում գործարան և կառուցվածք

Բայց դա միայն սկիզբն է: Պղնձի, ցինկի, կապարի հանքերի և ուրիշ արժեքավոր հանածոների ահազին պաշարներ են գտնված չոր տափաստանների ընդհերքում:

Նրանք շուտով դառնալու յեն գումավոր մետաղների արտադրության դլխավոր բազան:

Այսպիս աստիճանաբար մոխավում են չոր տափաստանները, դրա հետ փոխվում են և դազախների կյանքը: Քոչվոր զաղախները դառնում են կառուցողներ, հանքավորեր, նավթահանքա-

յին բանվորներ, հեռանում են քոչից և սկսում ապրել արդյունաբերական բանվորների կուլտուրական կյանքով:

Նալք ծովի հատակից: Կասղից ծովի ձկնորսները վաղուց նկատել եյին, վոր Եմրայի գետաբերանից վոչ հեռու ջուրը շողջողում և ծիածանի բոլոր գույներով:

Սկսեցին հետազոտել ծովի ափերն ու հատակը: Պարզվեց, վոր բավական խոր, ծովի հատակի տակ գտնվում են նավթով հարուստ հողաշերտեր:



Նկ. 54.

Յեշ Առըհրդային իշխանությունը վորոշեց ծովից խլել այդ նավթը:

Մովի մեջ կանգնեցրին մի հաստ քարե պատդամբա: Այդ պատդամբան ջամատեցին ծովի մի մասը: Ամբողջ յերկու տարի գիշեր-ցերեկ աշխատում եյին ջրհան մեջնաները: Վերջապես հատակը բացվեց:

Ցամաքացրած ծովի հատակի վրա կառուցեցին տասնյակներ նավթային վիշետներ և սկսեցին նավթ հանել: Շուտով այս

տեղ նավթի ուժեղ շատրվան խփեց : Շատրվանը փակեցին խո-
զովակներով և նավթն սկսեց հոսել ուղղակի նավթային բակի
մեջ :

Բանվորները և ինժեներները մեծ քանակությամբ նավթ խլե-
ցին բնությունից սոցիալիստական տնտեսության համար :

Նավթի վիշկաների անտառն այժմ կանգնած և այնտեղ, վոր-
տեղ մէ քանի տարի առաջ ծովի հատակ եր :

ԶԿՆՈՐՍԱՐԱՆՆԵՐ

Չոր տափաստանների զոնայի արևմտյան մասը զանվում և
կառապից ծովի առիւրին, Վոլգա գետի ստորին հոսանքի յերկա-
րությամբ և Եմրա գետի սվաղանում :

Այստեղ ձկան մեծ հարստություններ կան :

(Քորտեղի վրա ցույց տվեց զոնայի ոյզ մասը) :

Վոլգայի գետաբերանում դոնվում և Աստրախան քաղաքը :

Դա ձկնորսության ամենակարեւոր կենտրոնն է : Մովագիի
մոտ կանգնած են հարյուրավոր ձկնորսական առազատավոր
նավեր : Ձկնորսական սեզոնում դիշերցերեկ նավերից գատար-
կում են ձուկը :

Մինչ հեղափոխությունն Աստրախանում ձկնորսների աշխա-
տանքով հարստանում եյին խոշոր վաճառականները :


Նոր Աստրախանում տառնյակ հաղարներով ձկնորս-կոլտըն-
տեսականներ կան : Նրանցից շատերը նախկին քոչվոր-ղալմուխ-
ներն են :

Ներկայումս այստեղ կառուցված են պահածոների մեծ գոր-
ծարաններ, սառցարաններ, դործարաններ, վորտեղ շինվում են
ձկնորսական նավեր :

(Քորտեղի վրա զտեք Աստրախան քաղաքը) :

ՀԱՂԱՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԶՈՐ ՏԱՓԱՇԱՆՆԵՐՈՒՄ

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն մեկ յերկա-
թուղի յեր կարում չոր տափաստանները :



ԵԿ. 55. Թուրքիատան-Արքիր յերկարութու չարտեզը

Նա Որևէ բուռուրդ քաղաքից զնում եր դեղի հարակ-մրկելը
Տաշքենդ քաղաքի ուղղությամբ:

Քարտեղի վրա ցույց տվեք այդ յերկաթուղթին:

Զոր տափաստանների ընդարձակ տարածության մեջ ժամը
բոլորովին կորչած եր ԽՍՀՄ-ի կուլտուրական կենտրոններից:

Ուղարք տեղափոխության միակ միջոցն եր այդ տափաստան-
ներում:

Վերջին տարիներում խորհրդային իշխանությունը կասուցեց
մի յերկար յերկաթուղթի, վոր կոմում և չոր տափաստանների
արևելյան ճամար—զա Թուրքիաստան—Սիրիական (Թուրքիի)
ճանապարհն ե: Այս ճանապարհի շնորհիվ արագործն զարգանում
ե յերկրի անտեսությունը:

Վարժություններ: Կոնտուրոյին քարտեղի վրա չոր տափաստանների գո-
տու չեւրջը պիծ քաշեցիք:

Նշտակեցեք զիմապոր ողառելոր հանաժողովների հանժան տեղերը:

Նշտակեցեք այն տեղերը, վորտեղ պարում են զաղախները և զալմուի-
չերը:

Նշտակեցեք կարտղանդա, Աստրախան քաղաքները: Թուրքիաստան-Սիրի-
յական յերկաթուղթի ընդդեցեք և վրան պրեք անունը:

Աշխատանիք արտօնության ժամանակ: Կազմեցիք ալբում «Զոր տափաստան-
ների գոտի» թեմայով:

6. ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԶՈՒԱ

Կասպից ծովից արևելք, չոր տափաստանների զոնայից հա-
րավ գտնվում ե անտապանների զոնան:

Հարավային և հարավ-արևելյան անտապանների զոնան շրջա-
ռատվածած և լեռներով:

«Բնական զոտիներ» քարտեղի վրա դառն անտապանների զոնան:

ԱՆԱՊԱՏՈՒՄ

(Ճանապարհորդի պատմվածք)

Փիրուն ավաղի քեզնավուն բլուրները տարս-ծվում են դե-
պի ամեն կողմ: Յերբեմն թվում եր, թե չուզիդ տարածվում և
անծայրածիր ծով քարացած ալիքներով:



Նկ. 56. Անապատում

Տեղ-տեղ ավաղաթմբերը ծածկված եյին ինչ-վոր մանր ծառերով և թփերով, վորոնց վրա տերեւ չկար։ Նսոր աճում եյին կոշտ և փշոտ խոտեր։

Արեւ ծագելուն պիս շոգն սկսվում եր։ Կեսորին ավաղն այնքան եր տաքանում, վոր բորբիկ վոտքերով անհնարին եր քայլել։ Նույնիսկ տափաստանի շոգին սովոր ձիերը հրաժարվեցին կերից և թմբել, կանգնել եյին խեղդիչ, այլուղ շոգից ուժասպառ լինելով։ Էստ յերեսույթին միայն ուղտերն եյին, վոր շոգից չեյին տառապում։

Առավոտյան ժամը 10-ին մոտ բարձրանում եր չոր, այլուղ քամի։ Նա քում եր տաք ավաղի ամբողջ ամպեր։

Ավաղի վարադույրով ծածկվում եր արեւի յերեսը։ Հեռվում վոչինչ չեր յերեսում։

Տաք ավաղն անխնա ծեծում եր մեր յերեսներն ու ձեռքերը, լցվում եր աչքերի, ականջների մեջ և կաշլի մեջ քոր առաջացնում։ Առամներիս տակ ավաղը կրծտում եր։

Եերեկոյան դեմ արեւ, վորպես ծանր շիկացած գունդ թագ-

Նըլէց հորիզոնի տառկ վարմիր լույսով անապատը հեղեղելով։
Քարվանը վեց որ եր, ինչ ճանապարհ եր դնում։ Մանր
ճանապարհից և սննդի պակասությունից նույնիսկ ուղերը հոդ-
նեցին։ Նրանք դնում եյին տխուր, ուժապառ, հաղիվ փոխե-
լով վոռքերը։

Ճանապարհին հանդիպեցինք ջրհորի։ Բայց նրա մեջ այնքան
չէչ ջուր կար, վոր նույնիսկ խմելու չքականացավ։

Քարվանն ուղեկցող թուրքմեններից մեկը ցանկություն
հայտնեց զնալ առաջ և զննել ճանապարհը։ Յերեկոյան վերա-
դարձավ նա և հետը բերեց թարմ յեղեգի մի ճյուղ։

Բոլորն զգացին, վոր շուտով նրանց տանջանքները կվերջա-
նան։

Հետեւյալ որը քարվանը հասավ Ամու-Դարյա գետը։

Դա մի լայն, ջրառատ գետ եր։ Նրա ափերը չածկված երին
ճոխ, կանաչ բուսականություն։

ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մակերևույթի կազմությունը։ Հետեւյեք քարտեզով։ Առա-
սպանների զոնան դոնվում և Թուրքանի ընդարձակ դաշտավայ-
րում։ Մի ժամանակ Թուրքանի գաշտավայրը ներկայացնում եր-
ծովի հատակ։ Դեպի հարավ և հարավ-արևելք նա աստիճանա-
բար բարձրանում ե, և հարավ-արևելյան ծայրամասերում վեր-
ջանում բարձր լեռներով։ Այսուղ գտնվում ե Պամիր լեռնաշ-
խարհ։ Պամիրից դեպի հյուսիս-արևելք ձգվում են ԽՍՀՄ-ի ա-
մենաբարձր լեռները՝ Տյան-Շանը։

Կլիմա։ ԽՍՀՄ-ի հեռավոր խորքերն ե անցել անապատների
զոնան։ Խոնավ քամիներն այստեղ չեն հասնում։

Անապատների զոնայում ավելի չոր ե և տաք, քան թե չոր
տափաստաններում։ Պատահում են և այնպիսի տեղեր, վորտեղ
ամառվա ընթացքում մի կաթիլ անձրեւ չի գալիս։ Յերբեմն անձ-
րեւ գալիս ե, բայց չի կացած ավազներին չդիպած, գոլորշիա-
նում ե։ Ցերեկն առվերի մեջ շողը հասնում ե մինչև 50°։ Ավաղը,
քարերը, մետաղե առարկաներն այնքան են տաքանում, վոր այ-
քում են մարդու ձեռքերը։

Յերկինքն այստեղ մեծ մասամբ անամպ և լինում: Այդ պատճառով՝ եւ առարկաներն ամսային ցերենիները սաստիկ տաքանում են, իսկ գիշերներն արագ սառչում: Անապատում ցերեկը լինում է չոր, իսկ գիշերը դով:

Ամառը տեսում և հինգ-վեց ամիս: Զմեռն, ընդհակառակը, կարճ և և ցուրք: Լինում են 20°-ի և նույնիսկ ավելի սաստիկ սառնամանիքներ:

Գետեր: Շրջապատող լեռներից քիչ զետեր չեն թափվում թուրանի զաշտավայրի մեջ: Բայց նրանց մեծ մասը կորչում և ավազների մեջ կամ ցածրացում և, ինչպես չոր տափաստաններում: Միայն յերկու մեծ գետ են կարողանում կտրել կարակում և կըզըլ-կում անապատները և հասնել մինչև Արալյան ծովը: Դրանք են Ամու-Դարյա և Սիր-Դարյա զետերը: Եերկուսն ել սկզբում են բարձր լեռների սառույցների տակից: Ամու-Դարյան սկիզբ և առնում Պամիրի լեռներում, իսկ Սիր-Դարյան՝ Տյան-Շանի լեռներում:

Քարտեղի վրա զանք հիշած զետերն ու անապատները:

Ամենաչող ժամանակ, յերբ չոր տափաստանի զետերը բարսկում կամ ցածրացում են, Ամու-Դարյան և Սիր-Դարյան վարարում են: Դա նրանից և, վոր այդ ժամանակ ամառային արեգակի ճառագայթներից բարձր լեռների սառույցը հարվում է:

Անապատներում պատահում են նաև լճեր, բայց հաճախ առանց ջրի: Նրանց միջի ջուրը գոլորշիացել և փռուերի մեջ մնացել և աղի շացնող սպիտակ չերտը: Հեռվից այդ չերտը նոր յեկած ձյունի յի նմանվում:

Յուլիականություն: Ավագոտ անապատներում են կան բույսեր. բայց նրանք այստեղ աճում են ավելի նոսր, քան թե չոր տափաստաններում: Նրանք նույնպես կարողանում են դիմանալ չողին և խոնավության բացակայությանը:

Ավազները շարունակ վտանգ են սպառնում անապատի բույսերին: Բայց նրանցից շատերի սերմերն այնքան թեթև են, վոր քամու ժամանակ նրանք ավաղից առաջ են թռչում և ավազները չեն կարող նրանց ծածկել հաստ չերտով: Շատ թիեր բոլորովին աերեւ չունեն. նրանց ճյուղերն ուղիղ են և բարակ, այդ պատ-

ճառով ավազը կարողանում է նրանց միջով աղատորեն անցնել և թփերի մոտ չի կաւածկվում:


Ավազում անապատներում պատահում են նաև ծառեր—սովորվածները: Նրանք հասնում են 6—8 մետր բարձրության և մի քանի տեղերում կաղմում են պուրակներ:



Նկ. 57. Սահման

Տարորինակ տեսք ունեն արդ ծառերը: Նրանց բները ծուռ ու մոռ են, ծածկված բազմաթիվ ճեղքված շներով և ակոսներով: Տերևներն ունեն մանր թեփուկների ձև, խոկ ջահնել կանաչ ճյուղերը սաքսառուի համար տերևների դեր են կատարում:

Սաքսառուն աճում է չոր ավագներում: Զրելուց նա վճառվում է:



Նկ. 58.

Մեծ գետերի ափերին բուլորովին ուրիշ բուսականություն է: Ավազներն այստեղ վտանգ չեն սպառնում, բավականաշատ ել

խոնավություն կա : Ափերի յերկարությամբ ձղվում են յեղեգներ և խիտ, հյութալի սաղարթ ունեցող ծառերի մացառուաներ :

Հողեր : Ավաղուտ անապատներում հող չկա . աերեազուրկ նոր բուսականությունը բուսահող համարյա չի տալիս : Միայն ցածրադիր տեղերում պատահում են աղուտային հողեր :

Գետահովիտներում, ընդհակառակի, շատ արգավանդ հողեր են պատահում : Նրանք առաջացել են այն տիղմից, վոր գետն ամեն տարի թողնում ե վարարման ժամանակ :

Կենավանական աշխարի : Առաջին հայացքից անապատում կենդանիներ չկան : Բայց ուշադրությամբ դիտեցեք ավաղը : Աւտմի քանի քարեր կենդանություն առան և անաղմուկ առաջ են չարժվում : Բայց դրանք իսկապես քարեր չեն, այլ ավաղի մեջ թաղված մողենների գլուխներ :

Անապատներում, ինչպես և չոր տափաստաններում մողեններ և ոճեր շատ կան : Դատանդի ժամանակ նրանք թաղվում են ավաղի մեջ : Մողենների մեջ պատահում են և այնպիսի հականեր, վորոնց յերկարությունը լինում ե մեկ մետրից մինչեւ յերկու մետր : Անապատներում տպրում են նաև թռչուններ : Խոշոր վենդանիներից անապատի ծայրամասերում պատահում ե անտիլոպներ, վորոննք կղույշ և շատ յերկչուա կենդանիներ են : Մի փոքրիկ վտանգի դեմքում նրանք անհետանում են քամու արագությամբ :

Անապատի համարյա բոլոր կենդանիներն ունեն գեղնավուն դույն և այդ պատճառով անապատի ավաղների մեջ հաղիս են յերեւում :

Մեծ զետերի ափերին, վորտեղ մացառուտներ կան, ոլտաւհում են վարազներ և վագրեր :

Անապատն արժեքավոր ընտանի կենդանու—ուզտի հայրենիքըն ե : Իր լայն, կոշտուկներ ունեցող թաթերի չնորհիվ նա հեշտությամբ քայլում ե ավաղների մեջ, մինչդեռ ձիու վոտքերը խրվում են :

Ուզտը կարող ե կերակրվել չոր, կոչտ և փշոտ խոտերով : Բայց նա կարող ե առանց աննդի և ջրի մի քանի որ դիմանալ : Այդ ժամանակամիջոցում նա կարող ե մի քանի հարյուր կիլոմետր տեղափոխել և ճանապարհորդին ե բեռը :

Առաքադրություն Անապատի կղիման հոգեմատեցելը չոր սովորաների
կմեջի հետ:

Պատմեցէք, ի՞նչ առանձնահատկություններ ունեն անապատեցի կենդա-
նիներն ու բույները:

Անապատային զոտու ի՞նչպիսի անգերում են զանվում արգավանդ հողեր:

ԱՆԱԳԱՏՆԵՐԻ ԶՈՆԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անապատների զոնայում ապրում են, զլիավլորապես, ուզ-
քեկներ, քուրքմններ և դազախներ:

Աշազուս անապատների բնությունն աղքատ և և խղճուկ:
Բայց այնտեղ ևս բնակչություն կա: Նա զբաղվում է անասնա-



Նկ. 59

պահությունը և չոր սափառատնների բնակչության նման, քո-
չում և աեղից-աեղ, վսրոնելով արոտառեղեր և ջուր: Անապա-
տում իրարից հետուցըրված են քոչիորների առւները:

Դեռերի հավիտներում ջուրն առատ և, հողն արգավանդ և

բուսականությունը հարուստ : Այդ պատճառով հին ժամանակ-ներից սկսած մարդիկ բնակություն են հաստատել այդ տեղե-բում : Գետահովիտների բնակչությունը խիս և : Նա նստակյաց և և զբաղվում և գլխավորապես յերկրագործությամբ—տնկում՝ են այդիներ, ցանում են մեծ քանակությամբ բամբակ : Բամբա-կի ցանքները հետզհետե ընդարձակվում են :

Անջուր հողերը վոռողքելու համար հին ժամանակներից սկսած դիտերից անց են կացնում ջրանցքներ (առուներ) :

ՔՈՉՎՈՐ ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ՄՈՏ

Մեր քարվանը գնում եր կարս-կում անապատով :

Բարձեղի վրա զտեք կարս-կումը :

Մեր շուրջը ծգվում եյին անվերջ միապաղաղ ավաղե բլուր-ներ : Նրանք ծածկված եյին խանձված բուսականության մնա-



Նկ. 60.

ցորդներով : Տեղ-տեղ պատահում եյին սաքսառովի սացառուա-ներ :

Հանկարծ մի ավազե բլրի հետեւ բացվեց մեկ և կես կիրում ետք յերկարություն և լայնություն ունեցող հարթ տարածություն։ Նրա վրա շարքով կանդնած եյին 28 թուրքմենական վրան։ Քիչ հեռու ջրհորների մոտ ջուր եյին տալիս ուզտի ձողերին և գառներին։

Սա մի թուրքմենական առւլ եր։

Մենք կանդ առանք հանդսատանալու և յերկու որ անցկացրինք այստեղ։

Ամառ եր, անապատի բնակիչների համար տարվա ամենածարն յեղանակը։ Անտանելի շոգը հանգիստ չեր տալիս մեղ վոչ ցերեկը, վոչ ել գիշերը։ Վրաններում կյանքը համարյա մեռած եր։ Երջակայքի ամբողջ բուսականությունը խանձվել եր և հովիտները հոտերի հետ քաշվել եյին հեռավոր արոտատեղեր, ուրիշ ջրհորների մոտ։

Ենքու որից հետո մեր քարվանը հասավ հեռացող հոտին։ Անցնելով ավազաթմբի շուրջը, մենք հանկարծ հեռվից նկատեցինք ինչ-վոր շարժում։ Դա վոչխարների հոտն եր։ Գնում եյին վոչխարները, իրենց կճղակներով քանդելով կարակումյան փոշխանման ավազը։ Նրանք հաղարից ավելի եյին։ Աղոտ յերեսում եյին նրանց յեղջյուրները։ Արևի տակ փայլում եյին նրանց սև, մոխրագույն և գարշնագույն կարակուլյան մորթիները։

Հոտի կողքերով և հետեւից վաղում եյին մեծ պահապան շները։ Իսկ առջևից զնում եր նիհար ծերունի հովիվը սև թուրքմենական վատիտիւ գլխին, յերկար, ծայրը կեռ գավազանը ձեռքին, հրացանն ուսին։

Մանր և պատասխանատու թուրքմենական հովի աշխատանքը։ Ամբողջ որը քայլում և նա անապատում արմել կիզող ճառագայթների տակ։ Աղքատ և անապատի բուսականությունը, և նա ամեն որ ստիպված և ահագին տարածություն անցնել, վորպեսդի հոտը կերակրի։ Յերբեմն փշում և այրող բուք ու բորանը, և հոտը ծածկում և ավազով։ Լավ և, յեթե դա յերկար չի տեսում։ Բայց պատահում են և այնպիսի դեպքեր, յերբ բորանից հարյուրավոր վոչխարներ են ստոկում։

Թուրքմեններն ամեն տարի միլիոններով թանգարժեք կարակուլյան մորթիներ են պատրաստում։

ԱՐԴԱՎԱՆԴ ՀՈՎՃՈՒՄ

Մերկ անասրատում յերկար ճանապարհորդելուց հետո մենք
ավտոմոբիլով մտանք Ֆերգանի հովիտը :


Քարտեզի վրա դառն այդ հովիտը :



Նկ. 61. Ֆերգանի հովտում

Նա գտնվում է Տաշկենտ քաղաքից դեպի Հարավ-արևելք,
Սիր-Դարյա գետի հոսանքի յերկարությամբ :

Վայրը միանդամից վոխվեց : Անցնում եյինք պտղատու խիտ
արդիների, կանաչ արտերի մոտով : Հաճախ պատահում եյինք
եղով կամ վոտքով զնացող մարդկանց :



Նկ. 62. Բամբակի չանաքը մեժենայով

Սակայն անապատի մոտիկությունն իրեն դեռևս զգալ եր առաջին : Մերթ աջ, մերթ ձախ կողմում յերեսում եյին մերկ աեղեր : Տեղ-տեղ դաշտերը ծածկված եյին ավաղներով, վոր քամին բերել եր անապատից :

Բայց շուտով անապատի վերջին հետքեւը կորան : Այլու-
մորիլը սլացավ այգիների և արտերի խիտ կանաչի միջով :

Այնու քայլափոխում մենք սահպված եյինք լինում անցնել
պոռողման ջրանցքների վրայով :

Այնուուրեք ցրված եյին ուղղեկների գյուղեր : Սոլիտահին
եյին տալիս նրանց կավե փոքրիկ տներն իրենց տափակ տանիք-
ներով : Բակերը շրջապատված եյին կավե բարձր պատերով :
Տների մոտ կանաչին եյին տալիս պտղատու այգիները, հոսա-
վետ սեխերի բախչաները և խաղողի այգիները : Յերբեմն նկատ-
վում եյին կապույտ առվյուտի, յերբեմն ել բրնձի ցանքներ : Ցեղ

այս բոլորը թաղված եր բամբակի ընդարձակ դաշտերի մեջ։ Ֆերգանի հավատամ առաստ արեւ, ջերմություն և լուս կա, հազն ել լավ վոռովգած և բազմաթիվ ջրանցքների միջնորդ բամբակին այստեղ մեծ բերք և տալիս։

Ֆերգանի հովիտը բամբակի մշակության ամենագլխավոր վայրերից մեկն և Խորհրդային Միության մեջ։ Աւղբեկական կուլտիվ և խորհրդային տնտեսությունները Խորհրդային հանրապետությանն ամեն տարի միլիոնավոր կիլոդրամ բարձր վրակի բամբակ են տալիս։

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱԳՐՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑԻՆ ԶՈՆԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական կառավարությունը գենքի ուժով դրայից անապատների զոնայում գտնվող հողերը։

Ենդ անապատային զոնայի ժողովությունները մոտ 70 տարի առլրեցին ցարական գեներալների խշանության տակ։

Ցարական չինովինիներն անապատների ժողովություններից խլում եյին լավագույն հողերը, չնչին գներով հավաքում եյին բամբակ և անապատներ, ստիպում եյին մեծամեծ հարկեր վճարել։

Ամեն տեղ կանգնած եյին սուսական դորքեր։

Անապատների զոնայի աշխատավորներն առլրում եյին թե՛ ցարական գեներալների, թե՛ սեփական խանների (թագավորների), բայկերի (հարուստների) և թե՛ մոլանների (տերտերների) լծի տակ։

Զուրն անապատների զոնայի բնակչության կյանքի համար միշտ մեծ նշանակություն և ունեցել։

Բայց այդ ջուրը պատկանում եր խաներին և բայերին։ Վոլգան շատ եր ջուրը, այնքան մեծ եր և խշանությունը։

Զրի համար, ինչպես իշխանության համար, խոները շարունակ պատերազմում եյին իրար հետ։ Այս պատերազմի ժամանակ վոչնչանում եյին ամբողջ ծաղկած քաղաքներ և ծածկվում անապատի ավաղերով։

Ջրանցքներ չինելու համար քշում բերում եյին սառնյակ հաղարներով աշխատավորներ։

Անապատների դոհայի ժողովությները մութ և սնահագութ
եյին : Գյուղատնտեսությունը վարում եյին նախնական ձեւերով :

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԴԱՆՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԾԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

Անապատային զոնայում շատ արգավանդ հողեր դռւր կոր-
չում են ջրի պակասության պատճառով : Այդ պատճառով ել Խոր-
հրդային իշխանությունն ամենից առաջ ուշադրություն դարձ-
րեց վոռոգման վրա :

Սկսեցին նորոգել քայլայված ջրանցքները և պատվարները .
դիմացկուն նյութերից՝ ցեմենտից և յերկաթից կառուցեցին բազ-
մաթիվ նոր ջրանցքներ : Սկսեցին ջուր մղել վոչ թե չերեվներ
ունեցող հին ձեի անիվների, այլ նոր մեքենաների միջոցով :

Բայերից խլեցին հողերը : Զուրը դադարեց մասնավոր սե-
փականություն համարվել : Այժմ բոլորն ել առանց վորեկ վճա-
րի ոգտվում են ջրից : Նա հավասարապես բաշխալում է վարելա-
հողերի և այդիների մեջ :

Վոռոգման ջրանցքների ցանցն ավելի ու ավելի մեծանում
է : Անապատն ավելի ու ավելի յե քաշվում, հեռանում, աղատե-
լով նոր արգավանդ հողեր ցանքերի համար :

Գյուղատնտեսությունը վերակառուցվում է :

Այստեղ, վորտեղ գյուղացիները ջոկ-ջոկ իրենց նախնական
դործիքներով փորփրում եյին գետինը, այժմ հազարավոր տրակ-
տորներ մշակում են կոլեկտիվ և խորհրդային տնտեսություն-
ների բարեկի դաշտերը :

Կոլեկտիվ տնտեսություններ կազմում են նաև քոչվոր վոչ-
խարարույժները, ստեղծվում են վոչխարարուժական մեծ խոր-
հրդային տնտեսություններ :

Անապատի ընդարձակ հողամասերում ցանում են կերի խո-
տեր, և քոչվորներն սկսում են նստակյաց կյանք վարել : Անա-
պատային զրնայում առաջին անգամ կառուցվեցին գործարաններ
և Փարբիկաներ :

Հակումքերյան հեղափոխությունն անապատային զոնայում
ապրող ժողովուրդների համար բացեց լայն ճանապարհ զեղի,
կուլտուրական շինարարությունը :

Անապատների զոնայում կազմվեցին ինքնուրույն ազգային
հանրապետություններ — Թուրքմենստան՝ Աշխարադ մայրաքա-
ղաքով և Ուզբեկստան՝ Տաշկենտ մայրաքաղաքով :

Քարտեզի վրա դաեւ այդ հանրապետությունները և նրանց մայրաքաղաք-
ները :

Հաղարավոր դպրոցներում սովորում են թուրքմենների և
ուլլենկների յերեխաններ իրենց մայրենի լեզվով : Տասնյակներով
բարձրագույն դպրոցներ այդ նոր միութենական հանրապետու-
թյուններին տալիս են սեփական դիտնականներ և ինժեներներ :
Կառուցվում են ակումբներ, դրադարաններ, կինո, թատրոններ :
Ցարական ճնշումից ազատված թուրքմեններն ու ուղիւղենքները
մասնակից են դառնում սոցիալստական կուլտուրային :

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԴԱՌՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԶՈՆԱՅՈՒՄ

Արագորին զարգանում և թուրանի գաշտավայրի արդյունա-
բերությունը : Կառուցվել են բամբակազտիչ, մետաքսի, մանա-
ծագործական Փարբիկաններ, ոյուղատնտեսական մեքենաների
գործարաններ, ելեկտրակայաններ :

Կասպից ծովի ափին զարդանում և ձկնորսական արդյունա-
բերությունը : Հենց այսուղեղ ել գտնված և նաևլիթ :

Մեծ հարստություններ յերեան բերվեցին կասպից ծովի
կարաքուգագ ծոցի մոտ : Այսունզ ստացվում են զանազան աղեր :

Կարտ-կում անապատի կենտրոնում գտնված են ծծմբի մեծ
պաշարներ և հիմնված ե ծծմբի գործարան :

Անում են քաղաքներ : Յերեկվա քոչվորները դառնում են
բանվոր :

Վարժարյում : Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցք՝ Արտյան ծովը:
Արտյան ծովը Թափվող գետերը, Կարաքուգագ ծոցը, Կարակում սննդաբազու-
բեշունք և Տաշկենտ, Աշխարադ քաղաքները :

Արտաքայան Աշխատանք : Կազմեցիք այս միավունանքի դահու թե-
մարդի :

7. ՄԵՐՉԱՐԵՎԱԴՐՁԱՑԻՆ ԶՈՒԱ

Խորհրդային Միության մեջ կան և այնպիսի տեղեր, վոր-
տեղ ձմեռը ճյուղը չի նոտում և սառուիկ սառնամանիքներ չեն
լինում:

Դա ԽՍՀՄ-ի մերձարևադարձային գոնան է:

Թեպետ այդ դոնան մեծ տարածություն չի բռնում, բայց
շատ արժեքավոր է մեր Միության հոմար:

Մերձարևադարձային զոնային են պատկանում Ղրիմի հա-
րավային ծովափը և Կովկասի Աևծովյան յեզերքը: Յերկուսն ել
գտնվում են տաք, չսառչող Աև ծովի ափերին:

ՂՐԻՄԻ ՀԱՄԱՎԱՑԻՆ ՆՈՎԱՓԲ

Քարտեզի վրա դաեւ Ղըիմ թէրտկզզին: Գաեւ Ղըիմի հորավային ծո-
վափը:

Զեր առաջ Ղըիմի հարավային ծովափի մի անկյունն է:

Ծով, լեռներ և ժայռեր: Լեռնալանջին կպել և դյուղը:

Գյուղի առաջ տարածվում է պարկը: Այնտեղ բացոթյա ա-



ճում են մեր սենյակային բույսերը՝ հօտովիտ դափնիմ, վարդան գույն ծաղիկներով զարդարված ոլեանդրը, աճում են մուգ կանաչ մազնոլիաներն իրենց խոշոր, սպիտակ ծաղիկներով։ Մաշ-կաթմբերը ծածկված են զանազան վառ ծաղիկներով։

Պարկի ծառերի մեջ աչքի յին ընկնում վայելչակաղը, մութ-կանաչ կիպարիսները, իրենց սրածայր դադարներով։ Պարկին կից այդիներում աճում են հարավային պտուղներ՝ դեղձ և ծիրան։



Նկ. 64. Պառատուկ

Ամառը ծովափին լինում է շոգ և չոր։ Նա տևում է մոտ հինգ ամիս։ Անձրևներն այստեղ այնքան քիչ են դալիս, վոր ամառներն արհեստական վրառվան կարիք են զգացնում։ Զմեռը կարճատեև և և մեզօք։ Զմեռը յերբեմն մառախուղներ են լինում։ Հաճախ անձրէներ են դալիս։ Մովք կտտաղի փոթորիկներից առ լեկոծվում է։ Մեկ-մեկ ծովափին ծյուն և դալիս, բայց արագ գորեն հալվում է։

Գարցունը կարճատեև և շուտ և դալիս, արդեն մարտին ծաղկում են այգու բույսերը։ Ղրիմի հարավային ծովափում ամենալավ ժամանակն ողոսոսոս, սեպտեմբեր և հոկտեմբեր առ միներն են։ Այս ամիսներին արեն այնպես խիստ չէ այբում և ինչպես ամառը։ Լինում են պարզ և տաք յիղանակ։

Ամառային որ եւ Փայլում ե վառարկությունների տակ ծովը խաղում ե կանաչ, կապույտ և մուգ կապույտ գույններով։ Մովք առ լիքները հարձակվում են ծովեղերոքի վրա և աղմուկով զարկվում ժայռուերին ու ցրիլ դալիս

ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կիմա։ Ղրիմի հարավային ծովա-
փը Ղրիմի լեռներով պաշտպանվում
և հյուստային ցուրտ քամիներից։

Բարձրության հետ կլիման փոխվում է: Նույնիսկ ամառը չեռներում զով է: Այնտեղ հաճախ անձրևներ գալիս են այն ժամանակ, յերբ ծովափին լինում է շոգ և ջոր:

Գետերը: Դրիմի հարավային ծովափին քիչ գետեր կան: Նրանք սկսվում են լեռներում կամ առաջանում են աղբյուրներից: Դարնանը, ձյունը հայլելու ժամանակ, իսկ ամառը, սարերում առաջացող հեղեղներից հետո, — զետերը կատաղում են և ափերից դուրս գալիս: Նրանց մեծ մասն ամառը ցամաքում է:

Բուսականությունը: Դրիմի հարավային ծովափում մշտադպար բույսեր շատ կան: Նրանց տերևները կոչտ են և ծածկված հաստ թաղանթով: Այսպիսի բույսեր վոչ ամառային շոգից են վախենում, վոչ ել ձմեռային ցրաերից. Նրանք ամբողջ տարին պահպանում են իրենց սաղարթը: Այսպիսի բույսերից երազեղը, վոր փաթթաթվում և ծառերին: Նա իր ճանկերի միջոցով բարձրանում և ծառերի գաղաթները և իր կոշտ, մութ-կանաչ տերևներով ծածկում նրանց:

Բայց Դրիմի հարավային ծովափին վայրենի բուսականություն քիչ կա: Բույսերի մեծ մասն աճեցրել են մարդիկ: Այստեղ հաջողությամբ աճում են մանավանդ մի քանի մշտադպալար բույսեր, վորոնք բերվել են ուրիշ մերձարևադարձային շրջաններից, դրանցից աչքի յեն ընկնում դափնին (ունի հոտավետ և կոշտ տերևներ, վորոնք գործ են ածվում կերակրի մեջ, վորապես համեմունք), ձիթենու ծառ, վորի պատուղներից ընտիր յուղ և սոսացվում, կիսպարիսը (փշտոտերէ ծառեր են) աճեցնում են պարկերում զարգարանքի համար: Այդքնիրում հաճախ աճեցնում են թլեանդրներ և մազմոլիամեր:

Խոտաբույսերը ծովափին փոխվում են տարբյա յեղանակների համեմատ: Վաղ գարնանը, արեկից սաքացող լանջերին ծաղկում են ճնծաղիկներ և մանուշակներ:

Այնուհետեւ վառ կանաչով ու ծաղիկներով ծածկվում և ամբողջ ծովափը: Ամառվա շոգերին կանաչ խոտերը զեղնում, չորսանում են: Նրանց փոխարինում են նոսր, կոշտ խոտերը, վորոնք ծածկված են լինում փշերով: Այժմ սուր կերպով աչքի յեն ընկնում մերկացած հողամատեր, քարակույտեր և խիճ:

Միայն այնաեղ, վորտեղ զետակ և հոսում կամ առու քաշը ունեցում, ամբողջ աարին լինում են խոտեր, վառ ծաղիկներ:



Նկ. 65. Թաքարական գյուղ

Թաքարանալով՝ լեռները մենք տեսնում ենք, վոր յեղանակը չետպհետե զովանում և և նույնիսկ անձրեներ են դալիս։ Դրա հետ փոխախում և և բուսականությունը։ Լեռնալանջերում դեռ յերեսում են կենա-կենա Ղրիմի տանիներ, այնուհետեւ սոճու ամս բողջ անտառներ։

Ալելի բարձր, վորտեղ շատ անձրեներ են դալիս, յերեսու են նաև սաղարթավոր ծառեր՝ Կաղնի, հացի, հանարի և շատ քիուններ։

Ղրիմի լեռների մի քանի տեղերում դեռ պահպանվել են յերակու հարյուրամյա կաղնու անտառներ։

Ղրիմի լեռների գաղաթները տափակ են։ Նրանք ծածկված են լեռնային մարգագետինների կանաչ գորգով։

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը Ղրիմի անտառներն անհինա վշնչացվում եյին։ Դրա շնորհիվ հողի մեջ խոնավությունը պահպանեց, մի քանի գետեր ցամաքեցին։

Անտառները լեռնալանջերում պահում են անձրեկ ջրերը,

պաշտպանում են գետերն ու առաները ցածրացելուց . անտառները շատ ջուր են գոլորշիացնում և դրանով մեծացնում են աճածածությունը : Այդ պատճառով անտառների պահպանումը կարեւոր նշանակություն ունի Ղրիմի ծովափի չոր կլիմայի համար :

Այժմ Ղրիմում պահպանվում են անտառները . մի քանի անտառամասներ դարձված են արգելավայրեր : Այստեղ արգելված են ծառ կտրել, ծաղիկ պոկել, կրակ վառել, վորորդություն անել, ճույնիսկ քարերը տեղահան անել և կոլեկցիաներ հավաքել :

Կենդանական աշխարհ : Ղրիմի կենդանական աշխարհն աղբյուր է, նա սաստիկ վոշնչացման և յենթարկվել մարզու կողմից :

Այստեղ շատ մողեսներ, ու ոձեր կան, բայց նրանց հեշտ չի նկատել : Նրանց գույնը նման է շրջապատող այն ժայռեղի և քարերի գույնին, վրա նրանք տաքանում են : Մարդու մոտենալու ժամանակ՝ մողեսները վայրկենապես թաղնվում են ճեղքերում :

Տաք արև որերին ոգը լցված ե լինում խոշոր միջատների կեր ճթճթոցավ : Ամբողջ որը լսվում են այդ ձայները ծառերից . թվում ե, թէ հնչում ե ամեն մի ճյուղ, ամեն մի տերեւ :

Սարերի վրա պատահում են և ուրիշ կենդանիներ : Յերբեմն պատահում են յեղջերուներ և վայրի այծեր : Անմատչելի ժայռերում բուն են դրեւ արծիվները :

ՂՐԻՄԻ ԾՈՎԱՓԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղրիմի հիմնական բնակչությունը թաթարներն են : Թաթարներն պյուղերը ցրված են գետահովիտներում և Ղրիմի լեռների լանջերին :

Այստեղ ամեն ինչ քարից ե՝ տները, գոմերը, փողոցները, բակի պատերը :

Թաթարներն պյուղում փոքրիկ տները—«սակլյաները» դատավորված են առտիճաններով : Տան հետեւ պատը յերբեմն հենց լինը ժարու և կաղծում : Մնացու պատերը շինված են լինում քարեց և կավից : Կտուրները լինում են առփակ հողեւ : Տանիք-

ների վրա քում են և միրդ շորացնում։ Կտուրը բակի և դժու
զոցի դեր և կտուրում քէջ բարձր գանձող տան համար։ Դյուռ
զի ծայրը դուրս դալու համար պետք և մի կտուրից մյուսն անց-
նել քարե նեղ սանդուխքներով։



Նկ. 66. Խաղողաբաղ

**ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՆՈՎԱՓԻ-
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԿՑԱՆՔԸ**

Աբե որերի շատությունը հնարավորություն և տալիս ծոռ
մափին աճեցնելու արժեքավոր կուլտուրական բույսեր։

Այդիներում հասնում են դեղձ, ծիրան, նուշ, ձիթապտուղ,
ըմկույզ։ Հնդկարձակ տարածություններ բռնված են խաղողի
այդիներով և թանկարժեք տեխնիկական բույսերով։

Վորպեսզի այդ բույսերը շոշ ժամանակ չչորանան, ջուր և
հարկավոր ջրելու համար։ Այնտեղ, վարտեղ ծովափին ջուր կտ.,
երար հետեւից շարվում են պաղատու և խաղողի այդիներ, պար-
կեր։ Վորտեղ ջուր չկա, այնտեղ շոշ ժամանակ ամեն ինչ թա-
տամում և վոշնչանում ե,

Զուրը ծովափում մեծ հարսանւթյուն ե:

Զքավոր թաթարները խորհրդայնացումից առաջ շատ վաս և յին ապրում: Նրիմի հարսվային ծովափի ամենալավ Հողերը պատկանում եյին կալվածատարերին և թագավորի պալատական-ներին: Այսոնդ կալվածը ուներ և ինքը թագավորը:

Զքավորներին եժան չեր նստում նաև ջուրը: Նրանք շարու-նակ կարիքի մեջ եյին և կախված եյին հարուստներից:

Զքավոր թաթարները համարյա բացառապես անդրագետ եյին:

Նրիմի ծովափի աշխատավորներն այժմ նոր կյանքով են ապ-
րում: Հողերը, խաղողի և մրգի այգիները դարձել են սոցիալիս-
տական սեփականություն: Անհատուական տնտեսության փոխարեն
ամեն տեղ կազմակերպված են կոլեկտիվ տնտեսություն, վորոնք
պայքարում են տնտեսության բարձրացման և կոլտնտեսականի
կյանքի բարեկավման համար:

Բացված են տասնյակներով դպրոցներ, վորտեղ դասավան-
դումները տարվում են թաթարական լեզվով: Բացված են նաև
շատ դըադարաններ, դասընթացներ հասակավորների համար:



Խաղողը ծովափի կարեոր բռւյսերից մեկն ե:

Շատ կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ զբաղվում են գլխավորապես խաղողի մշակությամբ:

Նկարի վրա ցույց և արված խաղողի քաղը խորհրդային տնտեսություններից մեկում: Խաղողի այդին փռվել և լիուան հարավային լանջին՝ այստեղ շատ արե կա և խաղողի քաղը տեսակները չուտ են հասնում: Խաղողի քաղը գնում և հաջող: Հասած վողկույրները պետք եւ ժամանակին կարել: Տանրակներով բանվորներ զբաղված են խաղողի քաղով: Խաղողով լցված կողովները դարսում են բնուակիր ավտոմոբիլի վրա: Լավ իճուզու վրայով խաղողը տեղափոխում են խորհրդային տնտեսության պահեստը: Այստեղից խաղողի մի մասը կուղարկեն սանատորիաներ՝ հիվանդների և հանգստացողների համար: մի մասը կանաչափոխնեն հյուսիս, հեռավոր պրոլետարական քաղաքները: մի մասից ել գինի կաղաքաստեն:

ՂՐԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԿԵՆՍԱՐԱՐԱՆՆ Ե

Զոր և տաք կլիման, ծովային մաքուր ողը, խաղողը և մըրգերը շատ հիվանդների յեն գրավում դեպի Ղրիմի հարավային ծովափը: Ղրիմն ոգտակար և մանավանդ թոքախտավորների համար:

Բայց մինչ հեղափոխությունը Ղրիմի հարավային ծովափի բնության առողջարար ուժերն աշխատավորների համար մատչելի չեյին: Ցարի և պալատականների պալատներն ու հարուստների ամառանոցներն այժմ դարձել են աշխատավորների համար հանգստի տներ և սանատորիաներ: Ցարական ամենալավ պալատում շինել են կոլտնտեսականների համար սանատորիա:

ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՑԵԶԵՐՔԸ

Կովկասի Սևծովյան յեղերքը գտնվում ե Ղրիմի ծովափից գեղի արևելք:

Քարտեղի վրա ցույց ավել կովկասի Սևծովյան յեղերքը: Մովկերքէ ընդհանուր տեսքը:

68-րդ Ակարով ցույց և տվյալների կովկասի Սևծովյան յեղերքը
նոյեմբեր ամսին:

Մովափիը հեղեղված է արեւով: Ողն այնքան տաք է, վոր նոռ-
յեմբերին մարդիկ ման են գալիս թեթև հազուատով, իսկ վո-
մանք լողանում են ծովում: Մովափինյա լանջին տնկած են ման-
գարինի և նարնջի ծառերի այգիներ:

Վոսկեղույն նարինջներն ու մանղարիններն արդեն հասել են
և պարզ յերեսում են տերենների մութ կանաչի մեջ: Շուտով
կոկողի բերքահալվաքը և ստացած բերքը կուղարկվի ԽՍՀՄ-ի
զանազան քաղաքները:

Այդու կողքով անցնում է մի հրաշալի խճուղի: Սլանում ե
ալտոմորիլը, վորի մեջ նստած են հիվանդներ: Նրանք զնում են
սարի լանջին տեղափորված սանատորիան: Սանատորիայի առաջ
դցված և պարկ:

Սանատորիայից յերեսում է գետի հովիտը և կամուրջը: Այս-



Նկ. 68. Գոմեշները ծանրության են փոխադրում

տեղ աճում են թանգարժեք կուլտուրական բույսեր: Մշակված
հողամասերը շրջապատված են անտառներով: Այս և գժվարան-
ցանելի անտառները ծածկում են ծովերդերքը և լիոնալանջերը:

Մովկեղերքը դեղեցիկ թեքլանեքներով անցնում է Հեռումները՝
Ափերի մոտ ծփում և տաք, յերբեք չսառչող ծովիք։ Մովկե-
ղերքի վրա բարձրանում են լեռներ, վորոնք պաշտպանում են
այդ ծովկեղերքը հյուսիսային ցուրտ քամիներից։ Նրանց առան-
ձին գաղաթները ծածկված են ձյունով։

ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մակերևույթի կազմուրյումը։ Կովկասի Սևծովյան տփերն
ամեն տեղ նույն լայնությունը չունեն (հետեւցեք քարտեղի մի-
ջոցով)։

Հյուսիս-արևմտյան մասում կովկասյան լեռները հասնում,
են համարյա մինչև ծովկեղերքը։ Դեպի հարավ-արևելք լեռները
հեռանում են ծովից և այստեղ, գետահովտի յերկարությամբ՝
սաացվում և մի ցածրադիր հարթություն, վոր կոչվում և Խաչ-
խիդյան դաշտավայր։

Ամրող ծովկեղերքը դարձած և գեղի տաք ծովի կողմը (1)
Նրա վրա բարձրանում են կովկասյան լեռները, վորոնք 2—3
անգամ բարձր են Ղրիմի լեռներից։ Շատ գաղաթներ ծածկված
են հավերժական ձյունով և սառույցներով։

Կիլմա։ Մովկեղերքի կլիման խոնակ և մերձարևադարձային։

Մովի կողմից փչող արևմտյան քամիները դեպի ծովափն են
բերում մեծ քանակությամբ խոնավություն։ Այս խոնավու-
թյունն առատորեն թափվում և լեռնալանջերում։

Կովկասյան ծովկեղերքին ձմեռը նույնպես ձյունոտ և ցուրտ
չի լինում, ինչպես Ղրիմի հարավային ծովափերին։ Ամառը
նույնպես յերկարատես և շոգ։ Բայց տեղումներն այստեղ ա-
վելի առատ են։ Անձրևները գալիս են ամրող տարին։ Շատ
անձրևներ լինում են մանավանդ ամառը։ Յերբեմն մեկ որվա մեջ
այստեղ այնքան անձրեւ և գալիս, վորքան ԽՍՀ Միության ուրիշ
տեղերում մի տարվա մեջ։ Բաթումի շրջակայքը ԽՍՀՄ-ի ամե-
նախոնավ տեղն է։

Գետերը։ Կովկասյան լեռներից շատ գետեր են հոսում գե-
ղի ծովկավը։ Նրանց մեծ մասը հոսում և լեռների ձյունի սա-
ռույցների տակից։ Նրանք կատաղորեն ցած են հոսում լեռնե-
րից, իրենց հետ աեղափոխելով մեծ քանակությամբ քարեր, առ-

Դաղ և տիզմ։ Հարթության վրա նրանց հռոանքը դանդաղում է, և շրերը բողնում են այստեղ սարերից բերած քարերը, ավազը և տիզմ։ Ամառը լիններում յեկող կատաղի անձրեներից գետեր վարւրում են և ափերից դուրս գալով ծածկում ցածրաղիք տեղերը։

Բուսականություն։ ԽՍՀՄ-ի մեջ վոչ մի տեղ այնպիսի փարթամ բուսականություն չկա, ինչպես մեր յերկրի այս տաք և խոնաղ անկյունում։ Թե՛ ծովափը և թե՛ լիննալանջերը ծածկված են անտառների ամբողջական կանաչ զանգվածներով։ Մովագինյա բնակչությունը շարունակ պայքարում և այս կատաղի բուսականության դեմ։ 1—2 տարվա մեջ աչքաթող արած վարելահողը ծածկվում և յերկու մետր բարձրություն ունեցող ձարիստով կամ հինգ-վեց մետր բարձրություն ունեցող անտառով։

Մովագինյա անտառները բաղկացած են բազմազան ծայրերից։ Նրանց մեջ պատահում են նաև պոտղատու ծառեր՝ տանձենի, սալորենի, խաղողի վորթ։ Քիչ չեն նաև մշտադալար բույսերը։ Դափիթին, դափնակեռասենին, ծառերը փաթաթված են պատատուկներով։ Նրանցից վոմանք ունեն սուր-սուր փշեր։ Այսպիսի խճճված անտառների միջով առանց կացնի կամ լավ խանչալի շարժվել չի կարելի, ամեն մի շարժում անելիս փշերը բռնում են մարդու շորը և խըլում մարմնի մեջ։

Խիտ ու դժվարանցանելի յեն մանալանդ կոլխիդայի դաշտավայրի կիսահեղեղված անտառները։ Մի քանի տեղերում միայն անտառը հետ և քաշվում, վորովեսղի տեղ տա ճաճճուտներին, վորտեղ մարդ կարող է խեղդվել կամ հիվանդանալ կովկասյան մաշող տենդով։


Դեպի վեր, լեռնայանջերում կլիման փոխվում և, փոխվում և և բուսականությունը, Անտառներում անհետանում են մշտադալար բույսերը և լինները (պատատուկները)։ Յերեսում են ծառերի ուրիշ տեսակներ։ Ամելի բարձր գալիս են լեռնային մարդագագարինները, իսկ հետո հավերժական ձյունը և սառուցը։

Հողեր։ Անդրկովկասի Սևեռվյան յեղերքին պատահում են առանձին տեսակի կարմիր հողեր «կարմրահողեր»։ Դրանք ամենալավ հողերն են այնպիսի թանգարժեք բույսերի համար, ինչպիսին են թեյը, կիտրոնը, նարինջը, մանղարինը։

Կենդանական աշխարհ : Կենդանական աշխարհը նույնպես՝ փոխվում է բարձրության և բուսական աշխարհի հետ : Սկզբով՝ յս յեղերքի մոտ լեռներում պահպանվել են բաղմաթիվ խոչըս՝ կենդանիներ, վորոնք յերկրագնդի ուրիշ տեղերում հազվագյուտ են : Առաջ թագավորը և իր մերձավորները դալիս եյին այսաեղ վորսի : Իսկ այժմ կենտղործկոմի վորոշման համաձայն այսաեղ սահմանված է մի արգելավայրը 350 հազար հեկտար տարածությամբ : Այս արգելավայրի նպատակն է պահպանել կովկասյան բնությունն իր բուսական և կենդանական աշխարհներով :

Այսաեղ ապրում են յեղերթուներ, ընձառյաւծներ, հովագներ : Բարձր լեռներում պատահում են լեռնային վաչխարներն ժայռերի և անմատչելի ծերպերում բուն են դրել արծիվները :

Սկզբան յեղերքի տաք կլիման ովտագործվել և կապիկներ,



Նկ. 69. Թեյի տնկարանում

բաղմացնելու համար, վորոնք պետք են դիտական նպատակների համար : Մովագին հիմնել են կապիկների բուժարան :

Վորպես աշխատավոր անառնեներ ծովագին պահում են գոմեցներ : Սրանք ուժեղ կենդանիներ են, վորոնք կարտղանում են ծանր բեռներ փոխադրել նույնիսկ լեռներում : Գոմեցները

կրտող են ոպղբել միայն առաք կը իմաստ ունեցող յերկրներում : Նրանք ծածկված են հառա , համարյա ըրդից դուրի կաշվով :

Առաջապարհության 1. Դրիմի հարավային ծովափի կը իման համեմատեցեք Կովկասի Սևծովյան ափերի հետ :

2. Խչո՞ւ Կովկասի Սևծովյան յեղերքի ավելի խոնալ է :

3. Խչո՞ւ Կովկասյան ծովներքի բաւականաթիւնն ավելի հարուստ է Դրիմի բուսականաթիւնից :

ՄՈՎԵԶԵՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Կովկասի Սևծովյան յեղերքին ապրում են կովկասյան ժողովուրդներ՝ արխազներ, աճարացիներ և վրացիներ :

Մովեղերքի մեծ մասը բռնել են արխազները և աճարացիները :

Արխազների գլխավոր զրադաշնուրքը յերկրադրծությունն է : Նրանց ցանում են յեղիստացորեն, մշակում են նաև խաղող : Բայց խաղողի մշակությունը լավ հիմքերի վրա չի դրված . խաղողի վորից սովորաբար աճում և ազատ, փաթաթվելով ծառերին : Արխազների գյուղերը ցրված են առանձին-առանձին տների ձևով . յուրաքանչյուր տուն շրջապատված և խաղողի և մրգի այդիներով և յեղիստացորենի արտերով : Տները հյուսված են ճիզուոտներից կամ շինված են առախտակներից, շրջապատված են պատշգամբներով և դրված են ոյուների վրա :

Այստեղ կարելի յէ ապրել և առանց առաք տների : Աջարացիք տարում են ծովեղերքի հարավային և հարավ-արևելյան մասում, ընդհանուր առմամբ ունեն նույն կենցաղը, ինչ-վոր արխազցիք :

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԴԱՆՈՒՄ ԿՈՎԿԱՍԻ ՄԵՎԾՈՎԵԱՆ ՅԵԶԵՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԸ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ՆՐԱ ԿԵԱՆՔԸ

Մանր եր կովկասի և Սևծովյան յեղերքի ժողովուրդների կրտու ցարական թուատանում :

Յարակուն կառավարությունը գենքի ուժով տիրեց կովկասյան ժաղովուրդներին և գրավեց ամենալավ հողերը :

Արխազներն ավելի համառ դիմադրություն ցույց ավելի կովկա

կատին ակրապեառելու ժամանակ : Տասնյակ տարիներ նըսնք կը ու վաւ եյին ցարական կառավարության դեմ :

Վերջապես, շրջապատվելով ցարական մեծ բանակների յերկաթե ողակով, արխազներն ստիպված յեղան անձնատուր լինել : Շատերը նրանցից մեռան դենքը ձեռքերին, իսկ մի քանի հազար մարդ ել գաղթեց Թյուրքիա :

Այները հողերը ցարական կառավարության կողմից առատորեն բաժանվում եյին սպաններին և չինովնիկներին :

Բնակչության գաժան շահագործման միջոցով այստեղ սկսեցին մշակել ծխախոս, թեյ, կիտրոն և մանղարին :

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կովկասի Սևծովյան յեղերքի բնակչության կյանքը նոր թափ ստացավ :

Ամբողջ ծովեղերքին ցրված են կոլեկտորներ և խորհրդային տնտեսություններ, վորտեղ մշակում են թանգարժեք կուլտուրական բույսեր՝ թեյ, կիտրոններ, նարինջ, մանղարին, զանազան տեխնիկական և գեղատու բույսեր :

Գետերի հովիտներում կառուցում են գործարաններ : Անց են կացնում նոր խճուղիներ և յերկաթուղիներ դեպի ծովեղերքի խորքերը :

Ամենահեռավոր դյուղերում պայքարում են անգրագիտության դեմ, կառուցում են հիվանդանոցներ, դպրոցներ, վորտեղ զառատվությունը տարվում ե ազգաբնակչության մայրենի լիդվով :

Ծովեղերքի պալատներն ու ամառանոցները դարձրել են սանատորիաներ և հանգստի տներ : Կառուցվում են նոր սանատորիաներ և հիվանդանոցներ :

Կովկասյան ծովեղերքը, Նովոսովիյսկից մինչև Բաթում, ԽՍՀՄ-ի ծաղկած անկյունն ե :

Ամբողջ ծովեղերքով անցնում ե խճուղի : Գեղեցիկ գալարումներով նա մերթ իջնում ե դեպի ծովը, մերթ բարձրանում լեռները, կամ կամուրջներով անցնում ե բաղմաթիվ լեռնային գետերի վրայով : Ամբողջ ճանապարհի յերշարությամբ ձգվում են մրդի և խաղողի այգիներ, ծխախոսի պլանտացիաներ, արմա-

Կենդաների և կիսպարիսների պարկեր, ուղղեցիկ սահմառիաներ և
հանգստի տներ:

Կուտակցությունը վորոշել և կոլիխդէ դաշտավայրն իր ճա-
ճիճներով, տենդով և անանցանելի անտառներով դարձնել ծաղ-
կած այդի:

Դ ԿՈԼԵԽԻԴՆԵՐԸ ՃԱՂԿԱՌ ԱՅԳԻ ԿԻԱՐԱՆԱՆ

Կոլիխդէ հարթությունը դանվում և Բաթումից դեպի Հյու-
սիս-արևելք:

Թարտեղի վրա զտեց Կոլիխդէ դաշտավայրը: Նու զտելում և Բաթում
շաղաքից դեպի Հյուսիս-արևելք:

Դեռևս քիչ առաջ Կոլիխդէ դաշտավայրը ծածկված եր ճահ-
ճուտներով և անանցանելի անտառներով, վոչ ճանապարհներ
կային, վոչ հարժար արահետներ: Մարդիկ երար հետ հաղոր-



դակցություն։ Եյին պահպանում դետերի միջոցով։ Նոսր բնակչությունը բնակություն եր հաստատել ավելի բարձր տեղերում։ Փռքիկ հողամասերը բոնված եյին յեզիպացորենով և խաղողով։ Բնակիչները հիվանդանում եյին տենդով։ Նրանք շարունակ պայքար եյին մզում անտառների գեմ, վորոնք առաջ եյին շարժվում դեպի վարելահողերը, և դետերի գեմ, վորոնք վարարման ժամանակ սպառնում եյին վոչնչացնել ցանքսերը։

Այժմ կոլլիսիդան արագորեն փոխվում է։ Անանցանելի ճահիճները չորացվում են՝ առուների խիտ ցանցի ոգնությամբ։ Անց են կացնում նոր ճանապարհներ։ Կարտում են քիչ արժեք ունեցող անանցանելի անտառները։

Այժմ արգեն ճահիճներից խլված և մի քանի հազար հեկտար հող։ Յեզ այնտեղ, վորտեղ քիչ առաջ ճահիճներներ եյին, այժմ աճում են արմավենիներ, մշակում են թանգարժեք բույսեր, յերեան են գալիս նարնջի, կիտրոնի և մանդարինի ծառերի արդիներ, ավելի ու ավելի յեն ընդարձակվում թեյի տնկարանների տարածությունները։ Յերևան են գալիս թանգարժեք տեխնիկական բույսերի տնկարաններ։

Զինական յեղիթթի կամ ըամիի տնկարանները տալիս են բարձր վորակի մետաքսանման թելիքներ։

Տունգայի ծառի տնկարանները տալիս են ձեթ՝ լավ տեսակի լաք ուստարաստելու համար։

Կառւչուկաբեր բույսերի տնկարաններ։ սրանց հյութից պատրաստվում են ուստին։

ԹԵՑԻ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

Գնացքն արագորեն սլանում եր աղմկատ բաթումից դեպի Զակվա։ Մեր մոտով մեկը մյուսի հետեւց անցնում եյին ծաղիկների մեջ թաղված տներ, թիկերի և բարձր ծառերի խիտ մացառուտներ, փաթաթված փշոտ պատատումներով։ Մտերի կոշտ, մութ կանաչ տերևները փայլում եյին անձրևի տակ։

Աննկատելի կերպով անցանք 13 կիլոմետր հյուսիս-արևելյան ուղղությամբ։ Գնացքը կանգ առավ Զակվայում։ Դուրս յեկանք վաղոնից։ Արմավենիների ծառուղին առնում են դեպի բամբուռի, մանգարինի և թեյի տնկարանները։

Մենք ուշեռը լեցինք գեղի թեյի տնկարանը։ Վայրը բլրուա
եր։ Բլուզներէ լանջերէն կանոնավոր շարքերով տնկած եյին թեյի
թփեր։ Նրանք իրենց մութ կանաչով սուր կերպով ջոկվում եյին
կարմիր հողի վրա։ Մի քանի հարյուր մարդ պոկոտում են թեյի
վերին տերևները և դարսում կողովների մեջ։

Թեյի աերևներով լի կողովները բեռնակիր ավտոմոբիլնե-
րով տեղափոխում են թեյի Փարբիկան։

Ֆարբիկայում թեյի կանաչ տերևներից ստանում են այն
թեյը, վոր մնաք դցում ենք թեյամանի մեջ դույն ստանալու հա-
մար։

Թեյի տնկարանները կովկասյան ծովափին ներկայումս տաս-
նյակ հազար հեկտար տարածություն են բռնում։ Մեծ քանա-
կությամբ թեյ արտադրում են կոլեկտիվ տնտեսությունները,
վորոնք միացրել են տասնյակ հազար գյուղացիական տնտեսու-



Նկ. 71. Կիրճ

թյումները, և խորհրդային անտեսությունները։ Կոլեկտիվ աշխատակիցներին ոգինություն հասցնելու համար հիմնավել են հատուկ թեյի մեքենա-արակուրային կայաններ։ Խորհրդային անտեսություններում գործադրվում են բազմապիսի մեքենաներ։

Բ Ա Բ Ո Ւ Մ

Կովկասի Սևանվյան ագին դառնվում և համամիութենական նշանակություն ունեցող նավահանգիստ՝ Բաթումը։ Այստեղից արտասահման են փոխադրվում նավթ, միրու, մետաքս։ Բաթումը արդյունաբերական և թանդարժեք մերձարևադարձային բույսերի՝ թեյի, նարնջի, մանդարինի, կիտրոնի և ուրիշ տեխնիկական բույսերի կենտրոն է։

Վարժուրյում։ Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք Բաթում և Նուվորուիյակ քաղաքներ։

Աշխատանք արտադասյան ժամանակ։ Կազմեցեք ալրում ՀԱՀՄ-ի մերձարևադարձային գոտի՝ թեմայով։

8. ԼԵՌՆԵՐ

Մեր Միությունը, ինչպես դիմեք, հսկայական հարթությունների յերկիր և Լեռները դանվում են միայն ծայրամասերում։

ԻՄՀՄ-ի Փիդիկական քարտեզի վրա դանք՝ Աիրինյան, Ռւբայան, Կուլիսյան, Ղըմին, Ալտայան, Տյան-Շան լեռները և Պամիր լեռնաշխարհը։

Լեռները դառնվում են տարրեր զոնաներում։ Ալրայան լեռներն սկսվում են հեռավոր հյուսիսում՝ առունդրայի զոնայում, ասպազայի և սևահողային տափաստաններով ձգվում են դեպի հարավ և վերջանում չոր տափաստաններում։

Կովկասյան և Ղրիմի լեռները դառնվում են մերձարևադարձային և տափաստանների զոնաների միջև։

Տյան-Շանի լեռները և Պամիր լեռնաշխարհը դառնվում են սննդապատճերի զոնայի ծայրամասում։

Վոր զոնայում ել դառնվելիս լինեն այդ լեռները, նրանց միությունն, ինչպես դիմեք, բարձրության հետ գոխվում և,

վորքան ավելի բարձր են լեռները, ձմեռն այնքան ավելի ցուրտ և լինում բարձր լեռների գաղաթները ծածկված են հավերժական ձյունով և սառույցով:

Կլիմայի փոխվելու հետ փոխվում է և բուսականությունը և հեղողական աշխարհը:

ԽՍՀՄ-ի լեռները տարբեր բարձրություն ունեն: Նրանցից ամենաբարձրը Տյան-Շանի լեռներն են. Պամիրում գտնվում է ԽՍՀՄ-ի ամենաբարձր զաղաթը՝ Սասալինի զաղաթը, վորի բարձրությունն է 7½ կիլոմետր:

Դարսեղի վրա գտնեց Սոսոլինի զաղաթը:

ԽՍՀՄ-ի Գեղինուկուն քարտեզին հցած ապյուստի և նկարի միջոցով իմացե՞ 1) ինչպես են կոչվում հիմուն լեռների ամենաբարձր զաղաթները, 2) նրանց վա՞րանը են դանդում:

Լեռները ձգվում են մեկը մյուսի հետեւից և կազմում են լեռնաշղթաներ: Բարձր լեռների զաղաթները բարձրանում են ամպերից ել վեր: Արևի ճառագայթների տակ շլացնող վայրով պսպղում և հավերժական ձյունը: Այսպիսի բարձրության վրա վոչ վոչ չի ապրում: Միայն արծիվներն են թռչում լեռնազարթների մոտով:

Ջրումի զանդվածների ճնշման տակ ձյունապատ դագաթներց դանդաղորեն հոռում են սառույցները: Հեռվից նրանք սառցագետերի յեն նմանվում: Դրանք սառցաղաշտերն են: Հոկայտկան ուժով նրանք հղկում են ժայռերը, պոկում են քարեր և ժայռերի կտորներ են իրենց հետ ցած տանում:

Գահավիժվելով ժայռերից, նրանք կոտրտվում են, փլում և կազմում սառցակոշեր, սառցասյուներ, սառցաժայռեր:

Սառցաղաշտը դանդաղորեն ավելի ու ավելի յե ցածրանում: Բոլորովին վերջում նրա տակից բղյառում և լեռնային զետակը և հոսում դեղի տած: Աղմուկով և դղբղոցով պլուրում և քարտկույսեր: Այսպիսի հեղեղները ժայռերի մեջ փորում են սեպան լանջերով խոր կիրճեր:

Այդպիսի կիրճերի միջով հաճախ կատաղի հեղեղներ են հոսում: Ամեն մէ սառցաղաշտից մէ այլպիսի հեղեղ և առաջ դա-

Առաջին այլ բոլոր Հեղեղները պահապիտվում են դեպի ցած, գեղի հովիտները:

Թվում ե, թե լեռնաշղթաներն անմատչելի յեն, բայց մարդիկ այստեղ նույնպես բնակություն են հաստատել:

Լեռնցիների դյուղերը ցըլած են լեռնալանջերում և հովիտներում: Նրանք բարձր լեռներով բաժանվում են իրարից:

Լեռների գաղաթների միջև պատահում են ցածր տեղեր, վորտեղով լեռնցիներն անցնում են լեռնաշղթան: Այդպիսի տեղերը կոչվում են լեռնանցքներ: Լեռնանցքների վրայով անցնում են ճանապարհներ, վորով դյուղերը կապվում են իրար հետ:

ԿՈՎԿԱՍԻ ԼԵԹՆԵՐՈՒՄ

Լեռների ստորոտներում: Մի խումբ ճանապարհորդներ վորոշեցին բարձրանալ կովկասի ամենամեծ սառցադաշերից մեկը: Նրանք հավաքվեցին Նալչիկում, վորը զտնվում և կովկասյան լեռների ստորոտում:

Ամառային մի չոր որ եր: Վարդը ծաղկում եր, գաշտում լցվում եյին յեղիպտացորենի հատիկները, բոստաններում հասնում եյին սեին ու ձմերուկը: Այդիներից կողովներով շուկա եյին դուրս քերում խալող, ծիրան, խնձոր, տանձ:

Լեռնալանջերը ծածկված եյին հաճարի խիտ անտառներով: Հաճարի անտառներից բարձր սեին եյին տալիս փշատերեւ անտառները: Ավելի բարձր կանաչին եյին տալիս ալպյան մարզագետինները, և սուր կերպով բարձրանում եյին անմատչելի ժայռերի պատերը: Խոկ բարձրունքներում կապույտ յերկնակամարի վրա յերեսում եյին լեռների ձյունապատ գաղաթները: Տարորինակ եր թվում, վոր տարվա այս չոր յեղանակին լեռները ծածկված են ձյունով:

Դեպի արտավայրերը: Յերկու որմա ճանապարհ անցանք: Հաճարի անտառները մնացին ներքեւում: Յեղենու անտառներն սկսեցին նոսրանալ: Լեռնային արաւետը, վորով մենք տառջ եյինք գնում, սառտիկ վողողված եր: Ցածում, մեր տակն աղմը կում եր անտեսանելի հեղեղը: Մեր պլիսովերեւ գեղի վեր եյին ձզլում ահռելի ժայռեր: Նույնպիսի սեպանք ժայռեր զտնվում եյին նաև հեղեղի մյուս ափին: Տեղական արաւետը լցէց վազու-

վել ու քանդավել եր: Մեր եշերը, բարձած շորերսի, վրաններով և ուսելիքով, հայկվ եյին քաշ տալիս իրենց վոտքերը և շուտ-շուտ ույթազում եյին: Մեր առաջնորդները շարունակ բնում եյին նրանց, վոր նրանք անդունդը շգլորվեն:

Նեղ արահետով գլխապատճային բարձրության վրա յերկար վերելքը մեղ սառափիկ հոգնեցրեց:

Արտավայրերում: Վերջապես մենք մի վառ կանաչ հովիտ, վորի մեջ հոսում եր կառաղի, պղտոր հեղեղը: Հարմար արահետը զալարվում եր խիտ խոտով ծածկված մարդադետին-ների միջով: Վոտքներիս տակ թաց եր, առուները քչքչում եյին: Դա խոտհարքերի արհետական վոռովումն եր: Արհետական վոռովման շնորհիվ և միայն, վոր այսակ աճում են վառ, խոչոր, հոտավեա ծաղիկներ ունեցող հյութալի խոտեր: Ահա և վիրջին ծառերը—ցածլիկ սոճիները և կեչիները:

Նրանցից հետո սկսվում են լեռնային մարդադետինները: Բաց լանջերում անասելի այրում եր արեւ: Գետինը ծածկված եր շածլիկ, բայց հյութալի խոտով: Խոտերի միջից նայում եյին համարյա ցողուններից զուրկ, մեծ և վառ ծաղիկներ:

Հանկարծ մեր առաջ, կարծես զետնի տակից, դուրս յեկալ հովիվ-պապը: Շուտով լսվեց մայուն և վոչխարները հետաքըր-քըրությամբ շրջապատեցին մեղ: Մերունին մեղ տարավի իր բնակարանը: Լեռներից ընկած հսկայական քարը գեմ առնելով ուրիշ քարերի՝ առաջացրել եր բնակարանի պատեր և տոստաղ: Այս այրի ներսը փուլած եյին վոչխարի մորթիներ, փայտե դույլերը լիքն եյին մածնով և պանրով: Այստեղ պապն ամքողջ որեւով սպասում և արածող հոտի վերադառնալուն դառնարածների հետ և մեծ վարպետությամբ փայտե գլաներ և շինում: Մենք այստեղ գեշերեցինք, վորպեսզի նոր ուժով շարունակենք մեր վերելքը:

Սաոցադաշտ: Դեռ լույսը չբացված զարթնեցինք: Մառախուղը նոսրացավ և մեր աչքի առաջ բացվեց սաոցադաշտը: Սաոցադաշտի ծայրի սաոցն այրի միջից դուրս եր վազում կատարի գետ:

Սաոցադաշտի վրա անցնելու համար մենք դեռ պետք և անցնեյինք այն հեղեղը, վոր զուրս եր դալիս կողքի սաոցադաշտի

առակից : Հեղեղը քարերն իրար դարկելով աղմկում եր , կարծես պատրաստվում եր պշտոքել ու աանել այն մարդուն , վոր կհանդիպներ ջրի մեջ մանել : Մեր ուղեկիցներն եւերին քշեցին ջրի մեջ : Ջուրը մինչև բեռներն եր հասնում : Խեղճ կենդանիները դողում եյին , հաղիվ վոաքի վրա պահելով իրենց . եշերից մեկն ընկազ և հոսանքը կտաներ նրան , յեթի ուղեկիցը նրան պարանով չպահեր : Մենք մեռք-մեռքի տված հետևում եյինք քարվանին : Մեր վոտքերը նույնիսկ կոչիկների , բրդե հաստ գուլզաների մեջ սառչում եյին , ամեն քայլափոխում մեր վոտքի տակից դուրս եյինք սառչում եյին մեզ : Ենք մենք մյուս ափը գուրս յեկանք , մեր վոտքերը լարվածությունից և կրած անհանդատությունից դողում եյին . բավական եր , վոր մեզնից վորենք մեկը սայթաքեր ու ընկներ , ջուրն անմիջապես նշան կդրորեր ու նախքան ոզնության հասնելը կզարկեր քարերին ու կոպաներ : Կեսորից հետո մենք հասանք մի կանաչ տափարակի , վորտեղ-կարելի յեր վրան զարկել : Գետինը ծածկված եր կանաչ խոտով , քարի տակով հոսում եր սղարդ ու սառնորակ առուն , իսկ շրջակայքում իշխում եր ձյունապատ դագամբներից կախկխված օտարադաշտերի սառցե լուռթյունը : Հետեւյալ առավոտը սղարդ եր , և մենք վորոշեցինք դնալ դեպի սառցադաշտի սկիզբը :

Սառցադաշտի մակերեւույթի վրա ցրված եյին մեծ ու փոքր քարեր . քրքչալով հոսում եյին բազմաթիվ առուներ , վորոնք աղմկելով թափկում եյին սառցադաշտի մեջ դժնվող խոր ճեղքերի կամ սառցե ջըհորների մեջ :

Ցուրտ քամին հարկադրեց տաք հազնվել : Սառույցը և շրջապատող ձյունապատ դագամբները փայլում ելին այնքան վառ , մեր շուրջը հեղեղված եր լույսի և կայծերի այնպիսի ծովով , վոր մենք ստիպված յեղանք մութ ակնոցներ կրել :

Ենք ժամ հետո մենք դժնվում եյինք ձյունի պատի մոտ և հիացած կանդ առանք : Ճանապարհի բոլոր դժվարությունները մոռացանք : Սառցով և ձյունով շղթայված անմատչելի քարե պատից անդադար դժբդում եյին սառցե և ճյան կույտեր :

Իսկ վոտքերիս տակ փուլում եր հսկայական սառցադաշտը : Ամրող սառցադաշտը կտրտված եր անհաշիվ ճեղքերով ու փո-

սերով։ այսակը—այնուեղ կանգնած եյին կապույտ սյուներ, վորոնք սառցադաշտի շարժումից յերբեմն ընկնաւմ եյին և փքր-վում։

Ամպերի մեջ։ Հիացած մեր առաջ բացվող պատկերի դեղեցկությամբ, մենք դեռ յերկար կմնայինք այսուել, բայց ցածից դեսպի մեզ եր դալիս և մի քանի ըրպեյից հետո մեզ ամբողջապես ըրջապատեց սպիտակ մասախուղը։ միանդամից ցրաեց։ Մենք հաղիվ եյինք իբար տեսնում սառցադաշտի մակերեսի վրա։

Մեալը վտանգավոր եր։ Կարելի յեր ճեղքերի մեջ դորբել։

Մենք սկսեցինք խարիսխելով սառցադաշտից ցած իջնել։ Հանկարծ ամպերը նոսրացան, պատռվեցին, և մենք ուղղակի, բարձր ափին, մեղնից ցած տեսանք վրաններ և մեր ուղեկիցներին։ Վասկում եր կրակը, յեփվում եր վոչխարի միսը։

Լեռնային գյուղ կովկասում։ Իրեկնամուտ եր։ Լեռնային արոտատեղերից իջնում եյին տղամարդիկ և կանայք։ Նրանք իրենց ուսերի վրա տանում եյին տկեր, լցված մածնով, այրանով։

Արահետից բացվեց գյուղի տեսարանը։ Առւլը նմանվում եր քարակույտերի, վորոնք ըրջապատող ժայռերի պես նույնպես գորշդեղնավուն եյին։ Առւլի մեջտեղ բարձրանում եր կիսապեր հին աշտարակը։

Ավելի հաճախ եյինք հանդիպում դարու փոքրիկ արտերի։ Ամեն տեղ, վորտեղ քարերի արանքում պատահում եյին թեկուզ հողի բարակ շերտով ծածկված փոքրիկ տարածություններ, փորիքված և ցանված եր։ Ահա և առւլը։ Փողոցներն այնքան նեղ են, վոր յերկու բարձած ել դժվարությամբ կարող են իրար ճանապարհ տալ։ Ցածլիկ սակլյաները շինված եյին տարբեր մեծություն ունեցող քարերից։ Պատերի միջից դեսպի փառոց եյին նայում փոքրիկ, առանց ապակու պատուհանները։ Տափակ կտուրների վրա քամուց որորվում եր խոտը։ Այստեղ մորթի փափախ գլխներին ծալապատիկ նստում են լեռնականները։ Կանայք մեծ շալերը գլխներին բրդից թել են մանում։ իլիկներն անզար պատվում եր նրանց մատների արանքում։ Մի տան մոտ


կանայք լմում եյին թաղիք և յափնչի , վորից շնոնականները յեր-
րեք չեն բաժանվում :

ԻՆՉՉԵՍ ԵՆ ԱԳՐՈՒՄ ԼԵՌՆՑԻՔ

Կովկասյան զանազան ժողովուրդների գյուղերը ցրված են
լեռնալանջերում և զետահովիտներում : Անանցանելի ձյուները և
անմատչելի ժայռերը բաժանում են մի ժողովուրդ մի ուրիշից :
Յուրաքանչյուր փոքրիկ ժողովուրդ շատ դարերի ընթացքում
ապրել ե իր առանձին կյանքով : Հենց հեղափոխությունից առաջ
նրանց կյանքը նույնն եր , ինչ վոր մի քանի դար առաջ :
Հեղափոխությունն ամենահետամնաց կովկասյան ժողո-
վուրդներին արթնացրեց կյանքի համար :

ՍՎԱՆԵԹԻԱՅՈՒՄ

Լեռների խորքում ընկած և մի փոքրիկ յերկիր — Սվանե-
թիան : Նա ամբողջ աշխարհից կտրված և անմատչելի լեռներով :



Նկ. 72. Գյուղ Սվանեթիայում

Միայն մէ նեղ վաստնդավոր արահետ և անցնում սեպամեն ժայռի վրայով, կատաղի ինգուր գետից բարձր։ Այս արահետով սվան-ներն ամառները կարողանում են կապվել մհացած աշխարհի հետ, իսկ ձմեռը հաղորդակցությունը բոլորովին կարգում եւ։

Այս փոքրիկ ժողովուրդը, վոր բաղկացած և ընդամենը 11 հազար մարդուց, մինչեւ հեղափոխությունը պահպանում եր իր հին կենցաղը և նախնական տնտեսությունը։

Սվանները մեծ ջանասիրությամբ մշակում են իրենց փոքրիկ հոգամասերը։ Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը դեռևս մնում եյին նախնական դործիքներ, գութանի փոխարքն մի փայտի կտոր գեպի ցած ծոված արմատով, վորին հազցրած եր խոփառականի փոխարեն—մի գերան, վորի վրա ցցված եյին ճյուղեր, կալսող մեջենայի փոխարեն—կամ (տախտակ, վրան քարեր), վոր յեղները խուրմերի վրայով քաշ եյին տալիս։ Սվաննեթիան չդիտեր, թէ անիվն ինչ բան եւ խուրձը և խոտը սահնակներով եյին կրում, իսկ մարդիկ բեռներն անց եյին կացնում լեռներով վոտքով կամ ձիով։ Բացի ձիու և վորսորդական արահետներից, Սվաննեթիայում ուրիշ ճանապարհ չկար։



Նկ. 73.

Սվանները սիստմապաշտ եյին։ Սրբողան պուրակները, ուրբազան ծառերը և ապքառւրները, սրբազան կենդանիները, չար և բարի վոգիները, լուսնին պաշտելը, աշխատանքից սուսաջ զոհ բերելը—այս բոլոր հոգության մնացորդները մեծ վնաս եյին հասցնում սվանների տնտեսությանը։ Բայց տմենավատը դա արյան վրեժն է, վոր դեռևս այստեղ-այնտեղ մնացել է։ Վիրավորանքի կամ սպանության համար բոլոր աղքականները վրեժ են լուծում վիրավորողի աղքականներից շատ սերունդների ընթացքում։ Նրանք կարող եյին մահից աղատվել միայն այն դեպքում, յիթե թողնեյին իրենց հայրենիքը։

Այդպես եյին ապրում ամբողջ աշխարհից կտրված սվանները մինչ հեղափոխությունը։

Այժմ բուռն շինարարությունը յուրաքանչյուր տարի, յուրաքանչյուր ամիս փոխում ե Սվաննեթիայի կյանքը։ Սվաննեթիան տպատվելով իշխաններից, հարձակումներից, և ավերումներից, այժմ շտապում ե հասնել կուլտուրական ժողովուրդներին։

Աշտարակների և ծխոտված, առանց լույսի, առանց ողի, հին տների կողքին բարձրանում են վառարաններով և պատուհաններով նոր լուսավոր տներ։ Սվաննեթիայի կենարոնում վառվեցին ելեկտրական լաստերները, շինված և մեծ բազանիք։ Բացված են կոոպերատիվ, հաստակական ճաշարան։

Ամբողջ յերկերը ծածկվել ե դպրոցների, հիվանդանոցների, անառնարումական կետերի ցանցով։ Յեկ քիչ սվաններ չեն սովորում մեր տեխնիկումներում և համալսարաններում։

Ինգուր դետի յերկարությամբ Սեծովյան յեղերքից սկսած, կոռուցված և խճուղի, վորով կերպնեկեն ավտոմոբիլներ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՄՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի ժողովուրդները միացան և կազմեցին Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհրդային Համբավետությունների Ֆեդերացիա (ԱՍԽՖՀ)։

Ամբողջ Կովկասում ծավալվել ե շինարարությունը։ Անց են

կացլում ճանապարհներ : Այժմ նույնիսկ ամենախուլ տունները կազմած են Միության զանազան դյուզերի և քաղաքների հետ : Ստեղծվում ե նոր տնտեսություն :

Լեռնային կատաղի գետերը, վոր առաջ քչում, տանում եյին կամուրջները, քանդում եյին ափերը և դյուզերը, այժմ սկսում են աշխատել մարդկանց ոգտին : Արդեն կառուցվում են բաղմաթիվ հիդրոկայաններ :

Այս կայանների կառուցումը տնտեսական մեծ նշանակություն ունի : Հիդրոֆայաններն եներգիա յեն տալիս ամբողջ շրջանի արդյունաբերությանը : Առաջանում են նոր արտադրություններ : Զքալոր լեռնիցք դառնում են արդյունաբերական բանվորներ : Զարգանում ե անայնագործությունը : Ելեկտրական լույսը տարածվում ե լեռնային առուներում :

Լեռների ծոցում շատ հարստություններ են թաղնված : Այնտեղ գտնվում են զանազան հանքեր, քարածուխ, թանկաղին քարեր և վերջապես նավթ :

Դարերով ընկած են այս հարստությունները, հեռու մարդկանց աչքից : Գետք եր հետախուզական մեծ աշխատանք թափել և ուսումնասիրել լեռների կազմությունը, վորակեսզի այդ հարըստությունները յերեան բերվեն :

Լեռները կենդանացան : Խուլ, անմատչելի կիրճերում, ձյան սահմանում և սատցաղաշաերի մոտ, ամբողջ կովկասում աշխատում են ինժեներների և դիտնականների հետախուզական խմբերը : Նրանք ծակում են քարը, փորում հորեր և հանում լեռնային ակսակների նմուշներ : Յերբ դանվում ե ողտակար հանածոնների հարուստ վորքե իսակ, անմիջապես կառուցում են հորեր և գործարաններ :

Շատ հանքեր են դանվել կովկասում, Ակտայում և Գամիրում : Բայց դեռ քիչ են ուսումնասիրված լեռները : Նրանց ծոցում դեռ շատ հարստություններ են թաղնված :


ՈՒՐԱԾԱՆ ԼԵՐՆԵՐ

Հյուսիսային Սառուցյալ սվերանոսից դեպէ հարավ՝ 2500 կիլոմետր տարածության վրա ձգվում ե վոչ բարձր Ռոբալյան

լեռնաշղթան; Ուրալյան լեռները կտղմում են յերկու աշխարհամասերի՝ Յեվրոպայի և Ասիայի ստհմանները:

ԵԵՐԿԱԹՈՒՂՈՎ, ՈՒՐԱԼՑԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՑԻ ՎՐԱՅՈՎ.

Ուժա կայարանում վորքը ինչ կանգ առնելուց հետո, գնացքն սկսում ե դանդաղորեն բարձրանալ լեռները: Հովտում աղմկում ե լեռնային զետը: Նրա վրա կախվել են սեպածեւ ժայռերը: Լեռնալանջերը ծածկված են անտառներով: Պարզ ու վորոշ աչքի յեն




Նկ. 74.

լեռնում յեղմնիների սուր կատարները: Տեղտեղ պատահում են բացառները, վորոնք ծածկված են լեռների գաղաթներից թափած քարերով:

